



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

### **Usage guidelines**

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

### **About Google Book Search**

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

GRAD  
EREN  
986  
BUHR

B 1,236,638

ՄԻՋՔԱՆ Ի. ԲԱՊԱՆՅԱՆ

ՈՍԿԵՂԷՆ  
ԳՊՐՈՒԹԻՒՆ

ՔԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԳԼՍՐՆԹԱՅԻ  
Ա. ԵՒ Բ. ՏԱՐԻ

ՏՊԱՐՈՒԹՅԱՆ

Ա. ԵՒ Բ. ՏԻՐՆԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

1908



ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ  
ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ  
Վ. ԵՆ Ա. ՅԷՐ-ՆԵՐՍԻՍԵԱՆ  
*Սուրբան-Համամ*  
Կ. ՊՈԼԻՍ



187

ՄԻՋՐԱՆ Ի. ԹԱՊԱԳԵԱՆ

(ԲՆԱԳՐԵՎԱՆՈՒՑ)

Գ Ա Ն Ձ

ՈՍԿԵՆԵՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ

ԸՆԹԵՐՑՈՒԱԾՔ

ՔԱՂԵԱԼ

Ի ՉՈՐԻՑ ԱԻԵՏԱՐԱՆՉԱՑ

ՀԱՆԴԵՐՁ ԲԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԵԱՄԲՔ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴԱՍՐԵԹԱՅՔ


Ա. Ե. Բ. ՏԱՐԻ

162 p.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Յգազր. վ. Ե. Գ. ՅԷՐ.ՆԵՐՍԷՍԵԱՆ

1908



UNIVERSITY OF MICHIGAN LIBRARY



2180

(111)

586

111

معارف نظارت جلیله سنک فی ۱۳ اغستوس سنه ۳۳۳ تاریخلو  
و ۲۲۰ نومرولو رخصتنامه سیله طبع اولتمشدر



011  
111  
111



**Զ Օ Ն**

**Ի ՅԻՇԱՏԱԿ ԱՆՄԱՀ ՀՈԳԻՈՅՆ**

**ԱԶՆՈՒԱՇՈՒՔ**

**ՄԻՔԱՅԷԼ ԷՖԷՆՏԻ ՅԱԿՈԲԵԱՆԻ**

**ԴԳՐՈՑԱՍԷՐ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԷՐ**

**ՄԵԾԱՆՈՒՆ ԲԱՐԵՐԱՐԻՆ**





### Մեծապատիւ Միհրան Է. Քապագեան

Կարդացի Ձեր «Գանձը», Ջոր յանձնել հանած էիք իմ ուշադրութեանս: Դիւրմբունքի եւ հանելի ընթեր-  
յարան մը պիտի անուանեմ զայն: Քանի մը դիտողու-  
թիւններ նշանակեցի զաս բոլորի մը վրայ, ես ալ զա-  
նոնք պիտի յանձնեմ Ձեր ուշադրութեան:

5 Տեսներուն վերջին 2ր չունին այն առաս ծա-  
օթութիւնները, որոնց կը հանդիպի ընթերցողն՝ առաջին  
; տեսներուն մէջ: Պէտք է քիչ մը կհանկ ղնեչ վերջին 2  
տեսներուն ծանօթութեանց մէջ ալ: Եւ այն ասեմ զիբն՝  
բապեա «Գանձ» կ'անուանուի: Որչափ զուշակեցի  
եմ սոսով փարած էք հայերէնի եւ կը ստիպուիմ ըսել՝  
ախոր հայերէն գրելու կուզէք առաջնորդել մանկսին:  
աւ, շատ լաւ մտածեք էք:

Արդէն Աւետարանէն քաղած էք Ձեր ընթերցուած-  
երն՝ ո՛չ ապաքէն առաջին ապացոյցն է այս իմ ըսա-  
լիս: Սրկորդ, չիկայ Ձեր գրուածին մէջ հայերէն ան-  
ւանեալ հրեային, նիւաղային խղուրտաբանութիւններ,  
նման խառնակութիւններ, որոնք, հաւասացէք, պատ-  
առ եղած են, 'որ հայերէն գրաբարի նկատմամբ ցոյց  
ւ տուիւր այն եռանդը, զոր ամէն հայ պէտք էր ցոյց  
սլ: Ուզած են՝ որորոցէն նոր ելած՝ *սասնաւեսայ* մա-  
ւկը քալեցնել, երկաթի *մոյգեր*, պղնձեայ *կոշիկներ*,  
սպարեայ *սանդաղներ* անցընելով տղուն ոտքը: Բնական  
տղան քաւալոր տախտապարած է գետին, եւ զգացած  
աւերն արգիլած են զինքը՝ վերստին կանգնելու: Այս է  
բքնաբան հայկաբաններու յառաջ բերած արդիւնքը,  
նմարտի կտորներու մէջ՝ իրենց հայերէնագիտութեան  
նդէքը ի ցոյցս մարդկան՝ ցուցադրել ուզելով — *բեպե*

միտ « յօգուտ եւ ի բարգաւանանս Հայկազեան լեզուի »  
փողահարութիւններով պարզամիտներ որսալու ձգտմամբ :

Դուք , ազնիւ Պարոն , խոյս տուէր էք այն բա-  
ւիղներէն , դուք ձերովսանն , դիւրացնել ուզէր էք հա-  
յերէնը :

Ուրախ եմ որ լաւ եւ հարթ համբու վրայ ոտ-  
նակոյս՝ քաջաբար կը յառաջանաք , քայլ առ քայլ մեկ-  
նելով ուսումնասէնչին տեսած հետաքրքրական վայրերը՝  
կէտերը պիտի ըսէի :

Նորագոյն ու նորագիւտ կանոններն ալ շէն վրի-  
պած ձեր տեսութենէն : Պիտի փափաքէի տպուած տեսնել  
Ձեր երկը , աւելի կատարելագործեալ վիճակի մեջ , եւ  
այն ասէն պիտի մոռնաք , ապահով եմ , ձեր քրտնաք-  
տնէն զոր որ մանկսին նոր եռանդեամբ պիտի փարի  
Մետրովկ-Սահակեան լեզուին եւ դուք՝ պիտի զգաք թէ  
գործակից էք եղած այս մեծ մղման :

Յաջողութիւն եւ քաջալերութիւն կը մաղթեմ Ձեր  
անկեղծօրէն

Ձեր բարեկամն՝

Հ. ԳԱԲՐԻԷԼ Մ. Վ. ՄԷՆԷՎԻՇԵԱՆ

Բանկայրի



## Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն



Ազնուազարմ Մեկենասիս Գրիգոր ԼՖէնտի Յակոբեանի մեծանուն Հօր՝ հանգուցեալ Միքայէլ Էֆէնտի Յակոբեանի անմահ յիշատակին ձօնուած «գանձ»իս ի լոյս ընծայման առթիւ, թող ներուի ինձի երկու խօսք ընել մեր դասական լեզուի մասին: — Ստուգիւ, Դասական Հայերեկի նկատմամբ ցարդ ցոյց տրուած սա՛ռն անտարբերութիւնը լրագրական ասպարէզին մէջ ամէնէ՛ն նախանձայոյզն իսկ այնքան չի վշտացներ, որքան դպրոցական յարկերու տակ, ուրկէ պարզ Գրաբարի մը հասկացողութենէն զժ՛րկ սերունդներ դուրս կուգան, ի մեծ յուսահատութիւն տոհմային դաստիարակութեան, որուն Սահակ-Մեսրոպեան Ոգին Լքուած Գրաբարի գոգը կը նիրհէ: Մայրենի լեզուին այս անլուր ու անտեղի ուժացումը շարժառիթը եղաւ սոյն երկիս, որ աշխարհաբարտեաց ձգտումներ չունի բնաւին. այլ թէ՛ կ'անձկայ ուսման մը հանդիսանալ Սահակ-Մեսրոպեան Լեզուին, որ շլացուցիչ հարստութեան մը գանձերով ակադձուն՝ միանգամ ընդ միշտ կը սատարէ արդի Աշխարհաբարին: Այսուհանդերձ չպիտի կարենայինք ժխտել Աշխարհաբարի այն վճռական յաղթանակը, որուն ներքեւ համախմբուած են ժողովուրդն ու գրագէտը. իսկ Եկեղեցին հաւատարիմ պիտի մնայ իր նուիրական շնորհին: Սակայն միաժամանակ բաղձալի չի՛ թուիր արդեօք Նորը Հինին մէջ ցոլացած տեսնել ու այնպէս մշակել զայն: Ահա՛, այս իսկ է մեր տեսնանքն ու ջանքը: Յիրաւի, ժամանակը հակառակ իր ալեւոյթին կը սիրէ նորութիւնը և սակայն հրաշակերտ Մուսէնի մը առջին ալ կը պատկառի և եւ

աց մէջ կը գրկէ զանի: Կարդացէ՛ք Ս. Գիրքը, Գրաբարը, պիտի զգաք թէ դրախտի մը չափ ու կենսունակ է այն: — Յաւալի է նկատել որ, սրդի սերունդը Գրաբարը (langue écrite) ընդոտնելանցնի անտարրեր, առանց ուշաբերելով խելաու թէ՛ ոսկիի անհուն գանձ մըն է այդ կարծեցեալ ոտանքը կամ ըստ ոմանց՝ եպերելի ու ժպիրհ որակ-դէ՛ղը. — Ոչ խնչերանք է ան և ո՛չ դիակ, այլ նազգեստ լուռ Ոգի մը, մեր Ս. Թարգմանչաց ոսկի սերուն տակ կհնդանի և անմահ: Թէև սոյն տոգորողին նպատակէն դուրս է հրկարօրէն ջատագոսյս աւագ կարեւորութիւն ունեցող խնդիրը, սաս-յանուն մեր գրական բարձր լեզուին, սաչափ միայն ուղ չպիտի թուէր ակնարկել թէ՛ արդի բլլալու հա-աչխարհաբարի վերիվերոյ ծանօթութիւն մը ունե-անբաւական է, որովհետև առանց գրաբարի ճոխ սգանձին գաղափարներու ամէն երանգներն ալ ի կարինանք արտայայտել, այն ալ միայն սա՛ յայտ-կղբամբ թէ՛ աւելորդ է գրաբար եւ աշխարհաբար րու միջև տարբերութիւն ընդունիլ: Եւ թէ, ինչո՞ւ տտի հանգամանքներով ներկայացնենք մեր դասական ն, որուն քոյրերն են «Աշխարհաբար» անունով ճանչ-ծարեմտեան ու արեւելեան տիրող գաւառարարաու-որոնց երբեմնի հին Ոստանիկն է Ոսկեդարու լեզուն, անեղծ գոյութիւնը — եթէ սխալ չէ — Քրիստոնէու-ի կը պարտինք, և արդէն այս ճշմարտութեան բարարաու վկաններն են Գրաբար Աստուածաշունչ կեզէն շրջանի բոլոր գործերը և որ աւելի՛ն է Եզնիկ ացի, որուն վերագրելի է նաև Ոսկեբերանի ճա-ւն հրաշարուեստ թարգմանութիւնը: Բայց և այն-Ոսկեդարու բովանդակ հարստութիւնը միանուագ իսադրելու նպատակ չունէի, քանի որ ան արդէն

Բիւրականի կողերէն բխող բիւրաւոր ակեր ունի մին քան զմիւսն քաղցր: Մի՞թէ անոնք ալ հին չեն. բայց ո՞վ կրնայ, այդ եղեմարուխ ակերուն հանդէպ ժպրհիլ — «Դուք հին ըլլալով իմ պասուքս չէք կրնար անցընել.» Թերեւս անցեալին Ձայնը չեշտէ, «Տղաք, կշտապինդ խմեցէք Ոսկեղինիկ Լեզուի անապակ ու կենսունակ Նեկտարը, որ Հնութենէն կը բխի»:

Կարծեմ ողջամտութեան հակառակ չպիտի թուի դիտել թէ՛ անհրաժեշտ է հասկնալ Գրաբարը, որով կարելի պիտի ըլլայ միայն սնուցանել և ուճացնել Աշխարհաբարը, Գրաբարին գաւառաբարաւ մը եղած վաղեմի շրջանէն իվեր բազմադիմի յեղաշրջումներ կրելով՝ այժմանս գերակշիռ դիրքին տիրացած է: Սակայն Ոսկեղարու մատենագրական լեզուին պեղն ու շնորհը չունի այն, մինչդեռ Հինը անթաւամ ու բեղմնաւոր գեղեցկութեան մը մարմնացումն է, որովհետեւ ընաշխարհիկ գեղն ու դիւթանքը կը պարունակէ Հայ վիպասաններու «Երկնէր երկին»ի, «Նթէ դու յորս»ի, «Հեծաւ ի սեւան գեղեցիկ»ի, «Իբրեւ զսէգն»ի եւն. պատկերոտ լեզուն է այն, որ հայ նշանագրերու գիւտով (406) Ե Դարուն՝ գերազանցապէս թարգմանչական թագուհի գրականութիւն մը երկնելէն յետոյ, յառաջախաղաց դարերու ընթացքին մէջ կրօնական վսեմ բանաստեղծութիւն մըն ալ երկնեց: Այսպէս միշտ հիացած Գրաբարի մշտադալար պուրակին ի տես, պիտի նմանցնէի զայն այն աստուածախօս անկէզ Մորենիին, ուր մեր Ս. Թարգմանչաց ստուերները կը խօսին ոսկեզէն լեզուով մը, որուն իմովսանն ջանացի նախաշաւիղ մը գծել քերականական կանոններու մանկավարժական դասաւորութեամբ, ուր՝ մեծ դեր կը խաղայ բանասիրութիւնը:

Միաժամանակ անհարկի չպիտի թուէր անցողակի դիտել տալ թէ՛ եւրոպացի լեզուաբաններ տիրապէս

սու մնասիրեն մեր յնաւնած Գրաբարը, որուն մեծագանձ  
ամթերքը, հոլովումները, բայերը, ձայնական օրէնք-  
! և ի մի բան բովանդակ կազմութիւնը և որ աւելին  
ագումը համեմատական լեզուաբանութեան օրէնք-  
ով կը հետազօտեն իրենց լուս աշխատանոցներուն  
տաժանաքիրտն տքնութեամբ և ո՛չ թէ մեր յորել-  
հայկաբաններէն ոմանց պէս թղթախաղի սեղանին  
ջ իրենց ոսկի ժամերը վատնելով փառքի փափին  
որթեն: Մեր մէջ վա՛յ աշխատողին... Անցնի՛նք :  
աջաբանի մը անձուկ սա՛մանին մէջ չպիտի կրնայի  
տոբիլ եւրոպացի Հայագէտներու (որոնցմէ՛ ոմանք  
բար կը խօսին ու կը գրեն) մեր Դատական Լեզուին  
յ կատարած այն յարաճուն ուսումնասիրութիւնները,  
՛ք Անոր (Գրաբարին) փառքը դէպի անժանօթ հնու-  
ն սփիւռնները կը վերացնեն: Ա՛լ առանց երկարելու,  
նզի չպիտի թուի ըսել թէ՛ ամէն այրուրէն զիտոցող  
պէտք է գիտնայ, եւրոպացի հայագէտներու ինխա-  
անունը՝ Հիւլյճման, որուն «Հայերէն Քերականու-  
նը» կը բաւէ արդէն լիակատար գաղափար մը տալու՝  
բանասէրին և թէ հետեւողին: Այս գերմանացի բազ-  
մուտ Հայագէտն էր որ, համեմատական լեզուաբա-  
Յեան անժխտելի ապացոյցներով վճռեց թէ՛ Հայե-  
ւ ալ (Գրաբար) հնդեւրոպական լեզու մըն է, այսինքն  
ետացած վաղնջական լեզուի մը յեղաշրջումներէն  
1, ինչպէս են սլաւերէն, աղուաներէն, յունարէն,  
լաներէն, կեղսերէն, իսպերէն (Լատիններէն, և Ոսկո  
պրիական) լեզուները: ուստի գիտնական աշխարհի  
ա՛յսքան մեծ կարեւորութիւն ստացած Գրաբարը,  
՛ւ չուսանի Հայ մանկտին, գէ՛թ նախակրթարանի  
ձրագոյն Ա. և Բ. դասարաններուն մէջ, փոյթ չէ  
չկարենան խօսիլ ու գրել, հասկնա՛լն ալ զլանանք  
նց, բա՛ւ է որ հասկնան Աւետարանի լեզուն, որ

զիրենք պիտի մղէ Հին Կտակարանն ալ հասկնալու, եթէ քիչ մը աւելի կամք դնեն իրենց աշխատութեան մէջ : Ճիշտ, այսնպատակաւ է որ ջանացինք, Ոսկեդարու լեզուին էական կանոնները Չորս Աւետարանիչներէն քաղուած քառասուն ընթերցումներու մէջէն հետեւցնել աստիճանական քայլերով : Այս ցուցումներով Ընթերցարան Գերականութեանս մէջ ամփոփուած պիտի գտնեն Պատ. պաշտօնակիցներս Բառապիտոյնը և համաձայնութիւն արդի բանասիրական հայեակներու համաձայն, որով մէջն մի հատուած իր առանձնայատուկ կանոններով պատկերացուած է հոն, թերեւս այս միտումէն թելադրուած կը գրէ նշանաւոր Լեզուարանն Գերայագելի Հ. Գ. Մ. Վ. Մէնչվիչեան, «դիւրմբունելի և հաճելի ընթերցարան մը պիտի անուանէի զայն», ու յետոյ կ'աւելցնէ, թերեւս երկիս ճակատագրօրէն կցորդուած կնճռոտութիւններուն դիւրուսոյց լուծուիմը մատնանիշ ընելով — «Նորագոյն և նորագիւտ կանոններն ալ չեն վրիպած ձեր տեսութենէն :» — Բազմահմուտ Հայր, կարճատեսէս չեն վրիպած նաեւ՝ Ձեր կուռ նկատողութիւններն ալ : Սակայն այս տողերը գրողը առանց շլանալու ո՛ր և է տարփողանքէ, աւելի՛ ուշադրութիւն դարձուցած է քննիչներու նկատողութեանց լիուրի գործադրութեան : Այս ուղղութեամբ ջանացած եմ երկս ճոխացնել և արդի լեզուարանական յայտնութեանց համաձայն, մեր ընկալեալ տասներկու կանոնաւոր հոլովումները հինգի ամփոփեցի ձայնաւորներու կարգաւ, այսպէս. Ա. Ե. Ի. Ո. Ո. :

Ա-ով—Վահան, Վահանայ և ին .

Ե-ով—Եզր. եզ—եր .

Ի-ով—Իան. Բան—ի .

Ո-ով—Գետ—Գետ—ոյ .

Ու-ով—Չգետտ.—Չգետտ—ու .

Նմանապէս բայերն ալ զերծ չմնացին բանասիրական ակնարկներէ . իսկ ոճերը, որոնք Գասական Հայերէնի հարազատ ճոխութիւններն են, առաւելապէս Ս. Գրոց (Հին և Նոր Կտակարան), Ոսկերեբրանի և Եղնիկի մէջ յեղյեղութեամբ կցորդուած են իւրաքանչիւր հատուածի բառերուն քով : Աւելորդ չպիտի թուի յայտնել թէ՛ սոյն երկս, ինծի համար յաւէա բարեացակամ բարեկամի մը շնորհիւ, Հ. Գ. Մէնէվիլի քննութեան յանձնեցի նախապէս՝ դեռ բոլորովին անկախ Ուսում. Խորհրդոյ պաշտօնական նախագործումէն : Այսպէս բազմամտ վարդապետին գնահատութենէն խրախուսուած՝ Պատկ. Ուսում. Խորհրդոյ ներկայացուցի մանրախուզիւ քննուած Գործս, զոր նոյն Պատ. Խորհուրդը փութոյ պնդութեամբ յանձնեց — հոգեւոր Բժիշկը, պահ մը, չընդունելով, — մարմնաւոր (Հայ) Բժշկի մը, որ իր արուեստէն զատ կը սիրէ հետազօտել Գրարարը բանասիրական յայտնութեանց համաձայն : Սոյն անկողմնակալ ու ներհուն հայազէտն է Տօքթ. Տ. Քարամանեան էֆ. որ իր հմտութիւնը հայելացնող յստակ տեղեկագիրով երկիս իսկատիպ արժէքը մէկ բառի մէջ կը խտացնէր «Նպատակայարմար» անուանելով զայն : Բազմամտ քննիչներս միայն քանի մը կէտերու մէջ կը տարբերէին : Առաջինը հոլովմանց նորագոյն լեզուաբանական դասաւորութիւնը վճռական կը նկատէր, մինչդեռ վերջինը, առժամանակ մը, հեղինակաւոր Գարագաշեանի հոլովական դրութիւնը ընդունելով, այն ալ «ի սէր միօրինակութեան», դեռ սպասել կ'առաջարկէր լեզուաբանական վճռական յայտնութեանց : Ուստի, այս պարագան ի նկատ առնելով հոլովմանց հին և արդի ձեւերն ալ իրարու հետ համեմատել աւելի բնաւոր նկատուեցաւ : Այսպէս երկու կարողագոյն ԲՅԵՅԻՆԵՐԱ զիս շնորհապարտ կացուցին իրենց թանկագին ժամերը «Գանձ»իս զոհա-



բերելով . նոյնպէս զիս երախտապարտ պիտի կացուցանեն բարեացակամ պաշտօնակիցներս , վաւերացնել երախայրիքս ընդհանրացնելով նախակրթական բարձրագոյն Ա . և Բ . դասարաններու մէջ : Եթէ Սահակ-Մեսրոպեան հոյակապ լեզուին մղման սոխակի մը թեւաբախումը յաջողած եւ տալ , Հայ Լեզուի խոնարհ ուսուցչիս , չըսեմ , ուսանողիս աղօթքը պիտի ըլլայ այն , Ս . Թարգմանչաց գերեզմաններուն վրայ , ուր՝ գոգցե՛ս անոնց ոսկորները դալարելով կը վերածնին ու հնութեան մռայլ ծոցէն խորհրդաւոր օրհնութիւններ կը համապիտեն հայ մանկըտւոյն վրայ , տեսնելով անոնց Գրաբարի կամ իրենց (Թարգմանչաց) սուրբ լեզուին նկատմամբ ցոյց տուած նորանշան փարումն ու սէրը : Ըստ որում , հայ մանկտին դէպի Սահակ-Մեսրոպեան անդրանիկ Դպրոցը առաջնորդելու և միանգամայն անոնց գրգիռ մը ու խայծ մը տալու յոյսով՝ «Գանձ Ոսկեղէն դպրութեան» կը յորջորջեմ աննշան երկս որ Գրաբարի պարզ ճաշակ մը և կամ սոսկ լուծայ մըն է , հնութեան զանձարանէն կորզուած , որուն կանոնները , պէ՛տք է որ զլան ինքք փրնտորէ , և ո՛չ թէ կրաւորական էակ մը դառնայ հոն : Ա՛յս է արդի մանկավարժութեան կամքի կամ ուշադրութեան դաստիարակութիւն կոչած փրկարար մէթոտը :

\* \* \*

Նկատելի է որ , մեր մէջ ամէ՛ն վսեմ իտէալ , ամէ՛ն պաշարապինդ տաղանդ և կամ նոյն իսկ հանճար ամլութեան և կամ մոռացօնքի կը դատապարտուի , եթէ մեկննաս մը ձեռք չկարկառէ անոնց , ուրեմն , այս սողերը գրողը\* , ո՛րքան երախտապարտ ըլլալու է Յակոբ-

[\*] (ԵԱՆՕԹ . — Իրբե դասական գործ երախայրիք մըն է այս , որովհետեւ դեռ անտիպ բանաստեղծական , վիպական , պատմական , քննադատական գործեր մեկնաստի կը սպասեն զրադարանիս փոշիներուն տակ . . . )

եան ազնուազարժ Տան արժանաւոր Շտաւիզին՝ Ազն. Գրիգոր էֆ. Յակոբեանի, որ իր Բարեյիշատակ Հօր՝ հանգուցեալ Միքայէլ էֆ. Յակոբեանի ձօնուած «Գանձ»իս տպագրութեան ծախքերուն անօրինակ վեհանձնութեամբ յանձնառու ըլլալով՝ թէ՛ իր Մեծանուն Հօր յիշատակը յաւերժացուց և թէ՛ միանգամայն Աղգ. մանկաւոյն դատարարակութեան յայտնապէս սասար հանդիսացաւ և որ աւելին է, սոյն Գիրքէս Գալթայեան Որրանոցին ալ կարեւոր բաժին մը ընծայելու պայմանաւ, նո՛յն բարենպասակ հաստատութեան կնիքովն ալ պատուած եղաւ Գործս, որուն Հայ վարժարաններու մէջ ընդհանրացմամբ Հայ հէք որդուհիներն ալ միսթարած պիտի ըլլաք թէ՛ աղքատաւէր և ուսումնատենչ Բարերարս և թէ Դուք՝ սիրելի պաշտօնակիցներս. ուստի կը խնդրուի գործածել «Գանձ»ս, որուն մէջ որբուհիներուն արցունքները սրբող լուսնակեր ալ կան: Այս նկատողութիւններով, յաւէտ համբուրելի է այնպիսի հօր շիրմը, ուրկէ բարիքներ միայն կը թռչին ու պիտի թռչին ցորչափ իր սիրան ու հոգին իսկապէս կրող ուղի մը հսկէ իր վրայ: Ստուգիւ, Բարերար Միքայէլ էֆ. Յակոբեան իր որդւոց թողուց իր ժառանգութեանց պատուականագոյնը՝ որ է բարի անուան ժառանգութիւնը: Երիտասարդ և հօրամոյն մեկեցնասիս բարեգործ և յաւէտ ողբացեալ հօր շիրմին վրայ կը դնեմ իմ երախտագիտական յարածուն զգացմանց «Գանձ»ը՝ իբր երախտաւորեալի սիրտէն բխող արգագիր քուէր մը կամ որ նոյն է արտասուալից սափոր մը, որուն մէջ թաթխելով գրիչս կը դրեմ Ձեր բարեգործութեանց հեղինակ անզուգական հօր յաւէտ պաշտելի շիրմին վրայ. —

Փանֆ, դրբուասիֆ են վայել  
Անմահ անուանդ՝ Միքայէլ.

Ընկա՛լ զՁօնս զդոյզն ինչ վաստակ-  
Յաւերժացի յիշատակ  
Բարեաց—զՇիրմաւ Յակոբեան  
Յօղեն արտօս յաւիտեան՝  
Գրչի մեակն՝ ո՛րք, որբունի,  
Ընդ պայազա՛սըդ զովելի:  
Ո՛չ ի շիրիմի աստ Հանգչիս  
Այլ ի յերկինս, ի հոգիս .  
Նդու՛նկ զինեւ . . . թե ապախս  
Առնիցեմ զենորհս՝ զանյուր բախս :

ՇԵՂԻՆԱԿ



# ԲԱՐՁՐԱԳՈՅՆ - ԴԱՍԸՆԹԱՑՔ

Ա. Տ Ա Ր Ի

Ա

ԾՆՈՒՆԴ ՅԻՍՈՒՍԻ

Եւ ի ծնանէն Յիսուսի<sup>(1)</sup> ի թերղեհիւ<sup>(2)</sup> Հրէաստանի յաւուրս Հերովդի արփայի<sup>(3)</sup>, ահա մոգք յարեւելից եկին յԵրուսաղէմ, և ասեն, ո՛ր է որ ծնաւ արքայն Հրէից. զի տեսաք զաստղն նորա յարեւելս, և եկաք երկիրսպազանեղ նմա: Եւ իբրեւ յուսաւ Արքայն Հերովդէս խռովեցաւ, և ամենայն Երուսաղէմ ընդ նմա<sup>(4)</sup>: Եւ ժողովեալ զամենայն զքահանայապետս և զգլխորս ժողովրդեանն՝ հարցանէր ի նոցանէ թէ ո՛ր ծնանիցի Քրիստոսն: Եւ նոքա ասեն ցնա, ի Բեթղեհէմ Հրէաստանի. զի այսպէս գրեալ է ի ձեռն մարգարէիս<sup>(5)</sup>: Եւ դու, Բեթղեհէմ, երկիր Յուդայ, ոչ ինչ կրտսեր ես յիշխանս Յուդայ, ի քն եյցի յնձ իշխան, որ հովուեցի զժողովուրդ իմ գլխորայէլ: Յայնժամ Հերովդէս զաղտ<sup>(6)</sup> կոչեաց զմոզան և սուզեաց ի նոցանէ զժամանակ ասեղն երեւելոյ<sup>(7)</sup>, և արձակեալ զնոսա ի Բեթղեհէմ, ասէ, գնացէք, սուզեցիք վասն մանկանն<sup>(8)</sup>, և յորժամ գտանիցէք, ազդարարեցիք ինձ<sup>(9)</sup>, զի և ես եկեալ երկիր պագից նմա: Եւ նոքա իբրեւ լուան ի թագաւորէն, գնացին: Եւ ահա աստղն զոր տեսին յարեւելս՝ առաջնորդեաց նոցա, մինչեւ եկեալ եկաց ի վերայ<sup>(10)</sup> ուր էր մանուկն: Իբրեւ տեսին զաստղն, խնդացին յոյժ ուրախութիւն մեծ<sup>(11)</sup>: Եւ իբրեւ մտին ի տունն, տեսին զմանուկն հանդերձ Մարեմաւ մարմն իւրով, և անկեալ երկիր պա-

գանձին նմա . և բացեալ զգանձս իւրեանց մատուցին նմա պատարագս՝ ոսկի և կնդրուկ և զմուռս : Եւ հրաման առեալ ի սեսլեան (12) չղառնալ անդրէն առ Հերովդէս՝ ընդ այլ ճանապարհ (13) գնացին յաշխարհն իւրեանց :

Մատթ. Գլ. Բ 1-10

## Բ

### ՄԱՆՈՒԿՆ ՅԻՍՈՒՍ Ի ՏԱՃԱՐԻՆ(1)

Մանուկն (Յիսուս) աճէր և զօրանայր չի իմաստութեամբ(2) և շնորհք Աստուծոյ եին ի վերայ նորա (10)\* : Եւ երթային ծնողք նորա ամի ամի(11) յերուսաղէմ ի տօն զատկին : Եւ իբրև եղևն նորա ամբ երկոսասան(12), յելանել նոցա յերուսաղէմ ըստ սովորութեան(13) տօնին՝ մնաց Յիսուս մանուկն յերուսաղէմ, և ոչ գիտացին ծնողքն նորա . կարծեին զնմանե(14) թէ ընդ ուղեկիցսն(15) իցէ : Եկին իբրև առու միոյ ճանապարհ,(16) և խնդրեին զնա ընդ դրացիս և ընդ ծանօթս : Եւ իբրև ոչ գտին, դարձան անդրէն յերուսաղէմ խնդրել զնա : Եւ յես երից(17) առուց գտին զնա ի տաճարին, զի նստէր ընդ վարդապետսն, լսէր ի նոցանէ և հարցանէր զնոսա (18) : Չարմանային(19) անննեխան՝ որ լսէինն ի նմանէ, ընդ իմաստութիւնն և ընդ պատասխանիս նորա : Իբրև տեսին զնա, սքանչացան, և ասէ ցնա մայրն իւր . Ո՛րդեակ, զի՞նչ գործ գործեցեր դու ընդ մեզ . ահաւասիկ հայր քո և ես տառապէաք, խնդրէաք զքեզ : Եւ ասէ ցնոսա(20) : Զի՞ խնդրէք զիս . ո՛չ գիտէիք եթէ ի տան Հօր իմոյ պարտ էինձ յինել : Եւ նոքա ոչ իմացան զբանն՝ զոր խօսեցաւ ընդ նոսա : Եւ գնաց ի Նազարէթ, և էր նոցա հնազանդ :

Ղուկ. Գլ. Բ. 40-50

[\*] ԵՄԵՍՐ. — Տե՛ս միւս Յիւերու մասին ածականներու խնդրատու-  
Պեան (3 4,5,6,7,8,9.) կանոնները :

Գ

Մ Կ Բ Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Տ Ե Ա Ռ Ն

Յայնժամ գայ Յիսուս ի Գալիլէէ ի Յորդանան առ Յովհաննէս<sup>(1)</sup> մկրտել ի նմանէ : Եւ Յովհաննէս արգելոռ զնա և ասէ , ինձ պիտոյ է իքէն մկրտել , և դու առ ին գաս : Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա , բոյլ տուր այժմ , զի այսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւն , և ապա թոյլ ետ նմա : Եւ իբրև մկրտեցաւ Յիսուս , ել վաղվաղակի ի ջրոյ անկի<sup>(2)</sup> , և անա բացան ննա երկինք , և ետես զՀոգին Աստուծոյ զի իջանէր իբրև զաղաւնի<sup>(3)</sup> և գայր ի վերայ նորա : Եւ անա ձայն յերկնից որ ասէր , Իա է որդի իմ սիրելի , ընդ որ հաճեցայ<sup>(4)</sup> :  
Մատթ. Գլ. Գ. 13-17

Դ

ՅԻՄՈՒՍ ՎԱՐԻ ՅԱՆԱՊԱՏ ՓՈՐՁԻ, Ի ՍԱՏԱՆԱՅԷ

Յայնժամ վարեցաւ Յիսուս յանապատ ի հոգւոյն փորձել ի սատանայէ , և պահեալ զֆառասուն շիւ եւ զֆառասուն զիշեր՝ ապա ֆաղեաւ : Եւ մատուցեալ փորձիչն ասէ ցնա . Եթէ որդի ես Աստուծոյ , ասա՛ զի ֆարինֆա այսո՞րկի<sup>(2)</sup> հաց յինիցին : Նա պատասխանի ետ և ասէ . Գրեալ է թէ ոչ հացիւ միայն կեցցի մարդ , այլ ամենայն բանիւ որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ : Յայնժամ առեալ անէ զնա սատանայ ի քաղաքն սուրբ , և կացուցանէ զնա ի վերայ աշտարակի տաճարին , և ասէ ցնա . Եթէ որդի ես Աստուծոյ , ա՛րկ զքեզ աստի ի վայր , զի դրեալ է թէ հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո , և ի վերայ ձեռաց բարձցին զքեզ , զի մի՛ երբեք հարցես զֆարի<sup>(3)</sup> զտան քո : Ասէ ցնա զարձեալ Յիսուս . Գրեալ է թէ Ոչ փորձեսցես զՏէր

Աստուած քո : Դարձեալ առնու ածէ զնա սատանայ յի լեառն մի բարձր յոյժ<sup>(1)</sup>, և ցուցանէ նմա զամենայն թագաւորութիւնս աշխարհի և զփառս նոցա, և ասէ ցնա .  
Չայս ամենայն քեզ տաց, եթէ անկեալ երկիր պագանիցես ինձ : Յայնժամ ասէ ցնա Յիսուս . երթ յետս իմ, սատանայ, զի գրեալ է, Տեառն Աստուծոյ քում երկիրպագցես և զնա միայն պաշտեսցես : Ապա եթող զնա սատանայ, և ահա հրեշտակք մատեան և պաշտէին զնա :  
Մատթ. Գլ. Գ. 1-11

## Ե

### ՍԷՐՆ՝ Ի ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ

Լուարուք ապաքէն զի ասացաւ, Սիրեսցես զընկերքո, և ատեսցես զթշնամին քո : Այլ ես առեմ ձեզ . Սիրեցէք զթշնամիս ձեր, օրհնեցե՛ք զանիծիչս<sup>(1)</sup> ձեր, բարի բարաբէք ատելիաց ձերոց և աղօթս արարէք ի վերայ այնոցիկ որ լլկեմն զձեզ և հալածեն . Զի եղիջիք որդիք Հօր ձերոյ որ յերկինսն է . զի զարեգակն իւր ծագէ ի վերայ չարաց և բարեաց, և ածե անձրեւ <sup>(2)</sup> ի վերայ արդարոց և մեղաւորաց : Զի եթէ սիրիցէք զայնոսիկ որ սիրենն զձեզ՝ զի՛նչ վարձք իցեն . ո՛չ ապաքէն և մաքսաւորք զնոյն գործեն : Եւ եթէ տայցէք միայն ողջոյն բարեկամաց ձերոց<sup>(3)</sup> զի՛նչ սուելի առնէք . ո՛չ ապաքէն մաքսաւորք և մեղաւորք զնոյն գործեն : Արդ եղերուք դուք կասարեալի<sup>(4)</sup> որպէս և հայրն ձեր երկնաւոր կատարեալ է :

Մատթ. Գլ. Ե. 43-48

## Զ

### ՀԱՐՍԱՆԻՔ Ի ԿԱՆԱ

Հարսանիք էին ի Կանա<sup>(1)</sup>, և անդ էր Մայրն Յիսուսի . կոչեցաւ և Յիսուս և աշակերտքն նորա ի հարսանիսն :

Եւ ի պակասել զինւոյն՝ ասէ մայրն ցՅիսուս . Գինի ունին : Ասէ ցնա Յիսուս , Զի՞ կայ իմ եւ քո<sup>(2)</sup> , կին զ Ասէ մայր նորա ցսպասաւորսն : Որ զինչ ասիցէ : արասջիք : Անդ էին քակոյլի կննայք<sup>(3)</sup> վեց , տանէին մի նոցանէ մարս երկուս կամ երիս : Ասէ ցնոսա Յիսուս Լցէք զԹակոյկսդ ջրով եւ լցին զնոսա մինչև ի վեր ասէ ցնոսա Յիսուս . Արդ , առէք եւ բերէք տաճարա տիղ : Եւ նոքա բերին , եւ ճաշակեաց տաճարապետն ջուրն զինի եղեալ , եւ ոչ զիտէր ուստի իցէ . բայց պասաւորքն զիտէին որք արկին զջուրն : Խօսի ընդ սային տաճարապետն եւ ասէ . Ամենայն մարդ զա զինին յառաջագոյն պաշտէ , եւ յորժամ սրբենան՝ յս ժամ գլուխն . դու պանեցեր զանոյզ զինիդ մինչև ցայ

Յովհ. Գլ. Բ. 1-1

## Է

### Ն Ա Խ Ա Ն Ձ Տ Ա Ն Տ Ե Ա Ռ Ն

Յեւ այսորիկ<sup>(1)</sup> էջ ի Կափառնայում , ինքն եւ իւր եւ եղբարք իւր . եւ անդ յինէր ոչ բազում ինչ աւ (2) , Եւ էր մերձ Զատիկն Հրէից , եւ ել Յիսուս յերու դէմ : Եւ եզիս Յիսուս ի տաճարին զի վաճառէին զարջ եւ զոյխաւսս եւ զաղաւնիս . եւ զլումայափոխան՝ որ նստէ Եւ արար խարազան չուանեայ , եւ եհան զամենեոյ տաճարէն , զոչխարսն եւ զարջառս , եւ զպղինձս հասա ճառացն ցրուեաց եւ զսեղանսն կործանեաց , եւ որ զաւ նիսն վաճառէին<sup>(3)</sup> ասէ ցնոսա . Առեք զայդ աւսի , եւ առնէք զտուն Հօր իմոյ տուն վաճառի : Ապա յիշե աշակերտքն նորա՝ թէ զրեալ է , Նախանձ տան քո բիցե զիս :

Յովհ. Գլ. Բ. 13-1

Ը

ԶՈՒՐՆ ԿԵՆԴԱՆԻ

Գայ Յիսուս ի քաղաք մի Սամարացւոց որում անուն էր Սիւքար, մերձ ի զեօղն զորեա Յակովբ որդւոյ իւրում<sup>(1)</sup> Յովսեփայ, և անդ եր<sup>(2)</sup> աղբիւր մի Յակովբայ: Եւ Յիսուս վաստակեալ ի ճանապարհէն՝ նստէր ի վերայ աղբերն, և էր ժամ իբրև վեցերորդ: Գայ կին մի ի Սամարիայ հանել ջուր. ասէ ցնա Յիսուս. Տուր ինձ ընկել<sup>(3)</sup>: Զի աշակերտքն նորա երթեալ էին ի քաղաք անդր զի կերակուրս դնեսցին: Ասէ ցնա կինն Սամարացի, դու որ հրեայդ ես, զիա՞րդ յինէն ըմպել խնդրես ի կնոջէ Սամարացւոյ: Զի ոչ երբեք խառնակին Հրեայք ընդ Սամարացիս: Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ. Եթէ գիտէիր դու զզարգեան Աստուծոյ, և ժ՛վ է որ ասեղ ցքեզ՝ թէ տուր ինձ ըմպել, դու արդեօք խնդրէիր ի նմանէ, և տայր քեզ ջուր կենդանի: Ասէ ցնա կինն, Տէր, դու քանզի և դոյլ իսկ ոչ ունիս, և ջրհորս խոր է, իսկ արդ ուստի՞ ունիցիս զջուրն կենդանի: Միթէ դու մեծ ինչ ոք իցես քան զհայրն<sup>(4)</sup> մեր Յակովբ որ զայս ջրհոր ետ մեզ, և ին՛ն աստի արք՝ եւ որդիք և որս եւ խաշինք և որս: Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ. Ամենայն որ ընկե ի ցրոյ յայդմանե<sup>(5)</sup>, միւսանգամ ծարաւէ, բայց որ ըմպէ ի ջրոյն զոր ես տաց նմա, մի ծարաւեսցէ յաւիտեան:

Յովկ Գլ. Դ. Ծ. 5-14

Թ

ԲԺՇԿԵԼ Ի ՇԱԲԱԹՈՒ

Եւ եր անդ այր մի որոյ<sup>(1)</sup> երեսուն և ութ ամ էր ի հիւանդութեան<sup>(2)</sup> իւրում: Զնա իբրև ետես Յիսուս՝

զի անկեալ դնէր, և գիտաց թէ բազում ժամանակք ճշայնութեամբ, առկա ցնա. կամրոս ուր լինել: Պատասխանի ետ նմա հիւանդն. Տէր, ոչ զոք ունիմ, թէ յորժամ ջուրքն յուզիցին՝ արկցէ զլիս յաւազանն. և մինչ ես դանդաղիմ, այլ ոք քան զիս յառաջագոյն իջանէ: Ասէ ցնա Յիսուս. Արի՛ ա՛ն զմահիծս քո և գնա: Եւ ողջացաւ այրն և յարեաւ, առ զմահիծս իւր և շրջէր. և էր շարաթ յաւուրն յայնմիկ: Ասեն հրեայքն ցրժշկեալն. Շարաթ է, և ո՛չ արժան կր<sup>(3)</sup> առնուչ քեզ զմահիծս քո: Պատասխանի ետ նոցա եւ ասէ. Որ քժշկեացն<sup>(4)</sup> զիս, նա ասաց ցիս՝ ա՛ն զմահիծս քո և գնա: Հարցին ցնա և ասեն. Ո՛վ է այրն, որ ասաց ցքեզ, ա՛ն զմահիծս քո և շրջեաց: Եւ քժշկեալն ոչ գիտէր թէ ո՛վ իցէ, քանզի Յիսուս խոյս ետ վասն ամբոխին ի տեղւոյէ անտի:

Յովհ. Գլ. Ե. 5 - 14

## Ժ

### Ս Ե Ր Մ Ա Ն Ա Յ Ա Ն

Դարձեալ սկսաւ Յիսուս ուսուցանել առ ծովեզերքն <sup>(1)</sup> և խոնեցան զնովար<sup>(2)</sup> ժողովուրդք բազումք, մինչև ի նաւ մտանել<sup>(3)</sup> նմա եւ նստել ի ծովուն և ամենայն ժողովուրդն զծովեզերքն՝ զցամաքն ունեին: Եւ ուսուցանեհ զնոսա առակօք բազում ինչ եւ ասէր նոցա ի վարդապետութեան իւրում: Լսէ՛ք, ահաւաստիկ ել սերմանող <sup>(4)</sup> սերմանել և եղեն ի սերմանելն, ոմն անկաւ առ ճանապարհաւ, և եկն թռչուն և եկիր գնա: Եւ այլն անկաւ յապառաժի ուր ոչ գոյր հող բազում և վաղվաղակի բուսաւ՝ քանզի ոչ գոյր հիւք երկրին<sup>(5)</sup>, և յորժամ ծագեաց արև՝ ջեռաւ, և զի ոչ գոյին<sup>(6)</sup> արմատք ցամաքեցաւ, Եւ այլն անկաւ ի մեջ<sup>(7)</sup> փշոց. ելին փուշքն և հեղձուցին գնա, և պտուղ ոչ ետ: Եւ այլն անկաւ յերկիր բար-



ւոք, եւ ելեալ անեցեալ տայր պտուղ և բերէր ընդ միոյ  
երեսուն, և ընդ միոյ<sup>(8)</sup> վաթսուն, և ընդ միոյ հարիւր :  
Մարկ. Գլ. Գ. 1-9

### ԺԱ

#### ԹԷ ԶԷ ՊԱՐՏ ՀՈԳԱՆ, ՎԱՍՆ ՄԱՐՄՆՈՅ

Մի հոգայք վասն ոգւոյ (ոգիք = կեանք) ձերոց՝ թէ  
զի՛նչ ուտիցէք կամ զի՛նչ ըմպիցէք. և մի՛ վասն մարմնոյ  
ձերոց՝ թէ զի՛նչ ազանիցիք. ո՛չ ապաքէն ողի առաւել Է.  
(1) Բան զկերակուր, և մարմին՝ քան զհանդերձ : Հայեցաւ  
րոյք ի թռչունս երկնից, զի ոչ վարեն և ոչ հնձեն, և ոչ  
ժողովեն ի շտեմաբանս, և հայրն ձեր երկնաւոր կերակրէ  
զնոսա. ո՛չ ապաքէն դուք առաւել եք քան զնոսա. Իսկ  
արդ ո՞ ի ձէնջ առ հոգալ իւրում յաւելուլ կարիցէ ի հա-  
սակ իւր կանգուն մի : Եւ վասն հանդերձի զի՛ հոգայք  
հայեցարուք ի շուշանն վայրենի, ո՛րպէս անէ, ո՛չ ջա-  
նայ և ոչ նիւթէ, ասեմ ձեզ, զի ոչ Սողոմոն յամենայն-  
ի փառան իւրում զգեցաւ իբրև զմի ի նոցանէ : Իսկ եթէ  
զխոտն ի վայրի, որ այսօր է և վաղիւն ի հնոց արկանի,  
Աստուած այսպէս զգեցուցանէ, ո՛րչափ ևս առաւել զձեզ  
թերահաւատք : Մի՛ այտուհետեւ ՀՈԳԱՅՑԻՔ<sup>(2)</sup> և ասիցէք.  
Զի՛նչ կերիցուք կամ զի՛նչ արբոյք կամ զի՛նչ զգնցոյք-  
քանզի գիտէ Հայրն ձեր երկնաւոր թէ պիտոյ է ձեզ  
այդ ամենայն :

Մատթ. Գլ. Զ. 25-28

### ԺԲ

#### ԱՅՈՒԱԿԵՐՊՍ ԼԻՆԵՆ, ՅԻՍՈՒՍԻ

Եւ յիս վեց աւուր առնու ընդ իւր<sup>(1)</sup> Յիսուս զՊետ-  
րոս և զՅակոբոս և զՅովհաննէս, և հանէ զնոսա ի լեւոն  
մի բարձր առանձինն, եւ յայրակերպս նկն առաջի նոցա

(2) և ձորձք նորա եղեն փայլուն սպիտակ յոյժ, որպէս թափիչք երկրի ոչ կարեն այնպէս սպիտակացուցանել: Եւ երեւեցաւ նոցա Եզրիա Մովսիսիւ հանդերձ և խօսէին ընդ Յիսուսի: Պատասխանի ետ Պետրոս և ասէ ցՅիսուս, Ռաբբի, բարւոք է մեզ աստ շինել և արասցուի երիս տա-  
ղաւարս(3) մի՛ ֆեղ և մի՛ Մովսիսի, և մի՛ Եզրիայի: Քանզի ոչ դիտէր զի՛նչ խօսէր, զի զարնորեալ էին: Եւ եղև ամպ մի հովանի ի վերայ նոցա, ձայն եղև յամպոյ անձի և ասէ. Իս է որդի իմ սիրելի, դմա լուարուք: Եւ յան-  
կարծակի հայեցեալ այսր անդր, ոչ եւս զոք ուրեք տե-  
սին, քայց միայն Յիսուս ընդ խրեանս:

Մարկ. Գլ. Թ. 1-7

## ԺԳ

### ՎԱՍՆ ՈՐԴԻՈՅ ԱՅՐԻՈՅՆ

Եւ եղև ի վաղիւն երթայր ի քաղաք մի որում ա-  
նուն էր Նային. երթային ընդ նմա եւ աչակերտք նորա  
եւ ժողովուրդք բազում: Իրրեւ մերձ եղև ի դուռն քա-  
ղաքին, եւ ահա ելանէր մեռեալ մի որդի միամօր մօր  
իւրոյ, եւ նա էր այրի. եւ ժողովուրդք բազում քաղա-  
քին էր ընդ նմա: Իրրեւ ետես զնա Տէր, զքացաւ ի նա  
եւ ասէ, մի՛ լար: Եւ մատուցեալ(1) մերձեցաւ ի յագաղսն  
եւ որք բարձեալն տանէին՝ զտեղի առին. եւ ասէ, պա-  
տանի դու, քեզ ասեմ, Արի: Կանգնեցաւ եւ նստաւ  
մեռեալն եւ սկսաւ խօսել. եւ ետ զնա ցմայր իւր:

Գլուկ. Գլ. Է. 11-16

## ԺԴ

### ԵՐԿՈՒ ԼՈՒՄԱՅՔ ԿՆՈՋՆ ԱՅՐԻՈՅ

Կայր Յիսուս ընդդէմ զանձանակիւն(1), տեսանէր թէ  
զիս՛րդ ժողովուրդն արկանէր պղինձ ի զանձանակին, և

բազում մեծատունք արկին բազում ինչ : Եկն այրի մի  
և արկ երկուս շունայս(²), որ է նաքարակիտ մի : Եւ կո-  
չեցեալ առ ինքն(³) զաշակերտսն իւր , ասէ ցնոսա . Ամէն  
ասեմ ձեզ , զի այրին այն տառապեալ շատ արկ քան  
զամենեանն՝ որ արկին ի գանձանակն : Քանզի ամենե-  
քին յաւելորդաց իւրեանց(¹) արկին . այլ նա ի չխառրու-  
քենէ իւրմէ, զամենայն ինչ զոր ունէր , արկ գոյիւ չափ  
զկեանս իւր :

Մարկ. Գլ. ԺԲ. 41—44

## ԺԵ

### ՅԻՍՈՒՍ ՍԱՍՏԷ ԾՈՎՈՒՆ

Իբրև եմուտ ի նաւն , գնացին զկնի նորս(¹) աշա-  
կերտքն նորս : Եւ անա շարժումն մեծ եղև ի ծովուն  
մինչ(²) նախն ծածկել յալեաց անտի և ինքն ննջէր : Եւ մա-  
տուցեալ աշակերտքն յարուցին զնա և ասն . Տէր , փրկեա  
զմեզ զի կորնչիմք : Եւ նա ասէ ցնոսա . ընդէր վա-  
սասիրսք էք , սակաւահաւատք : Յայնժամ յարուցեալ  
սաստեաց հողմոյն և ծովուն , և եղև խաղաղութիւն մեծ :  
Եւ մարդիկն զարմացան և ասէին . Որպիսի՞ ոք իցէ սա ,  
զի և հողմք և ծովք հնազանդին սմա :

Մատ. Գլ. Ը. 23—27

## ԺԶ

### ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ ՅԵՐԿԻՆՍ ԸՆԴ ԴԱՐՁ ՄԻՈՅ ՄԵՂԱՆՈՐԻ

Ո՞վ ոք իցէ ի ձէնջ մարդ , որոյ իցէ հարիւր ոչխար ,  
և կորուսանիցէ զմի ի նոցանէ , ո՛չ քողոցու(¹) զիննսուն և  
զինն յանապատի , և երթիցէ զհետ կորուսելոյն՝ (²) մինչև  
գտանիցէ զնա : Եւ իբրև գտանէ , զնէ զնա ի վերայ ուսոց  
իւրոց խնդալով , և երթայ ի սուն , կոչէ զբարեկամս և  
զղբացիս և ասէ ցնոսա . Ուրախ եղերուք ընդ իս(³) , զի գտի

զոյխարս իմ զկորուսեալ : Ասեմ ձեզ , զի այսպէս է ուրախութիւն յերկինս վասն միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ , քան վասն իննուոն եւ ինն արդարոց<sup>(1)</sup> որոց չիցէ պիտոյ ապաշխարութիւն : Կամ ո՞վ լցէ կին , որոյ իցին դրամք տասն եւ եթէ կորուսանիցէ դրամ մի ո՞չ լուցանիցէ ճրագ եւ անիցէաւել ի տան եւ խնդրիցէ ստէպ մինչև գտանիցէ : Եւ իբրև գտանէ , կոչէ զբարեկամս եւ զդրացիս , եւ ասէ , Ուրախ է երևոյ ընդ իս , զի գտի զդրամն իմ զոր կորուսի : Այնպէս , ասեմ ձեզ , ուրախութիւն եղիցի առայլս իտեչսակաց <sup>(2)</sup> Աստուծոյ ի վերայ միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ :

Ղուկ. Գլ. ԺԵ. 4-10

Վ Ե Ր Ջ Ա . Տ Ա Ր Ի Ո Յ



# ԲԱՐՁՐԱԳՈՅՆ-ԴԱՍԸՆԹԱՑՔ

Բ . Տ Ա Ր Ի

ԺԷ

## ՈՐԴԻՆ ԱՆԱՌԱԿ

Առն<sup>(1)</sup> միտջ եին երկու որդիք: Ասէ կրտսերն ի նոցանէ ջհայրն, Հայր, տուր ինձ բաժին՝ որ անկանի յընչիցդ, և նա բաժանեաց նոցա զկեանսն: Եւ յեւ ոչ բազում աւուրց <sup>(2)</sup> ժողովեալ վամննայն կրսերոյն<sup>(3)</sup>, ւրաց յաշխարհ հեռի և անդ վատնեաց զինչս իւր, զի կեսայր անառակութեամբ: Իբրև սպառեաց զամենայն, և զեւ սուլ սաստիկ յաշխարհին յայնմիկ և սկսաւ ինքն չքաւորել: Գնացեալ յարեցաւ ի մի ոմն ի քաղաքացւոց աշխարհին այնորիկ և յղեաց զնա յազարակ իւր՝ արածել խոզս: Եւ եկեալ <sup>(4)</sup> ի միտս իւր՝ ասէ. Քանի վարձխանի իցնն ի քան հօր իմոյ հացաշից<sup>(5)</sup>, և ես աստ սովամահ<sup>(4)</sup> կորնչիմ: Յարուցեալ զնացից առ հայր իմ: Եւ յարուցեալ եկն առ հայր իւր: Մինչդեռ հեռադոյն էր, ետես զնա Հայրն և զթացաւ, յարեաւ և ընթացաւ ընդ առաջ, անկաւ զպարանոցաւն նորա և համբուրեաց զնա: Ասէ ցնա որդին. Հայր, մեղայ յերկինս և առաջի քո ոչ եւս եւս արժանի <sup>(6)</sup> կոչել որդի քո: Ասէ հայրն ցժառայս իւր, վաղվաղակի հանէք զպատմուճանն առաջին և ազուցիք նմա և առք զմատանին ի ձեռս նորա և կօշիկս յոտս նորա. և ածէք զեզն պարարակ, զենէք, կերիցուք և ուրախ լիցուք, զի այս որդի իմ մեռեալ էր և եկեաց, կորուսեալ էր և գտաւ:

## ԺԸ

### ՄԻ՛ ԲԱՐՁՐՆՏԻՐ ԼԻՆԵԼ Ի ԿՈՉՈՒՆՍ

Ասաց Յիսուս և առ կոչնականսն<sup>(1)</sup> առակ մի, հա-  
յեցեալ եթէ զիս'րդ բարձր տիւր յինեին, ասէ ցնոսա.  
յորժամ կոչիցէ ոք զքեզ ի հարսանիս կամ ի կոչունս,  
մի՛ բազմիցիս յառաջին բարձին. զուցէ սխառականագոյն  
եւս քան զքեզ իցէ կոչեցեալ ի նմանէ. և եկեալ որ զքեզն  
և զնա կոչեաց ասիցէ ցքեզ՝ տուր սմա տեղի, և ապա  
սկսանիցիս ամօթով զյեսին ունել: Այլ յորժամ կոչիցիս,  
երթիջիր քաղնեսցիր ի յեսին տնոց: զի յորժամ դայցէ  
որ կոչեացն զքեզ, ասիցէ ցքեզ, բարեկամ, ի վեր մա-  
սիր. յայնժամ եղիցին քեզ փառք<sup>(2)</sup> առաջի բարձակ-  
ցացն քոց: Զի ամենայն որ բարձրացուցանէ զանձն՝ խո-  
նարհեսցի, և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրացի:

Ղուկ. ԺԴ. Գլ. 7—11

## ԺԹ

### ՏԱԼ ԶԿԱՅՍՆԵՐՆ՝ ԿԱՅՍՆԵՐ

Առաքեն առ Յիսուս զոմանս ի փարիսեցոց անտի-  
ր և ի Հերովդիանոսաց, զի զնա որսասցեն բանիւ: Եւ նո-  
քա եկեալ հարցանէին զնա նենգութեամբ և ասէին,  
վա՛րդապետ, զիտեմք զի ճշմարիտ ես, և ոչ ինչ փոյթ  
ե՛սք զումեք, զի ոչ հայիս<sup>(1)</sup> յերեսս մարդկան. այլ ճշ-  
մարտութեամբ զճանապարհն Աստուծոյ ուսուցանես: Արդ-  
ասա մեզ, արժան է հարկս տալ կայսեր, եթէ ոչ. տացո՛ւք:  
Եւ Յիսուս զիտաց զկեղծաւորութիւն նոցա, ասէ ցնոսա,  
Զի՛ փորձէք զիս, կեղծաւորք. բերէք ինձ դանեկան մի  
զի տեսից. և նոքա բերին. և ասէ ցնոսա. Ո՛յր է պատ-  
կերս այս կամ զիր: Եւ նոքա ասին ցնա, կայսեր: Պա-

տասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա . Երթայք առք զԿայսերն՝ Կայսեր<sup>(2)</sup> և զԱսուծոյն՝ Ասուծոյ . և զարմացան ընդ նա :

Մտրկ. ԺԲ. Գլ. 13—17

Ի

### ՅԻՍՈՒՍ ԲԱԶՄԱՅՈՒՅԱՆ Է ԶՀԱՅՆ

Իբրև ընդ երեկս եղև, մատեան առ նա աշակերտքն և ասեն, Տեղիս անապատ է, և օրս՝ տարածանեալ . արձակեա զժողովուրդսդ զի երթիցեն<sup>(1)</sup> շուրջ ի շէնան, զնեցեցն իւրեանց կերակուրս : Եւ ասէ Յիսուս . Ոչինչ պիտոյ է դոցա երթալ, դուք ռուք դոցա ուտել : Եւ նոքա ասեն ցնա . Ոչինչ ունիմք աստ . բայց հինգ նկանակ և երկու ձկունս : Եւ ասէ ցնոսա Յիսուս, բերէք այսր զայն : Եւ հրամայեաց բազմեցուցանել զժողովուրդս ընդ ի վերայ խոտոյ, և առեալ զհինգ նկանակն և զերկուս ձկուսն հայեցաւ յերկինս, օրհնեաց և երնկ, և ետ ցաշակերտսն զնկանակսն և աշակերտքն՝ ժողովուրդոցն : Կերան ամենեքեան և յագեցան, և բարձին զնշխարս կոտորոցն<sup>(2)</sup> երկոտասան սակաւի լի : Եւ որք կերանն՝ էին արք իբրև հինգ հազար, թող զկանայս և զանակսի<sup>(3)</sup> :

Մտոր. ԺԴ. Գլ. 13—21

ԻԱ

### ՅԻՍՈՒՍ ԳՆԱՅ Ի ՎԵՐԱՅ ԾՈՎՈՒՆ

Եւ ստիպեաց Յիսուս վաղվազակի զաշակերտսն մտանել ի նաւ և յառաջել յայնկոյս<sup>(1)</sup>, մինչ ինքն զժողովուրդսն արձակիցէ : Եւ իբրև արձակեաց զժողովուրդսն, ել ի լեառն առանձինն կայ յաղօթս, և իբրև ընդ երեկս եղև, անդ էր միայն : Եւ նաւն մեկնեալ էր ի ցամաքէն բազում ասպարիսօք ծփեալ յալեացն, քանզի ընդդէմ էր հողմն : Եւ ի չորրորդում պահու գիշերոյն եկն առ

նոսա Յիսուս գնալով ի վերայ ծովուն: Իբրև տեսին զնա աշակերտքն զի գնայր ի վերայ ծովուն, խռովեցան, և ասին թէ՛ առ աչօք ինչ իցէ և առ անին(2) աղաղակեցին: Եւ վաղվաղակի խօսեցաւ ընդ նոսա Յիսուս և ասէ. Քաջալերեցարուք, ես եմ, մի երկնչիք: Պատասխանի ետ նմա Պետրոս և ասէ, Տէր, եթէ դու ես, հրամայեա ինձ գալ առ ինզ, ի վերայ ջրոցս: Եւ նա ասէ, Եկ: Եւ իջեալ ի նաւէն Պետրոս գնաց ի վերայ ջուրցն, և եկն առ Յիսուս, և տեսեալ զհոշիմ սաստիկ՝ երկեաւ, և իբրև սկսաւ ընկղմել, աղաղակեաց և ասէ, Տէր, փրկեա զիս: Եւ վաղվաղակի Յիսուս Ձգեաց զձեռն իւր, կաշաւ զնա և ասէ. Թերահաւատ, ընդէ՛ր երկմտեցեր: Եւ իբրև ելին ի նաւն, հանդարտեաց հողմն:

Մատթ. ԺԴ. Գլ. 22-23

## ԻԲ

### Յ Ի Ս Ո Ւ Ս Բ Ա Ձ Մ Ա Յ Ո Ւ Յ Ա Ն Է Չ Հ Ա Յ Ն

Կոչեցեալ առ Յէսուսի ինքն զաշակերտան ասէ. Գրաւ ի ժողովուրդդ, զի արդ երեք աւուրք են զի կան առ իս և ոչ ունին զինչ ուտիցեն. և արձակել զդոսս նօրիս յկամիս(1), դուցէ նքթիցեն զճանապարհայն(2): Ասին ցնա աշակերտքն, իսկ արդ, մեզ յանապատի աստ ուստի՞ իցէ այնչափ հաց մինչ յազեցուցանել զայսչափ ժողովուրդ: Եւ ասէ ցնոսա Յիսուս, Քանի՞ նկանակ ունիք. Եւ նոքա ասեն, եօթն, և սակաւ ձկունս: Եւ հրանայեաց Յիսուս ժողովրդեանն քայմել ի վերայ զեհնոյ(3): Եւ առեալ զեւթն նկանակն և զձկունս՝ դո՛հացաւ և երեկ, և ետ ցաշակերտան, և նոխա՝ ժողովրդեանն: Կերան ամենեքեան և յազեցան, և բարձին զնշխարս կոտորոցն եւթն զամբիւղ լի: Եւ որք կերանն՝ էին իբրեւ սո՛ր չորս հազարս(1), թող զիրանայս և զմանկտի:

Մատթ. ԺԵ. Գլ. 22-29

## ԻԳ

### ԵՐԿԴՐԱՄԵԱՆՆ

Իրրև եկին նոքա (Յիսուս և աշակերտքն նորա) քի փառնայում, մատեան՝ որք զերկդրամեանն պահանջին՝ առ Պետրոս, և ասեն. վարդապետն ձեր ո՞չ տայ երկդրամեանն: Եւ նա ասէ, Այո՛: Եւ իրրև եմուտ ի ուն, յառաջեայ քան զնա Յիսուս և ասէ: Զիարդ(¹) ուի քեզ, Սիմոն, թագաւորք ազգաց յումմէ՞ առնուն հարկս կամ զնամն, յորդւոց իւրեանց՝ թէ յատարաց: սէ զնա Յիսուս. Ապա ուրեմն ազատ են որդիքն: այց զի մի գայթակդեցուցուք զնոսա, երթ ի ծով և նկես կարք, և զառաջին ձուկնն՝ որ ելանիցէ, ա՛ռ և սց զսերան նորա և գտանիցես սատեր. և զայն առալ՝ տացես նոցա ընդ իմ եւ ընդ քո(²):

Մատթ. ԺԷ. ԳԼ. 23-26

## ԻԴ

### ՀԱՐԻԻՐԱՊԵՏՆ ԵՒ ԾԱՌԱՅ ԻԻՐ

Հարխրապետի ուրումն(¹) ծառայ չարաչար հիւանացեալ՝ մնտճ հր ի վախճանել, որ էր նմա պատուան: Իրրև լուաւ զՅիսուսէ, առաքեաց զձերսն ի Հրէից, դայչը վնա(²), զի եկեսցէ ապրեցուցէ զծառայն նորա: նոքա եկեալ առ Յիսուս՝ աղաչէին զնա ստէպ և սէին, թէ արժանի է՝ որում զչնորնս զայս առնես: Զի քէ զազդս մեր և զժողովրդանոցն նա շինեաց մեզ: Յիսուս գնաց ընդ նոսա: Իրրև ոչինչ կարի հեռի հո՞ քանկն(³), յղեաց առ նա հարիւրապետն բարեկամս և սէ, Տէ՛ր, մի ինչ աշխատ յիկիր(⁴), զի չեմ քաւական քէ ընդ յարկաւ(⁵) իմով մտանիցես, վասն որոյ եւ ոչ մեճն համարեցայ արժանի առ քեզ զարոյ(⁶). այլ աստ

բանիւ, և բժշկեսցի մանուկս իմ. Գանդի և ես այր մի  
եմ կարգեալ ընդ իշխանութեամբ. ունիմ ընդ ինե զի-  
նուորս և ասեմ սմա՝ ե՛րթ և երթայ, և այլում՝ թէ ե՛կ,  
և գայ, և ծառայի իմում՝ թէ արա՛ դայս, և առնէ՛:  
Եւ իբրև լուաւ դայս Յիսուս դարձացաւ, դարձաւ առ  
ժողովուրդն՝ որ երթային զինե նորս և ասէ. ամէն  
ասեմ ձեզ թէ և ոչ յԻսրայիլի այսչափ հաւատս գտի:  
Եւ դարձան անդրէն պատգամաւորքն ի տուն, և գտին  
զծառայն հիւանդ բժշկեալ:

Ղուկ. Է. Գլ. 3-10

## ԻԵ

### Պ Ա Տ Ա Ն Ի Ն Պ Ա Տ Ո Ի Ի Ր Ա Ն Ա Պ Ա Հ

Եւ ա՛նա մատուցեալ ոմն առ Յիսուս. Վարդապետ  
բարի, զի՛նչ բարի գործեցից՝ զի ընդունիցիմ զկեանսն  
յառիտենականս: Եւ նա ասէ ցնա. Զի՛ հարցանես զբարւոյ  
մի ե բարի. եթէ կամիս ի կեանսն յաւիտենականս մտա-  
նել, պահես զպատուիրանսն: Ասէ ցնա. Զո՛րս<sup>(1)</sup>. Ասէ  
ցնա Յիսուս. Զմի ապանաներն<sup>(2)</sup> և մի՛ շնար, և մի՛ գո-  
ղանար, և մի՛ սուս վկայեր, պատուես զհայր քո և զնայր,  
և սիրեցես զընկեր քո իբրև զանձն քո: Ասէ ցնա պա-  
տանին, Զայդ ամենայն պահեցի ի մանկութենէ իմմէ,  
արդ ի՛ն իսիս<sup>(3)</sup> պա՛րսս իցեմ: Ասէ ցնա Յիսուս. Եթէ  
կամիս կատարեալ լինել, երթ-վաճառեա՛ զինչս քո և  
տուր աղքատաց, և ունիցիս դանձս յերկինս, և եկ  
զկնի իմ: Իբրև լուաւ պատանին զբանն, գնաց արքա-  
մեալ, զի ունէր ստացուածս բազումս<sup>(4)</sup>:

Մատթ. ԺԹ. Գլ. 16-23

## ԻԶ

### Տ Ր Տ Ո Ւ Ն Զ Ք Մ Շ Ա Կ Ա Յ Ն

Այր ոմն տանուտ'ր ել ընդ առաւօտս ի վարձու ուննչ<sup>(1)</sup> մշակս յայգի իւր, և արկ<sup>(2)</sup> վարձս մշակացն առուրճ դահեկան, և առաքեաց զնոսս յայգի իւր: Եւ ելեալ զերրորդ<sup>(3)</sup> ժամու ետես այլս զի կային դատարկք թ հրապարակս, ասէ ցնոսս. Երթայք և դուք յայգի իմ, և որ ինչ արժան իցէ տաց ձեզ: Գնացին և նոքա: Եւ դարձեալ ել'ալ տանուտեառն զվեց ժամու և զինն ժամու արար այնպէս: Եւ զմեծասաներորդ ժամու ելեալ ետես այլս զի կային դատարկք, և ասէ ցնոսս. ընդէր կայք ասս զօրս ցեղեկ<sup>(4)</sup> դատարկք: Ասեն ցնա. Զի ոչ ոք կալաւ զմեզ ի վարձու: Ասէ ցնոսս սանուտէրն. Երթայք և դուք յայգին, և որ ինչ արժան է առնուցուք: Եւ իւրե երկոյ եղև, ասէ տէր այգւոյն ցգաւառապետ իւր. Կոչեա զմշական և տուր նոցա վարձս սկսեալ ի յետնոցն մինչև յառաջինսն: Իւրե եկին որ զմտասաներորդ ժամու, առին մեկ մի<sup>(5)</sup> գահեկան: Եկեալ առաջինքն համարէին թէ աւելի առնուցուն, և առին մէն մի դահեկան և նոքա: Իւրե առին սըրտընջէին զտանուտեառնէն և ասէին, դոքա յետինքդ մի ժամ գործեցին, և հասարակո՞րդս<sup>(6)</sup> արարեք զդոսս մեզ որ զձանրութիւն աւուրն բարձաք և զտօթ. Նա պատասխանի ես միում ի նոցանէ, և ասէ, ընկեր, չգրկեմ զքեզ. ո՞չ դահեկանի միոջ սակարկեր ընդ իս. առ զքոյդ և երթ չիցե՞ ինձ իշխանութիւն յիմսս առննչ<sup>(7)</sup> զինչ և կամիմ:

Մտօր. Խ. Գլ. 1 — 15

## ԻԷ

### Մ Շ Ա Կ Ք Ա Յ Գ Ի Ո Յ Ն

Այր մի էր տանուտէր, որ տնկեաց այգի և ցանգով պատեաց զնա և փորեաց ի նմա հնձան և շինեաց աշ-

տարակ . և ետ զնա ցմշակս . և գնաց ի տաքաշխարհս Իբրև մերձեցաւ ժամանակ պտղոյ , առաքեաց զծառայօ իւր առ մշակսն , առնուլ զպտուղս նորա : Եւ կալեալ մշակացն զծառայս նորա զոմն տանջեցին , զոմն սպանին , զոմն քարկոծեցին : Դարձեալ առաքեաց այլ ծառայս բազումս քան զառաջինսն , և արարին նոցա նոյնպէս : Յետոյ առաքեաց առ նոսա զորդի իւր և ասէ . Թերեւս ամաչեցան յորդոյ աստի իմնեի<sup>(1)</sup> : Իսկ մշակքն իբրև տեսին զորդին , ասեն ընդ միքս . Սա է ժառանգն , եկայք սպանցուք և զսա , զի մեր լինիցի ժառանգութիւնն : Եւ հանին զնա արտաքս քան զայգին և սպանին : Արդ յորժամ եկեսցէ տէր այգւոյն զի՛նչ արասցէ մշակացն այնոցիկ : Ասնն ցնա , չարսն չարաւ կորուսցէ (ո՞չ սպաքէն գայցէ և կորուսանիցէ զմշակսն զայնոսիկ) և տացէ զայգին այլոց մշակաց , որք տացին նմա զպտուղս ի ժամու իւրեանց :

Մատթ. ԻԱ. Գլ. 33-41

## ԻԸ

### Ս Ա Մ Ա Ր Ա Յ Ի Ն

Այր մի իջանէր յերուսաղեմէ յերիքով , և անկաւ ի ձեռս աւազակաց , որք մերկացին զնա և վերս ի վերայ եղին<sup>(1)</sup> , թողին կիտաման և գնացին . դեպ եղև քանակայի միոջ իջանել ընդ նոյն ճանապարհ և տեսեալ զնա՝ զանց արար<sup>(2)</sup> : Նոյնպէս և Ղեւտացի մի եկեալ ընդ նոյն ճէղի՝ ետես և զանց արար : Սա՛մարայի ոմն ճանապարհորդեալ՝ եկն ընդ նոյն առ նովաւ , և տեսեալ զնա գթացաւ : Եւ մատուցեալ պատեաց զվէրս նորա , արկեալ ի վերայ ձէթ և զինի , և եզեալ ի վերայ գրաստու իւրոյ՝ աս զնա ի պանդոկի<sup>(3)</sup> մի , և զարմանեաց զնա : Եւ ի վազիւ անդր իբրև ելանէր անտի , հանեալ

ես ցպանդոկապետն երկուս դահեկանս և ասէ . դարման  
Տար դմա , և զոր ինչ ծախեսցես ի դա՝ ի միւսանգամ  
գալստեան իմում հատուցից քեզ :

Ղուկ. Ժ. Գլ. 30—35

## ԻԹ

### Տ Ն Տ Ե Ս Ն Ա Ն Ի Բ Ա Ի Ո Ի Թ Ե Ա Ն

Այլ մի էր մեծատուն , որոյ էր տնտես . և եղև  
զնմանե ամբաստանութիւն , որպէս թէ վատնիցէ զինչս  
նորա : Կոչեաց և ասէ ցնա . Զինչ է այս՝ զոր շննկ  
զիեկ<sup>(1)</sup> , Տուր զհամար տնտեսութեան քո , զի ոչ եւս  
կարես լինել տնտես : Ասե ընդ միջս իւր տնտեսն , Զինչ  
գործեցից , զի տէր իմ հանէ զտնտեսութիւնս . գործել ոչ  
կարիմ , մուրանալ ամաչեմ . գիտեմ զինչ արարից , զի  
յորժամ ի բաց լինիցիմ ի տնտեսութենէս , ընկալցին զիս  
ի տունս իւրեանց : Եւ կոչեցեալ առ ինքն մի ըստ միո-  
ջե<sup>(2)</sup> ի պարտապանաց տեառն իւրոյ . ասէ ցառաջինն .  
Քանի՞ ինչ պարտիս տեառն իմում : Եւ նա ասէ . Հա-  
րիւր մար ձիթոյ<sup>(3)</sup> : Ասէ ցնա , Կա՛ (=կա՛ն) զգիր քո , և  
նիստ գրեա վազվաղակի յիսուն : Դարձեալ ասէ ցմիւսն .  
Դու քանի՞ ինչ պարտիս . Եւ ասէ . Հարիւր քոռ ցորե-  
նոյ : Եւ ասէ ցնա . կա՛ զգիր քո , և նիստ գրեա ութ-  
սուն : Եւ գովեաց տէրն շննեսն անիրաւորեան<sup>(4)</sup> , զի  
իմաստութեամբ արար . զի որդիք աշխարհիս այսորիկ  
իմաստնագոյնք են քան զորդիս լուսոյ յազգս իւրեանց :  
Եւ ես ձեզ ասեմ . արարէք ձեզ բարեկամս ի մասննայէ  
անիրաւութեան . զի յորժամ պակասիցէ այն , ընկալցին  
զձեզ ի յարկն յաւիտենականս :

Ղուկ. Ժ. Գլ. 1—9

L

Մ Ե Ծ Ա Տ Ո Ւ Ն Ն Խ Ս Տ Ա Ս Ի Ր Տ

Այր սմն էր մեծատուն, և ազանէր բեհեզս և ծի-  
բանիս, և ուրախ լինէր հանապաղ առատապէս: Եւ աղ-  
քատ ոմն սնուն Ղազարոս՝ անկեալ դեկո՛ւ առ Կրան<sup>(1)</sup>  
նորա վիրաւորեալ, և ցանկայր ընուլ զորովայն իւր ի  
փշրանացն՝ որ անկանէին ի սեղանոյ մեծատանն: Եղև  
մեռանել աղիստիկն<sup>(2)</sup> և տանել հրեշտակացն զնա ի գոգն  
Արրահամո: Մեռաւ և մեծատունն և թագեցաւ, և ի  
դժոխսն անբարձ զայս իւր մինչ ի տանջանսն էր, և տես  
զԱրրահամ ի հեռատանէ և զՂազարոս ի գոգ նորա  
հանգուցեալ: Աղաղակեաց և ասէ. Հայր Արրահամ,  
ողորմեաց ինձ<sup>(3)</sup> և առաքիա զՂազարոս, զի թացցէ  
զձագ մատին իւրոյ ի ջուր և զովացուսցէ զլեզու իմ.  
զի պապակիւմ ի տապոյ աստի: Եւ ասէ ցնա Արրահամ.  
Ո՛րդեակ յիշեա զի ընկալար անդէն զրարիս քո ի կեանսն  
քում, և Ղազարոս նոյնպէս զչարչարանս, արդ՝ սա աստ  
մխիթարի, և դու այդր պապակիս:

Ղուկ. ԺԶ. Գլ. 19—25

LU

Մ Ա Ռ Ա Յ Ն Ա Ն Ո Ղ Ո Ր Մ

Նմանեցաւ արքայութիւն երկնից առն քազաւորի<sup>(1)</sup>,  
որ կամեցաւ հաւնար առնուլ ի մէջ ծառայից իւրոց: Եւ  
իբրև սկսաւ առնուլ, մատուցաւ առ նա պարտապան մի  
բիւր քանքարոյ: Իբրև ոչ ունէր հատուցանել, հրամայ-  
եաց զնա վաճառել տէրն նորա, և զկին նորա և զոր-  
դիս, և զամենայն՝ որ զինչ և ունիցի, և հատուցանել:  
Եւ անկեալ ծառայն երկիր պագանէր նմա և ասէր,  
Երկայնամիտ յետ առ իս և զամենայն հատուցից քեզ:

Գթացեալ տէր ծառային այնորիկ՝ արձակեաց զնա և զփոխն եթող նմա : Եւ ելեալ ծառայն այն եգիտ զմի ի ծառայակցաց իւրոց որ պարտէր նմա հարիւր դահեկանն . և կալեալ զնա՝ խեղդէր և ասէր . Հատո ինձ զոր պարտիսդ : Արդ անկեալ ծառայակցին առ ոտս նորա , աղաչէր զնա և ասէր . Երկայնամիտ լիւր առ իս , և հատուցից քեզ : Եւ նա ոչ կամէր , այլ չոգաւ արկ զնա ի բանտ մինչև հատուցէ զպարտոսն : Իբրև տեսին ծառայակիցքն նորա որ ինչ եղեւն , տրտմեցան յոյժ , և եկեալ ցուցին տեառն իւրեանց զամենայն՝ որ ինչ եղեւն : Յայնժամ կոչեաց զնա տէրն իւր և ասէ : Մառայ չար , զամենայն զպարտոսն թողի քեզ , վասն զի աղաչեցեր . իսկ արդ ո՛չ էր պարտ և քեզ ողորմել ծառայակցին քում , որպէս և ես քեզ ողորմեցայ : Եւ բարկացեալ տէրն նորա՝ մատնեաց զնա դահճաց , մինչև հատուցէ զամենայն զպարտոսն :

Մատթ. ԺԸ. Գլ. 23-24

ԼԲ

Չ Ա Կ Ք Լ Ո Ս

Մտեալ (Յիսուսի) շրջիւր ընդ Երիփով<sup>(1)</sup> , և ահա այր մի անուն կոչեցեալ Զակքէոս , և նա էր մաքսապետ , և ինքն մեծատուն . և խնդրէր տեսանել եթէ ո՛վ իցէ Յիսուս . և ոչ կարէր ի բազմութենէն , զի կարճ էր հասակաւ : Եւ ընթացեալ յառաջս՝ ել ի ժանտաթղենին , զի տեսանիցէ զնա . քանզի ընդ այն իսկ անցանելոց էր : Իբրև եկն ի տեղին , հայեցաւ ի վեր Յիսուս և ասէ ցնա . Զակքէ , փութաւ էջ այտի , զի այսօր ի տան քում արժան է ինձ ազանել : Փութացաւ և էջ , և ընկալաւ զնա ուրախութեամբ : Իբրև տեսին ամենեքին , տրտմեցէին և ասէին , թէ առ առն մեղաւորի ետուտ լուծանել :

Եկն եկաց Զակքէոս և ասէ ցՏէր. Տէր ահա զկէս ընչից իմոց տաց աղքատաց, և եթէ զոք զրկեցի հատուցից չորեքկին: Եւ ասէ ցնա Յիսուս. Այսօր եղև փրկութիւն տանս այսմիկ:

Ղուկ. ԺԲ. Գլ. 1—3

## ԼԳ

### Դ Ա Տ Ա Ի Ո Ր Ն Ե Ի Ա Յ Ր Ի Ն

Դատաւոր մի էր ի քաղաքի ուրեմն<sup>(1)</sup>, յԱստուծոյ ոչ երկնչէր և ի մարդկանէ ոչ ամաչէր: Եւ տրի մի էր ի նմին քաղաքի, գայր առ նա և ասէր. Դուս արս ինձ յոտիսէ իմմէ: Եւ ոչ կամէր ի բազում ժամանակս: Յետ այնորիկ ասէ ի մէի իւրում. Թէ և յԱստուծոյ ոչ երկընչիմ, և ի մարդկանէ ոչ ամաչեմ. գոնէ վասն աշխատս առննչոյ զիս այրոյն՝ արարից նմա դատ, զի մի իսպառ եկեալ թախանձիցէ զիս: Եւ ասէ Տէր, լուարուք զի՞նչ դատաւորն անիրաւութեան ասէր. իսկ Աստուած ո՛չ առնիցէ վրձխնորոքին ծառայից իւրոց, որ աղաղակեն առ նա ի տուէ և ի գիշերի, և երկայնամիտ միայն լինիցի առ նոսա: Այո՛, ասեմ ձեզ. զի արասցէ վրձխնորոքին նոցա վաղվաղակի:

Ղուկ. ԺԳ. Գլ. 2—8

## ԼԴ

### Փ Ա Ր Ի Ս Ե Յ Ի Ն Ե Ի Մ Ա Ք Ս Ա Ի Ո Ր

Արք երկու ելին ի տաճարն կալ յաղօթս, մին փարիսեցի և միւսն մաքսաւոր: Փարիսեցին կայր մեկուսի, և զայս առանձինն աղօթս մատուցանէր. Աստուած իմ, գոհանում զիկն, զի ոչ եմ իբրև զայս<sup>(1)</sup> ի մարդկանէ, զյափշտակոյս և զանիրաւս և զչունս, կամ իբրև զայս մաքսաւոր: Այլ պահեմ երկիցս ի շարաթու, և տամ

սասանորդս յամենայն ստացուածոց իմոց : Եւ մաքսաւորն կայր մեկուսի , և ոչ կամէր և ոչ զաչսն ընդ երկինս անքստնաչ , այլ կոծէր զլուրծս իւր և ասէր . Աստուած , քաւեա զիս զմեղաւորս : Ասեմ ձեզ , էջ սա արդարացեալ ի տուն իւր քան զնա , զի ամենայն՝ որ բարձրացուցանէ զանձն իւր , խոնարհեցցի և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրացցի :

Ղուկ. ԺԲ. Գլ. 10—14

## ԼԵ

### Յ Ո Ւ Գ Ա

Մինչ էր (Յիսուս) ի Բեթանիա ի տան Սիմոնի բորտի բազմնալ , եկն կին մի՝ որ ունէր շիշ իւղոյ<sup>(1)</sup> և արդեան ազնուի մեծագնոյ և բեկեալ զշիշն՝ եհեղ ի վերայ զլիւթ նորա : Եւ աշակերտքն զչարէին և ասէին . Ընդէ՛ր է կորուստ իւղոյդ այդորիկ , և զայրանային նմա յոյժ<sup>(2)</sup> : Ասէ Յուզա Իսկարիովտացի . Ընդէ՛ր ոչ իւղդ այդ վանառեցաւ երեք հարիւր դննարի , և տուաւ աղքատոց : Զայս ասաց , ոչ զի զաղքատաց ինչ փոյխ էր նմա , այլ զի զոյ էր և զարկոյն ինքն ունէր<sup>(3)</sup> , և որ ինչ սնկանէրն՝ նա կրէր : Ասէ Յիսուս . Թոյլ տուք դմա , զաղքատս յամենայն ժամ ընդ ձեզ ունիք . զիս ոչ հանապազ շնոյ ձեզ ունիք :

Մատթ. ԻԶ. Թ—16 եւ Մարկ Ժ.Գ. 3—11 եւ Յովհ. Ժ.Բ. 1—8

## ԼԶ

### Մ Ե Ծ Ա Տ Ո Ւ Ն Ն Վ Ս Տ Ա Հ Յ Ի Ն Զ Ս Ն

Առն ուրումն ետուն անոյք տոնմականս . և խորհէր ի միտս իւր և ասէր , Զի՛ գործեցից , զի ոչ գոյ տեղէ՛ ուր ժողովեցից զարդիւնս իմ : Գիտեմ զի՛նչ արարից քակե-

ցից զշտեմարանս իմ, եւ եւս մեծամեծս<sup>(1)</sup> շինեցից. և անդր ժողովեցից զցորեանս և զամենայն բարութիւնս իմ: Եւ ասացից ցանձն իմ, Ա՛նձն, ունիս բազում բարութիւնս համբարեալ անաց<sup>(2)</sup> բազանաց. հանգիր, կեր, արբ և ուրախ լեր: Ասէ ցնա Աստուած. Անսիտ, յայսմ գիշերի զոգիդ ի ֆև ի բաց պահանջիցեմ. իսկ զոր պատրաստեցերն ո՛ւմ լինիցի: Նոյնպէս և որ զանձե անձին<sup>(3)</sup> և ոչ յԱստուած մեծանայցէ:

Ղուկ. ԺԹ. Գլ. 18-21

## ԼԷ

### Տ Ա Ս Ն Մ Ն Ա Ս Փ

Այր ոմն ազնուական զնաց յաշխարհ հեռի՝ առնուլ իւր Թագաւորութիւն և դառնալ: Եւ կոչեցեալ զժառանգ իւր, կտ նոցա տասն մնաս և ասէ ցնոսա. Յարգեցի՛ք<sup>(1)</sup> զայդ մինչև եկից: Եւ եղև զառնալ նմա առեալ զԹագաւորութիւնն. և կոչեալ զժառանգն՝ որոց տուեալ էր զարծաթն, զի գիտացէ թէ ո՛ր զինչ չահեցաւ: Եկն առաջինն և ասէ, Տէ՛ր մնասն քո տասն մնաս արար: Եւ ասէ ցնա, Ազնի՛ւ, ծառայ բարի, զի ի փոքուդ հաւատարիմ եղեր, յիջիւ իշխանութիւն ունել<sup>(2)</sup> ի վերայ տասն քաղաքի: Եկն երկրորդն և ասէ. մնասն քո արար հինգ մնաս: Ասէ և ցնա. Եւ դու լիջիր ի վերայ հինգ քաղաքաց: Եկն միւսն և ասէ, Տէ՛ր, ահա մնասն քո՝ զոր ունէի ծրարեալ ի վարչամակի. երկնչէի իքէն զի այր ստամբակ ես, բառնաս՝ զոր ոչ եղիր, և հնձեա՝ զոր ոչ սերմանեցեր: Եւ ասէ ցնա (Տէրն). ի բերանոյ քումմէ զատեցայց զքեզ, ծառայ անհաւատ. Գիտէիր թէ ես այր մի ստամբակ եմ, բառնամ՝ զոր ոչ եղի, հնձեմ՝ ուր ոչ սերմանեցի: Եւ ընդէ՛ր ոչ ետուր զարծաթն իմ ի սեղանաւորս<sup>(3)</sup>, և եկեալ ես տոկոսեօք պահանջէի:

Եւ ասէ ցապասաւորան, Առէք ի դմանէ զմնասն, և տա-  
րայք տուք այնմ՝ որ ունիցի զտասն մնասն: Եւ ասեն  
ցնա. Տէ՛ր, ունի տասն մնաս: Ասեմ ձեզ, եթէ ամենայ-  
նի որ ունիցի, տացի և յայնմանէ՝ որ ոչն ունիցի, և  
զոր ունիցին՝ բարձցի ի նմանէ:

Ղուկ. ԺԳ. Գլ. 13-26

## ԼԸ

### ԹՂԵՆԻՆ ԱՆՊՏՈՒՂ

Թղենի մի էր ուրումն<sup>(1)</sup> տնկեալ յայգւոջ իւրում, և  
եկն խնդրել պտուղ ի նմանէ, և ոչ եզիտ: Ասէ ցայ-  
գւգործն. Անա երեք ամք են յորմէնետէ դամ խնդրել  
պտուղ ի թղենուջդ և ոչ գտանեմ. արդ կտրեա զդա,  
ընդէ՛ր և զերկիրդ խախանէ: Նա պատասխանի ետ և ասէ.  
Տէ՛ր, թող զդա այս ամ եւս, մինչև շուրջ զդովաւ բրե-  
ցից և արկից աղբ. թերեւս արասցէ պտուղ ապա թէ  
ոչ՝ յամէ եւս հասցնա<sup>(2)</sup> զդա:

Ղուկ. ԺԳ. Գլ. 6-9

## ԼԹ

### ՀԱՆԴԵՐՁ ՀԱՐՍԱՆԵԱՅ

Նմանեցաւ արքայութիւն երկնից աւն թագաւորի,  
որ առաւ հարսանիս որդւոյ իւրում: Առաջաց զծառայոյ  
խոր՝ կոչել զհրաւիրեալսն ի հարսանիս<sup>(1)</sup>, և ոչ կամեցան  
գալ: Դարձեալ առաքեաց այլ ծառայս և ասէ, Ասա  
ցէք հրաւիրելոցն, ահաւասիկ զճաշ իմ պատրաստեցի,  
զուարակք իմ և պարարակք զենեալ են, և ամենայն  
ինչ պատրաստ է, եկայք ի հարսանիսս: Եւ նոքա՝ յու-  
լացեալ՝ գնացին ոմն յաւարակ իւր և ոմն՝ ի վճառ իւր.  
և այլք կալան զծառայո նորա, թշնամանեցին և սպա-

նին: Իսկ թագաւորն իբրև լուսւ, բարկացաւ և առաքեաց զգօրս իւր և սատակեաց զսպանոզսն զայնոսիկ, և զքաղաքն նոցա այրեաց: Յայնժամ ասէ զժառուսյս իւր, Հարսանիքս պատրաստ են, և հրաւիրեալքն չէին արժանի: Արդ երթայք յանցս ճանապարհաց, և զօրս միանգամ գտանիցէք՝ կոչեցէք ի հարսանիսս: Եւ երիալ ծառայքն ի ճանապարհս, ժողովեցին զամենեսոսն՝ զօր և գտին զչարս և զբարիս, և լցան հարսանիքն բողմականօք: Եւ մտեալ թագաւորն հայեղ զքաղնախանօսն<sup>(2)</sup>, ետես անդ այր մի՝ որ ոչ էր զգեցեալ հանդերձ հարսանեաց, և ասէ ցնա. Ընկի՛ր, զիա՛րդ մտի՛ր այսր, զի ոչ ունէիր հանդերձ հարսանեաց: Եւ նա պատգանձեցաւ: Յայնժամ ասէ թագաւորն ցոպասաւորսն. Կաղեցէք զգօրս զոտս և զձեռս և հանկի<sup>(3)</sup> զգօս ի խաւարն արտաքին, անդ եղիցի յաջ ևւ կրճեղ աստանկց<sup>(1)</sup>:

Մատթ. ԻՌ. ԳԼ. Զ-13

Խ

## ԿՈՒՍԱՆՔՆ ԻՄՁՍՏՈՒՆՔ ԵՒ ՅԻՄԱՐՔ

Նմանեցի արքայութիւն երկնից տասն կուսանաց, որոց առեալ զլապտերս իւրեանց ելին ընդ առաջ փեսային և հարսին: Հինգն ի նոցանէ յիմարք էին, և հինգն՝ ինաստունք: Յիմարքն առին զլապտերսն, և ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին. իսկ իմաստունքն առին և ձէթ ամանովք ընդ լապտերս իւրեանց: Եւ ի յամել փեսային, նիրհեցին ամենեքեան և ի քուն մտն<sup>(1)</sup>: Եւ ի մէջ գիշերի եղև բարբառ, Ահա փեսայ գայ, արի՛ք ընդ առաջ նորս: Յայնժամ յարեան ամենայն կուսանքն և կազմեցին զլապտերս իւրեանց: Ասեն յիմարքն ցիմաստունսն. Տուք մեզ յիւղոյդ ձերմէ, զի ահա չիջանին լապտերքս մեր: Պատասխանի ետուն իմաստունքն և ասին. Գուցի

ոչ իցի մեզ եւ ձեզ բառական(²) . այլ երթայք ի վաճառականս և գնեսցիք ձեզ : Իբրև նոքա գնացին գնել , եկն փեսայն և պատրաստքն մտին ընդ նմա ի հարսանիսն և փակեցաւ դուռնն : Յետոյ գան և այլ կուսանքն և ասեն . Տէ՛ր , Տէ՛ր , բա՛ց մեզ : Նա պատասխանի ետ և ասէ , Ամէն ասեմ ձեզ , թէ ոչ գիտեմ զձեզ :

Մատթ. ԻՍ. Գլ. Թ—Թ

## ԽԱ

### Ս Ք Ա Ն Ջ Ե Լ Ի Ք Ո Ր Ս Ո Յ Ջ Կ Ա Ն Յ Ն

Էին ի միասին Սիմոն Պետրոս և Թովմաս , անուանեալն Երկուորեակ , և Նաթանայէլ որ ի Կանայ Գալիլեացոց և որդիքն Ջերեղեայ , և այլք յաշակերտաց անտի երկու : Ասէ ցնոսա Սիմոն Պետրոս , Երթամ ձուկն որսալ : Ասեն ցնա . Գամք և մեք ընդ քեզ : Գնացին և մտին ի նաւ , և յայնմ գիշերի կալան և ոչինչ : Իբրև այգ եղեւ , կայր Յիսուս յեզր ծովուն , բայց ոչ ծաննան աշակերտքն թէ Յիսուս իցէ : Ասէ ցնոսա Յիսուս . Մանկուռք , միթէ ունի՞ք ինչ ուտելոյ : Պատասխանի ետուն և ասեն ցնա . Ոչ : Ասէ ցնոսա Յիսուս . Արկէք յաջակողմնաւին զուռկանդ և գտանիցէք : Արկին և ոչ կարէին ձգել ի բազմութենէ անտի ձկանցն : Ասէ աշակերտն այն զոր սիրէին Յիսուս՝ ցՊետրոս , Տէր է այն : Սիմոն Պետրոս իբրև լուաւ թէ Տէր է , արկաւ զիւրեւ զպիստիսն(¹) , քանզի մերկ էր , և ընկէց զինքն ի ծովն , և այլ աշակերտքն նաւաւն իսկ գային , քանզի չէին հեռի ի ցամաքէն , այլ իբրև երկերիւր կազնաւ , և քարչէին զգործին հանդերձ ձկամբքն : Իբրև ելին ի ցամաք , տեսանեն կրակետդ կայծականց ի ձուկն մի ի վերայ և հաց : Ասէ ցնոսա Յիսուս , Բերէք ինձ ի ձկանց այտի զոր դուքդ կալարուք այժմիկ : Եմուտ Սիմոն

Պետրոս և ձգէր զգործին ի ցամաք շի մեծամեծ ձկանքի,  
հարիւր յիսուն եւ երիւթ<sup>(?)</sup>, և այնչափ ինչ կայր և  
ոչ պատանեցաւ գործին: Ասէ ցնտա Յիսուս. Եկայք  
ճաշեցէք: Եւ ոչ ոք յաշակերտացն իշխէր հարցանել թէ  
Դու ո՞վ ես, զի գիտէին թէ Տէրն է: Գայ Յիսուս և  
առնու զհացն և տայ նոցա, նոյնպէս և զձուկնն:

Յովհ. ԻՍ. Դ. Զ—14

Վ Ե Ր Զ





## ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՔ

### Ա

#### Մ Ն Ո Ւ Ն Դ Յ Ի Ս Ո Ւ Ս Ի

1. Ի ծնանելն Յիսուսի. — Ի նախդիրը աներեւոյթին առջև դրուելով նախդրիւ տրական կը կազմէ և յորժամ, (= իբրեւ = ժամանակ) կը նշանակէ յաճախ, որ կը պարզուի այսպէս՝ Յորժամ ծնաւ Յիսուս: Ասով կը յայտնուի թէ՛ Յիսուսին փոխանակ ծնանել—ին յատկացուցիչ լուծելու, պէտք է տրական հոգով տէրբայի լուծել և միաժամանակ հասկնալ որ, աներեւոյթը տրական տէրբայի կ'առնու միշտ, թէ իսկ նախդիր կամ նախապրութիւն ունենայ:

2. Ի Բեքղեհեմ. — Ի նախդրիւ տրական հոլ. քն. խնդիր է ի Բեքղեհեմ = Բեթղեհեմի մէջ: Նորագոյն քերականներու սովորական դարձած ի նախդրիւ անորոշ հայցականն է, որ ըստ ձեւոյն ճիշտ է, բայց ոչ՝ ըստ իմաստին. իսկ ի նախդրիւ յոգնակի անորոշ հայցականը, անորոշ ժամանակ մը, միջոց մը կը նշանակէ (դոր. օր. յարեւելս = արեւելքի մէջ), ինչպէս վերև ցոյց արուեսցաւ ի նախդրիւ տրականն ալ նոյն նշանակութեամբ կը գործածուի, այսպէս հոս՝ յառուս Հերովդի արքայի = Հերովդէս թագաւորին օրերը. ուրեմն՝ երբ բայը շարժում ցոյց տայ, ի—ով հայցական խնդիր կ'առնու, իսկ երբ դադարում ի—ով տրական, զոր օր. եկին ի Բեքղեհեմ, ծնաւ ի Բեքղեհեմ ևլն:

3. Հերովդի արքայի. — Բացայայտիչ կը կոչուի

այն բառը՝ որ ուրիշ բառ մը աւելի՛ կ'որոշէ ու կը բացայայտէ : Զոր օր. Կ. Պօլիս՝ Մայրաքաղաքն Օսմանցւոց. Հերովրէս արֆայ : Հոս՝ արքայ բացայայտիչ է, վասն զի Հերոտդէսի ինչ ըլլալը որոշեց ու բացայայտեց, իսկ բացայայտուած անունը թացայայտեալ կը կոչուի, այսպէս Հերովդէս յատուկ անունը բացայայտեալ է : Բացայայտիչը բացայայտեալին հետ թուով և հոլովով կը համաձայնի : Հերովրի սեռական ըլլալով իր բացայայտիչն ալ սեռական եղած է :

Բացայայտիչը, բացայայտեալին զ և ի նախդիրներէն զատ, ուրիշ նախդիր և նախադրութիւն — եթէ բացայայտեալը ունի — չընդունիր հրբեք. զոր. օր. Զմայրն ամենայն զիտութեանց՝ զիմաստասիրութիւն. զաղ թիւրն ամենայն զիտութեանց՝ զքան. ինդրեալ Զուր յիմեն, ի կնոջի Սամարացոյ : Բացայայտիչ ևն զքան՝ զաղբիւր—ին և ի կնոջի՝ յինէն—ին :

Յատուկ անունն է որ, բացայայտեալ է և կրնայ երբեմն չհոլովուիլ, զոր օր. Ել հրաման յՕգոստոս կայսերէ, իսկ եթէ յատուկ անունը իբրև բացայայտիչ յետադաս ըլլայ, այն ատեն թուով և հոլովով կը համաձայնի : Առ ղշխոյիս Կղեոպատրա : Վասն մարգարէին դարձի : Եւ գիտուած է որ, երբ յատուկ անունը, քաղաքի, գիւղի, լեռան անուն մըն է՝ այն ատեն միայն բացայայտիչն է որ կը հոլովուի. իսկ նախադաս բացայայտեալը իբրև բազմավանկ ածական մը անփոփոխ կը մնայ : Երուսաղէմ ֆաղափի, ի Սիոն լեռնի. զԵփրատ գետով, հատուած գնացեալ Վարդգէս մանուկն ի Տուհաց գաւառէն՝ եկեալ նստեալ զՇրեշ թղով, զԱրեւիտ ֆաղափա, զՔաղաս գետով : Բայց երբ յետադաս ըլլայ յատուկ անուն բացայայտեալը, այն ատեն ալ յատկացուցիչի ձևով կը դրուի. Զոր. օր. Քաղափին Երուսաղէմի, ի լեռնի Սիոնի. զգետովն Երասիայ :

Նոյնպէս ամսոյ անունները առաջ դրուելով անփոփոխ կը մնան, զոր. օր. Յուլիս արևոյ. իսկ երբ յետագաս ըլլայ, իբրև յատկացուցիչ սեռական հոլով կը դրուի, զոր. օր. յամսեանն Դեկտեմբերի, յամսեանն Յուլիաց (==յուլիսի): Թէև ընտիր Հայերէնի մէջ Հայոց ամիսները ըլլան նախագաս կամ յետագաս չեն հոլովուիր, յամսեանն Նաւասարդ, (Հոռի, Սահմի, Տրէ, Քաղոց, Արաց, Մեհեկան, Արեգ, Ահեկան, Մարերի, Մարգաց, Հրոտից Աւելիաց):

Բացայայտիչին կ'ըսուի նաև կրկնակ անուն, որովհետև բացայայտեալին ուրիշ բառով մը կրկնումն է ան. զոր օր. Հերովիկս, որուն միւս անունն է արփայ. Յատկացուցիչ, ածական, ստորագելի և բացայայտիչ, հանգիտութեան մէկէ աւելի ազերաներ ցոյց կուտան արամարսնական տեսակէտով:

4. Ընդ նմա. — Ընդ՝ սովորաբար եզակիի մէջ տրական, իսկ յոգնակիի մէջ հայցական կ'առնու և հետք կը նշանակէ, այսպէս՝ ընդ նմա==անոր հետը, ընդ ինգ ==քեզի հետ, ==ընդ ձեզ ձեզի հետ: Յոգնակի անորոշ հայցականով ալ հետ կը նշանակէ, — ընդ նոսա == անոնց հետ. ընդ մախաւորս եւ ընդ դպիրս մաքսաւորներուն և դպիրներուն հետ:

5. Ի ձեռն մարգարեի. — Մարգարեի ն ձեռամբ. ի նախգրիւ տրականը(==անորոշ հայցական) գործիականի ալ նշանակութիւնը կուտայ, ի ձայն մեծ == ձայնիւ մեծաւ:

Յուղայ. — Բոլոր աս վերջաւորող անուններու սեռականն ու տրականը ընտիր Հայերէնի մէջ յ մը աւելցնելով կը կազմուի, Յուգա, Սափիրա, Եզիա, Ասիա, Զաքարիա. Յուգա==Յուղայ, Աննա==Աննայ. փոխանակ ըսելու Յուգայի, Աննայի ևն. դիտելի է որ, Արա եզակի ուղղականի մէջ երբեք յ ով չի գրուիր, ինչպէս սովոր

են ընել ոմանք. յ—ով կը գրուի երբ սեռական կամ արական է Արայ :

6. Գաղս կոչեաց . — Երբ ածական մը բային վրայ գտնուելով անոր մէկ հանգամանքը ցոյց տայ, մակրայ է. Գաղտ = գաղտնաբար: Ստուգեաց . . . զժամանակ ասեղն երեւելոյ. պէտք է հասկնալ՝ զժամանակ երեւելոյ ասեղ—աստղին երեւելու ժամանակը, իբր յասկացուցիչ յատկացեալ, աւելի պարզելով կը նշանակէ = թէ երբ երեւցաւ աստղը, ինչպէս է Գերման և Ռուս թարգմանութեանց մէջ :

Աներեւոյթ, ներկայ և անցեալ շնորհներութիւնը կը հոլովուին պարզ գոյականի պէս. միայն թէ՛ աներեւոյթը յոգնակի չի հոլովուիր. իսկ ներկայ և անցեալ ընդունելութիւնները թէ՛ եզակի և թէ՛ յոգնակի կը հոլովուին. Աներեւոյթ և անցեալ շնորհներութիւն Գեա—ին պէս կը հոլովուին :



## ԿԱՆՈՆԱԻՈՐ ՀՈՒՈՎՈՒՄՆԵՐՈՒ ՆՈՐ ԴԱՍԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ

Չստ արդի լեզուաբանութեան երբեմնի աստերկու  
կանոնաւոր հոլովումները հիցցի վերածուած:

Գրարար քերականութեան աստերկու կանոնաւոր  
հոլովումները (1. Բան, բանի, բանիւ: 2. Քաղաք,  
քաղաքի, քաղաքաւ: 3. Զգեստ, զգեստու, Գ. զգես-  
տու: 4. Գետ, գետոյ, գետով: 5. Միհրան, Միհրա-  
նայ, Միհրանաւ: 6. Հոփփսիմէ, Հոփփսիմեայ, Հոփփ-  
սիմեաւ: 7. Եկեղեցի, եկեղեցոյ, եկեղեցոջ, եկեղեց-  
եաւ: 8. Փոքր, փոքու, փոքումբ: 9. Հիմն, հիման,  
հիմամբ: 10. Գառն, գառին, գառամբ: 11. Նեղու-  
թիւն, նեղութեան, նեղութեամբ: 12. Ոսկր, ոսկեր,  
ոսկերբ): ա, ե, ի, ո, ու, ձայնաւորներուն վրայ դա-  
սաւորուած են շեշտի տեղափոխման անժխտելի օրէնքով.  
Ըստ որում Շեշտն է որ հոլովման փոփոխութիւններ առաջ  
կը բերէ:

Ա. հոլովումն, որուն հոլովանիչն է ա ձայնաւորը.  
ա հոլովանիչն կրող առաջին հոլովման սեռականն  
ու տրականը ըստ տեղւոյն, երբեմն այ, եայ, ան, եան.  
օրինակ. Մեսրոպ, Մեսրոպայ, Հոփփսիմէ, Հոփփսիմեայ,  
Զիւն, ձեան, Հիմն, հիման, բայց ասոնք հոլովման տար-  
բեր շարքի մը չեն վերաբերիր, ինչպէս մեկը՝ չորսի բաժ-  
նած են հին և նոր քերականները իրարու հետեւելով  
քայլ առ քայլ, բացի Գրարար Լեզուի քերականութեան  
վիեննական հեղինակ՝ Թումաձեանէ, որ իր երկհատոր

քերականութեան մէջ կը կիրարկէ լեզուաբանական օրէնքները :

Մենք՝ մեր բնատոնմիկ լեզուին ուսումը դիւրացնելու յուսով, հոս կը պատկերացնենք հնգեակ կանոնաւոր Հոլովումներն՝ այսպէս :

Առաջին հոլովման հոլովանիչն է ա .

Ո . Սահակ, Հ . զՍահակ, Ս . Սահակայ, Տ . Սահակայ, Գ . Սահակաւ . Ո . Մեսրոպ, Հ . զՄեսրոպ, Ս . Մեսրոպայ, Տ . Մեսրոպայ, Գ . Մեսրոպաւ .

Այսպէս կը հոլովուին հետեւեալ յատուկ անունները :

Ադամ, Ադին, Ակն, Անահիտ, Արամ, Արչակ, Անտիոք, Եկեղեաց, Սաւուղ, Հոովմ, (=Աղեն, =Ի) Վահան, Վարդան :

Ե, ի, վերջաւորութիւնները ե-ի կը փոխուին հոլովման մէջ : Հետեւեալ անուններուն մէջ եայ դարձեալ նոյն անհոլովանիչն է .

Եղիշէ, Եղիշեայ . Հռիփսիմէ, Հռիփսիմեայ . Գայիա-նէ, Գայիանեայ . Եսայի, Եսայեայ . Մանէ, Մանեայ . Արսինոյէ, Արսինոյեայ . Տիգրանուհի, Տիգրանուհեայ, (ւոյ) . Սեմէի, Սեմեայ :

Յունարէնէ առ մեզ ընդհանրացած իս, ոս վերջաւորող անուններուն նոյն մասնիկները յապաւելով կը հոլովուին . — Արտեմիս, Արտեմեայ . Կիպրոս, Կիպրեայ . Հերակլէս, Հերակլեայ . Յուլիոս, Յուլեայ . Օգոստոս, Օգոստեայ . Լուկրեափոս, Լուկրեատեայ . կրնան նաև ի ով սեռական ըլլալ, ըստ երրորդ հոլովման . — Բան, բանի, բանիւ :

Անրմն բառին պէս ըն վերջաւորող բառերն ալ առաջին հոլովման ա հոլովակերտ ձայնաւորն ունին . բայց հարկ է դիտել որ, ն տառէն առաջ հանդիպող ր արմատական գիրը ռ ի կը փոխուի և բացի այս պարագայէն — հոլովման ընթացքին մէջ՝ նոյն արմատական ր տառը անփոփոխ կը մնայ . օր . Ամառն — Ամարան . Ձմեռն — Ձմերան . Յգ . Ամարունք . Ձմերունք (նաև՝ փորձանք) :

Այս ընգհանուր կանոնէն չե՛ն զարտուղիւր, նո՛յնիսկ անկա-  
նոն հոլովումները. օր. Այր — Առն. Տէր—Տեառն. նաև՝  
Դուռն—դրան. Լեառն—լերին—ի լեռնէ. Յգ. Լերինք—  
լերանց, Այսպէս է նաև բայերուն համար. օր. Դառնամ—  
դարձի. Բառնամ—բարձի. Յառնեմ—արի. Առնեմ—արար  
Էլն. իսկ այն բառերուն մէջ, ուր՝ ո տառը անփոփոխ  
կը մնայ, ո՛չ թէ բացառութիւն մըն է այն, այլ թէ ո  
արմատական է. օր. Լիսեռն—լիսուան. Ոլլուն—ոլլուան.  
Բուռն—բռին կամ բռան. բեռն—բեռին. Ձեռն—ձեռին.  
Գառն — գառին Էլն. :

Եզ.

Ո. Սերմ-ն  
Հ. զՍերմն  
Ս. Սերմ-ան  
Տ. Սերմ-ան  
Բ. իՍերմ-անե  
Գ. Սերմ-ամբ

Յոգ.

Սերմ-անք  
զՍերմ-անս  
Սերմ-անց  
Սերմ-անց  
իՍերմ-անց  
Սերմ-ամբք

Այսպէս կը հոլովուին հետեւեալ բառերը, որոնց անկ  
վերջաւորող յոգնակիին շեղումն ալ կը նշանակենք հոս.  
Հիմն, յգ. հիմունք. Արեգակն, արեգակունք. (սո՛ստ-  
դեր). Եղունգն, եղնգան, եղնգունք. Սոստումն, խոստ-  
մունք. Թիթեղն, թիթղան, թիթղունք. Կողմն, կող-  
մունք, և կողմանք. Ասեղն, ասղան, ասղունք. Պոյտն,  
պուտան, պուտունք. Ծաղկոտն. ծաղկոտան. Դիակն,  
դիական, դիակունք, Կարուն, գարնան, գարունք.  
Ամառն, ամարան, ամարունք. Աշուն, աշնան, աշունք.  
Ձմեռն, ձմերան, ձմերունք. Լիսեւն, լիսուան, լիսուունք.  
— Ոլլոռն, ոլլուունք. Որումն, որումունք. Ունկն, ուն-  
կան, ունկունք. Եղեռն, եղերան, եղերունք. Աղեղն,  
աղեղան, աղեղունք. Որդն, որդան, որդունք. Թիկն,  
թիկան, թիկունք. Եղէգն, եղեգան, եղեգունք. Ձե-

զուն, ձեղուն, ձեղունք. Պաշտումն, պաշտման, պաշտմունք, (պաշտօն, պաշտաման, պաշտամունք). Սկիզբն, սկզբան, սկզբունք. Քիրտն, քրտան, քրտունք. Շուրթն, շրթան, շրթունք. Մտտիմն, (Յրի բաղ)մրտման, մրտմունք. Եղեամն, եղեման, եղեմունք, Ուլն, ուլան, ուլունք. Ակն, ական, ակունք. (ակն, ականխ=գոհարներ). Գեղարդն, գեղարդան կամ գեղարդեան, գեղարդունք. Նուռն, նուան, նուունք. Ուսումն, ուսման, ուսմունք, ևլն . .

Բացառաբար կան բառեր ալ, որոնք առանց ըն վերջաւորելու ի՛յ, եա՛յ և պարզ և վերջաւորութիւն ունենալով, նոյն կերպով կը հոլովուին. — Մաղիկ, ծաղկան, ծաղկունք. Փոքրիկ, փոքրկան, փոքրկունք. Յուսիկ, Յուսկան. Աստղիկ, Աստղկան. Աղջիկ, աղջկան, աղջկունք. Մարդիկ, մարդկան. Կորեակ, կորեկան. Անուն, անուան, անուանք. Շուն, շան, շունք. Մահ, մահուան կամ մահու, մահունք. Տուն, տան, տունք :

Կան ըն յանգող բառեր ալ, որոնք եզակիին մէջ ին, իսկ յոգնակիին մէջ գրեթէ վերև ցոյց տրուած ձևով կը հոլովուին. օրինակ .

Եղ .	Յոգ .
Ո . Անձն	Անձինք
Հ . զԱնձն	զԱնձինս
Ս . Անձին	Անձանց
Տ . Անձին	Անձանց
Բ . յԱնձնէ	յԱնձանց
Գ . Անձամբ <sup>(1)</sup>	Անձամբք

Այսպէս հոլովել հետեւեալները, որոնց շեղումներն ալ կը նշանակենք. — Լեառն, լերին, ի լեառնէ կամ ի լեռնէ, լերինք, լերանց, լերամբք. կաթն, կաթին, ի կաթանէ կամ ի կաթնէ, կաթինք. Բուռն, բռին կամ բռան, բռունք. Գառն, գառին, գառինք. Բեռն, բե-

(<sup>1</sup>) ԵԱՆՕԹ. — Երբ իրարու մօտ գան և և ք զիրերը, և կը փոխուի մ-ի, որովհետև ք շրժնային տառ է, ուստի և ալ շրժնային կը անայ լեզուարանական յայտնի օրէնքով .

ւին . Մասն , մատին , մատունք . Միանձն , միանձին ,  
 միանձունք (բարդութեանց մէջ միայն) . Վեհանձն , վե-  
 հանձունք . Ազն , ազին . Վեհազն , վեհազին . Դաշն .  
 Դառն . Սառն . Խաշն . Ափն , ափունք . Դիւցազն , դիւ-  
 ցազին կամ դիւցազան , դիւցազունք (բարդութեանց  
 մէջ) . Ոտն , ոտին կամ ոտան . յոգ . Ոտք , ոտից , ոտիւք .  
 Ձեռն , ձեռին , Յոգ . Ձեռք :

Ութիւն և իւն վերջացող բառերն ալ ա հոլովանի-  
 շով կը հոլովուին : Օր . քիւն-ով .

Եզ .

- Ո . Քերականութիւն
- Հ . զՔերականութիւն
- Ս . Քերականութեան
- Տ . Քերականութեան
- Բ . իՔերականութենէ
- Գ . Քերականութեամբ

Յոգ .

- Քերականութիւնք
- զՔերականութիւնս
- Քերականութեանց
- Քերականութեանց
- իՔերականութեանց
- Քերականութեամբք

Իւն-ով օր .

Եզ .

- Ո . Արիւն
- Հ . զԱրիւն
- Ս . Արեան
- Տ . Արեան
- Բ . յԱրեանէ
- Գ . Արեամբ

Յոգ .

- Արիւնք
- զԱրիւնս
- Արեանց
- Արեանց
- յԱրեանց
- Արեամբք

Այսպէս կը հոլովուին . Անկիւն , Ձիւն , Սիւն , Կո-  
 բիւն , Հերիւն ևլն . :

---

ԾԱՆՕԹ . Կան քանի մը իւն վերջաւորող բառեր ալ , որոնք ու-  
 ֆիւնի զօրութիւն ունին և բնա՛ւ չեն հոլովուիր , բայց երբ հոլովել  
 հարկ ըլլայ , ումն վերջաւորող անուններուն վրայ կ'երթան . օր . Հնչիւն  
 =ճնչումն , հնչման . հնչմամբ , հնչմունք . Գոչիւն =գոչումն , գոչման , գոչ-  
 մամբ . Գայթիւն =կայթումն . կաթման . (կայթ , կայթք կամ կայթիք) . բայց  
 նախգրիւ կը գործածուին յաճախ :

Կան կարգ մը բառեր ալ , որոնք ուս, իւս, ուրի, ունի, իլ կը վերջաւորին և սեռականին եան կ'ըլլայ : Այսպէս .

Եզ .	Յոգ .
Ո . Մնունդ	Մնունդք
Հ . զՄնունդ	զՄնունդս
Ս . Մննդեան	Մննդոց
Տ . Մննդեան	Մննդոց
Բ . իՄննդենէ	իՄննդոց
Գ . Մննդեամբ	Մննգովք

Օրինակներ . Գալուստ . Կորուստ . Փախուստ . Հանգիստ .  
Աորհուրդ , (խորհրդոյ .) Ժողովուրդ . Մնունդ . Տեսիլ և շն :

### ԵՐԿՐՈՐԴ ՀՈՒՈՎՈՒՄՆ (Ե)

Երկրորդ հոլովման հոլովանիչն է Ե , որով կը հոլովուին ըր (=տարր) . ըղ (=անգղ) և իւր (ազգիւր) վերջաւորող անունները . Զոր օր .

Եզ .	Յոգ .
Ո . Համր	Համերք
Հ . զՀամր	զՀամերս
Ս . Համեր	Համերց
Տ . Համեր	Համ-եր-ց
Բ . իՀամերէ	իՀամ-եր-ց
Գ . Համերբ	Համ-երբ-ք

Այսպէս կը հոլովուին հետեւեալները , որոնց յոգնակի սեռականը թէ ց և թէ աց կ'ըլլայ . Ազգր , ազգեր , ազգերբ , ազգերաց , ազգերօք . Եզր , եզեր , եզերբ կամ եզերաւ , եզերք , եզերօք . Կայսր , կայսեր , կայսերբ կամ կայսերաւ , կայսերք , կայսերաց . Ոսկր , ոսկեր , ոսկերաց կամ ոսկերց , ոսկերօք կամ ոսկերքք . Ուստր , ուստեր , ուստերբ կամ ուստերաւ , ուստերք , ուստերաց , ուստերօք . Դուստր , դստեր , դստերբ կամ դստերաւ ,

դատերք, դատերաց, դատերօք. Վագր. Տայգր, տայգեր, տայգերք. Տարր, տարեր, տարերր, տարերք. Արտօսր<sup>(1)</sup> ելն . :

ըն վերջաւորող անուաններ .

Եզ .	Յոգ .
Ո . Աստղ	Աստեղք
Հ . զԱստղ	զԱստեղս
Ս . Աստեղ	Աստեղց կամ աստեղաց
Տ . Աստեղ	Աստեղց կամ աստեղաց
Բ . յԱստեղէ	յԱստեղց կամ յաստեղաց
Գ . Աստեղք	Աստեղքք, աստեղօք

Այսպէս հոլովել Անգղ, Արկղ, Ետղ, Բանակետղ, Կոճղ, Սիկղ, Սկուտեղ, սկտեղ կամ սկտեղի. Շիգղ, Ղգեղ . (=կոճակ) Կուպր, կպեր(կպրոյ) . Անօսր, անօսրունք միայն նախդրիւ :

խրով, Աղբիւր, աղբեր, աղբիրք կամ աղբերաւ, աղբերք, աղբերց կամ աղբերաց, աղբիրք կամ աղբօք . Եղջիւր . Եղախր (ջրոտ տեղ, լճացած ջուր)

Ա . Դիսողութիւն . — Մեր նախնիք փոխանակ իւրքելու կր գրէին նւ . օր . Աղբեր=աղբիւր, Եղջեր=եղջիւր, Ալիւր=ալիւր, Մեւս=միւս ելն . որով ի յայտ կուգայ սեռականի Ե . հոլովիչը : Այս հին նւ երկրորդառին իւ ձեռի փոխումը կը յայտնուի տարբեր հոլովումներու տակ դացող բառերու վրայ . եղ=իւղ=ոյ . Երկեղ=երկիւղ=ի . Առեւծ=իւծ=ու . միւս=միւս=ոյ . Նոյնպէս առ երկրորդառն ալ երեւան կ'եղնէ սեռականի կազմութեան մէջ . զոր օր . անկանոն հոլովում Օրբառէն Օր=ար, սեռ . առուր . հին ուղղ . ձեւն է աւր :

Բ . Դիսողութիւն . — Ե հոլովանիչէն կը զարտուղին իւր վերջաւորող հոյլ մը բառեր ալ . օր . Բիւլ=ու . Հիւր=ոյ . Թիւր=ի . Դիւր=գիւրի . Հարիւր=ոյ ելն :

(1) ԾԱՆՕԹ . Արտօսր չի հոլովուիր, իսկ արտասուք անեզակաձեւ կը հոլովուի արտասուաց, արտասուք :

## ԵՐՐՈՐԳ ԶՈՂՈՎՈՒՄՆ (Ի)

Երրորդ հոլովման հոլովանիչն է ի. որով կը հոլովուին բազմաթիւ անուններ, Ո. Բան, Հ. ղԲան, Ս. Բանի, Տ. Բանի, Բ. ի Բանէ, Գ. Բանիւ. Յոգ. Ո. Բանք Հ. ղԲանս, Ս. Բանից, Տ. Բանից, Բ. ի Բանից Գ. Բանիւք.

Հոլովել այսպէս, Այր (= քարայր), Արքայ, Բառ, Կայան, Հաց, Մայր (ծառը)Վարդ, Նեա, Հալուէ, Գոյ, Կող (ոյ), Ուխտ, Իժ, Օձ, Մարգարէ, և հոյ մը յատուկ անուններ — Քրիստոս, Մատթէոս, Պօղոս = (Պաւղոս). Գրիգոր, Տիտոս, Եփեսոս, Փելլիքս, Վահրիճ, Բենիամին, Հովնրոս. ինչպէս նաև՝ անեղական անուններէն ոմանք. Աղօթք, աղօթից, աղօթիւք. Աղուանք. Ելք, ելից. Հրաչք, հրաչից. Սրունք, սրունից, սրունիւք և ինչ :

Կան յոգնաթիւ գոյականներ ալ, որոնց ձայնաւորն է՝ ի և Ե՛ի. Ի՛ ըի և (լուելիայն) ըի. երկրարբառ ՈՒ՛ ըի, ՈՅ՛ ու՛ ի, (իսկ ա կը սղուի) կը փոխուին շեշտին տեղափոխման պատճառաւ :

Է՛ ի, Ի՛՛ ուի, ԵԱՅ՛եի և ինչ. կը փոխուին : Օր. Էջ իջի, իջիւ, Շէն շինի. Հանդէս, հանդիսի. Աղէտ, աղիտի. Արտաչէս, Արտաչիտի. Մովսէս, Մովսիտի. Ներսէս, Ներսիտի. Անէճք, անիճից. — ի=ը Իղձ, ըղձի, ըղձիւ, իղձք, ըղձից, ըղձիւք. Ինչ, ինչք, ընչից, ընչիւք. Խիղճ, իւղճի. Սիրտ, սրտի. Ճշմարիտ, ճշմարտի. — ու՛ սղուած = Բրուտ, բրտի. Օգուտ, օգտի. — ու՛ սղուած = Լեարդ, լերդի, Կայեան, կայենի. մատեան, մատենի. — եւս = ի Յորեկեան, յորելինի. Աշտեայ, եւսյ = Էի աշտէի (տէգ). Հրեայ, հրէի. — ի՛ = ո վաղիւ, վաղուի. Հաշտեանք, հաշտենից. — ու = ը Ունդ, ընդոյ, ունդք, ընդոց, և ինչ :

Կան կարգ մը բառեր ալ, որոնց եզակի գործիականը ալ, իսկ յոգ. սեռականը՝ աց ըլլալուն պատճառաւ «խառն հոլովմունք» կոչած են բոլոր քերականներն ալ, թէև ուրո՞յն հոլովում մը չեն կազմեր. ասոնց պատկերն է հետեւեալը :

եզ .	Յոգ .
Ո . Գաւառ	Գաւառք
Հ . զԳաւառ	զԳաւառս
Ս . Գաւառի	Գաւառաց
Տ . Գաւառի	Գաւառաց
Բ . իԳաւառէ	իԳաւառաց
Գ . Գաւառաւ	Գաւառօք

Այսպէս կը հոլովուին հետեւեալները . Կարգ , Ագասկ , Բաժակ , Բանակ , Գերան , Խաւար (յոգ . չունի) . ռաան , Յատակ , Բազմական , Զինուոր , Լեզու , արոց , Կշուրդ , Արու , Ուրու ելն :

Կան կարգ մը բառեր ալ , որոնք մե'րթ իրենց ձայնորը կորանցնելով և մերթ ի ձայնաւորին լռելեայն ը'ի սխարկելով կը հոլովուին . Բժիշկ , բժշկի , բժշկաւ . սիչ , գրչի , գրչաւ , Դպիր , դպրի . Պարիսպ , պարսպի . ատիչ , դատչի . Արարիչ , Արարչի . Դանիճ , դանճի . և երկբարբառը սղուած . — Անեակ , անեկի , անեկաւ . զեակ . դղեկի , դղեկաւ . ու երկբարբառը սղուած . հլեայն ը-ով . Աղմուկ , աղմկի , աղմկաւ . Բազում , սզմի . Բազուկ , բազկի . և ձայնաւորը ի' փոխարկուած . էտ , գիսի . Քարեղէն , քարեղինի : Ե՛ ձայնաւորը՝ եղած . Դեւ , Տ . դիւի , Գ . դիւաւ : Ո՛ ու ի փոխած . Հովիւ , հովուի , հովուաւ . ոյ=ու՝ Վարագոյր , սրագուրի , վարագուրաւ . իսկ կան կարգ մը անեզասն բառեր ալ , որոնք զաւառի յոգնակիին պէս կը հոլովուին և են . Աչք , աչաց , աչօք . Արտասուք . Արհարք , արհարաց . Լանջք . Կամք . Մեղք . Միտք , ոաց , մտօք . Աղաչանք . Յարգանք(արգ=յ—արգ . ան-է գնակերսով յարգանք) ելն :

## ՉՈՐՐՈՐԴ ՀՈՒՈՎՈՒՄՆ (Ո)

Չորրորդ հոլովման հոլովանիչն է ո . զի սեռականը կը վերջաւորի , որով սեռականը ոյ վերջաւորուլ բոլոր տեղը այս հոլովման կը վերաբերին :

Եղ .	Յոգ .
Ո . Մարդ	Մարդք
Հ . զՄարդ	զՄարդս
Ս . Մարդոյ	Մարդ-ոց
Տ . Մարդոյ	Մարդ-ոց
Բ . ԻՄարդոյ	ԻՄարդ-ոց
Գ . Մարդ-ով	Մարդ-ովք

Այսպէս կը հոլովուին հետեւեալ բառերը . Աթոռ , Աճիւն , Ամպ , Այս (=դէ) , Անօթ , Արմատ , Բերան , Բոց , Գետ , Գիշեր , Գոգ , Գործ , Երազ , Թէ , Թի , Լի , Խմոր , Ծեր , Ձի , Գայլ , Որթ , Քաղցու , քաղցուոյ , Հարաւ , Հայ , Երզ , Երէ , Հիւսիս , Հող , Հողմ , Սով . Չու , ձուոյ . Ուս . Փղ . Ուղի . Պաղեստին . Սեպուհ , Սեպոյ (ու սղուած) . Ամօթ . Յոգ . Երկաթ . Տղայ , Տղայոյ . Տեղ (=անձրեւ) . Դեղ , Դեղոյ ևլն :

Դիտողութիւն . — Չորրորդ հոլովման մէջ ալ կան ձայնաւորի փոփոխումներ , և են . ու=ը , է=ի , ոյ=ու , իւ=ու իսկ երբեմն ալ ա , ի , ու , բոլորովին կ'անյայտանան և կամ ճիշտ է ըսել՝ հիմնովին կը սղուին . օր . Գրեան (յոգնակերտ մասնիկ մ'է հոս ան=ք . ուստի անտեղի է ըսել Գրեանք) Գրենոյ , գրենով . Վերին , վերնոյ , վերնով . Թամուզ (=Ադոնիս չաստուածը) Թամոյ , Թամզով : Այս սղման կանոնով հոլովել հետեւեալները .

Աստուած , Աստուծոյ . Անկողին , անկողնոյ (անկողինք . Պատճառք . Դազաղք ևլն . , միշտ յոգնակի գործածուած) . Անասուն , անասնոյ . Բլուր , բլրոյ . Գին , գնոյ . Գուր , գրոյ . Թուզ , թղոյ . Խորհուրդ , խորհրդոյ , նաև (=խորհրդեան) . Կնիք . կնքոյ . (կարծիք-ին պէս յոգնակերտ մասնիկ մը չէ , զի սեռականը չըլլար . (կարծիք , կարծեաց ևլն .) ին պէս եացով . սեռական յոգ . ուղղ . կնիքք , կնքոց , կնքովք) . Մարմին , մարմնոյ . Մոխիր , մոխրոյ .

լոյս, լուսոյ. Սուրբ, սրբոյ. Հուր, հրոյ. Զուր, ջրոյ. այս երեքին գործիականը հուրը կամ հրով. ջուրը կամ ջրով. յոգնակին ջուրց կամ ջրոց, բայց չըլլար հուրց — Անե-րեւոյթ և անցեալ ընդունելութիւն իբրև գոյական կը հալովուին այս կերպով : — Սիրել, սիրելոյ, սիրելով. (միայն եզակի կը հալովուի աներեւոյթը) Ծածկեալ, ծածկելով, ծածկեալք, ծածկելոց, նաև այլն ածանցը, Երկնային, երկնայնոյ. Մարդկային, մարդկայնոյ, մարդկայնով. Միս, մսոյ. Խունկ, խնկոյ. Ծուխ, ծխոյ. Էշ, իշոյ. Սեաւ, սելոյ. Յոյս, (յււ) յուսոյ. Սէր, սիրոյ. Գոյն գունոյ. Գոմէշ, գոմշոյ. Հին, հնոյ. Նոր, նորոյ, տրական նորում. Հնում, նախորիւ—ի հնումն, ի նորումն. Անուր, անրոյ. Յորեան, ցորենոյ. Զէթ, ձիթոյ. Կէս, կէի կիսոյ. Որեար (եար=եր. յոգնականացուցիչ, որեար=մարդիկ, անձինք) որերոյ. Անդեայ, եայ=ե անդէոյ, և յատուկ անուններ, Սանատրուկ, Սանատրկոյ ևլն. :

Դիտողութիւն. — Բացառականին հետ չչփոթելու համար նախորիւ վերջահոլով տրականը թէ՛ Առաջին ա և թէ՛ Զորորդ հոլովումներուն մէջ Երրորդ հոլովման պէս կ'ըլլան. Զոր օր. ի թելի (մէջ. թելը=ի թելոյ). ի ծոցի (=ի ծոցոյ, ծոցին մէջ, ծոցը) ի բերանի (=ի բերանոյ). ի մարմնի (=ի մարմնոյ) :

Նաև՝ հոյլ մը անեզականներ ալ, այսպէս կը հալովուին. Անուրջք, անրջոց. Դժոխք, դժոխոց. Կուռք, կուոց. Պահք, պահոց. Տայք (յատուկ անուն) Տայոց. Տիք, տիոց. Կոչունք, կոչնոց ևլն. :

Ո հոլովանիչն ունին ուզականին մէջ ի վերջացող բառերն ալ այսպէս.

եղ.	Յոգ.
Ո. Բարի	Բարիք
Հ. զԲարի	զԲարիս

Ս. Բարւոյ	Բարեաց
Տ. Բարւոյ	Բարեաց
Բ. ԻԲարւոյ	ԻԲարեաց
Գ. Բարեաւ	Բարեօք

Եկեղեցի, եկեղեցւոյ, եկեղեցւոյ. Երեւելի, երեւելւոց. Տեղի, տեղւոց. ուր և ում տրականի յատուկ մասնակներ են:

Հոլովել. — Այգիււոյ. Արծաթիււոյ. Ասորիււոյ. Գերի. Գինի. Գօտի. Լեղի. Միրանի. Կարասի. Կղզի. Կոզի. Հոգի. Հովանի. Հոմայեցի (բոլոր ցիւղածանցները) Հոմայեցւոց. Որդի, որդւոյ, որդիք, որդւոց, որդւովք. Մանկտիււոյ. (յոգնակերտ). Ոսկի, Պատասխանիււոյ. Ջորի. Փռչի. Խով բառեր—Պատիւ, Իւպատուոյ. Արծիւ, արծուոյ. Անիւ, անուոյ. Տիւ, ցուոյ. Քիւ, քուոյ. Թիւ, Թուոյ. Ի՛ ո՛ր փոխուած ըլլալով Թւոյ գրելու չէ այլ Թուոյ:

Անեղական ի՛ք յոգնականացուցիչ մասնիկով բառերն ալ այս հոլովման (Դ.) տակ կ'երթան. Աւետիք, Աւետեաց, Աւետեօք. երախտիք. ընթրիք, ընթրեաց. կարծիք. կարիք. տանիք. Միւնիք (յատուկ անուն), Միւնեաց. Ասորիք, Ասորեաց կամ Ասորւոց. նաև՝ ուղղականին մէջ նայ վերջաւորող բառերը. Արեւելեայք, Արեւելեայց կամ Արեւելեաց, Արեւելեօք. դուզնաքեայց, դուզնաքեօք. Եղ. դուզնաքեայ, =քէի, =իւ, =ւոյ. Յոգն. գուզնաքէից, դուզնաքէիւք:

## Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ Հ Ո Լ Ո Վ Ա Ռ Ի Մ Ն (ՈՒ)

Հինգերորդ հոլովման հոլովանիչն է ու. զի սեռականը ու կը վերջաւորի. Այս հոլովման յատկանիչն է նաև գործիականին ու սեռականին հանգիստութիւնը. Ինչպէս կը յայտնուի ստորև.

ՄԱՆՕԹ. — Հիներուն քով եւ-ով գործիական մըն ալ կայ, բայց քիչ չործածուած. բարի, բարեւ. տեղի, տեղեւ. հաւաստի, հաւաստեւ. ստորեւ. փոխանակ եաւ-ի որ նիշտ է:

Եզ .	Յոգ .
Ո . Զարդ	Զարդ-ք
Հ . զԶարդ	զԶարդս
Ս , Զարդու	Զարդ-ուց
Տ . Զարդու	Զարդ-ուց
Բ . իԶարդուէ	իԶարդ-ուց
Գ . Զարդու	Զարդ-ու-ք

Հոլովել այսպէս հետեւեալները , որոնց ամէնուն բացառականը ունի չ'ըլլար , այլ յաճախ պարզ է , — Առաւօտ , յառաւօտէ . Ագռաւ , ագռաւու կամ ագռաւոյ . Այգու կամ այգոյ , յ'այգուէ . Առիւծ . Արև , արևու , յ'արևէ . Զօր , զօրու . յոգ . Զօրք , զօրաց , զօրօք . Գանձ . Գրատ . Դաս . Զգեստ . Ժամ , ու , ի ժամէ . Խրատ ի խրատուէ . Ծով , ծովու , ի ծովէ . Կով , կովու , ի կովէ . Հաւ , հաւու , ի հաւէ :

Նաւ , նաւու , ի նաւէ . Որթ , որթու . Ուղտ , ըզտու , յուղտէ կամ յուղտուէ . Սակաւ , սակաւու , ի սակաւէ . Սպաս , սպասու , ի սպասուէ . Քաղցր , քաղցու , ի քաղցուէ ևլն . :

Հոյ մը յատուկ անուններ ալ է . հոլովման տակ կ'երթան . այսպէս . Աբրահամ , Աբրահամու . Բահաղ , Բահաղու . Խոսրով , Խոսրովու . Յորդանան , — ու : Այս անուններու շարքին կը վերաբերին նաև Յունական աս , իս , ոս մասնիկներով վերջաւորող անուններ . — Աբղիաս , Աբղիու (աս ջնջուած) Եփեսոս . Կուռնելիոս . Թովմաս , Թովմասու . (աս անեղծ պահուած) Ղուկաս , Ղուկասու . Յովհաննէս , Յովհաննու , Յուլիանոս , Յուլիանու . Ուկիլիանոս , ուկիլիանու :

Ե՛ր—ի և ի՛ր—ի , ու՛ր—ի փոխուած . — Զէն , զինու . Ինձ , ընձու . Վրէժ , վրիժու . Յուլ , ցլու . (ու-ը լուելեայն) քէն , քինու :

Կան նաև՝ ըր վերջաւորող բացառիկ բառեր ալ , որոնք փոխանակ Բ . հոլովման Եզր . եզեր . (Ե . ձայնաւորով) կանոնով հոլովուելու հինգերորդին տակ կ'երթան և են հետեւեալները :

Եզ .	Յոդ .
Ո . Փոքր	Փոքունք
Հ . զՓոքր	զՓոքունս
Ս . Փոք-ու	Փոքունց
Տ . Փոք-ու	Փոքունց
Բ . իՓոք-ուէ	իՓոքունց

Գործ. Փոքու կամ Փոքումբ, Փոքուք կամ Փոքո  
Անդորր, անդորրու, Ասր, ասու, (ր բոլո  
կորսուած). Բարձր բարձու, ի բարձուէ, բարձ  
բարձանց, բարձամբք. Թանձր, թանձու, ի թան  
թանձունք, թանձունց, Մաղր, ծաղու, ի ծաղուէ  
ղունք, ծաղուց. Մանր, ծանու, ի ծանուէ, ծան  
ծանունց, ծանունց, ծանունք. Կարծր, կարծու,  
ծունք. Մանր, մանու, մանունք, մանուց, մանո  
Մեղր, մեղու, ի մեղուէ. յոգն. Յոգունք, յո  
(=չատ). Քաղցր, քաղցու, ի քաղցուէ, քաղց  
քաղցունց, քաղցունց, քաղցուք. Սրէց, երիցու  
յերիցուէ, երիցունք, երիցանց, երիցամբք. Այս  
նախներէն որոշակի կ'երեւի որ, երբեմն ունց: Յու  
սեռականին տեղ՝ անց կը գործածուի. քաղցրած:  
Թեան համար, որ մեր դասական լեզուին յատո

8. Վասն մանկանն.— Տղուն համար. վասն  
խաղրութիւն մըն է:

Նախդրին և նախադրութեան մէջ հետեւեալ  
բերութիւնը կայ. Նախդիրը հոլով կը շինէ, իսկ Ն  
դրութիւնը հոլով կ'առնու, և ամէն նախադրութի  
մասնակի հոլովն ունի. իբրև խնդիր. Չոր օր. վա  
ռական կ'ուզէ և կը նշանակէ հարևար. Մանուկն,  
մանկան. Ա. հոլովման կը պատկանի: Վասն նախա  
թեան տրական խնդիր տալ մեր ոսկեղենիկ լեզուի  
ոճիր գործել է. ուստի վասն ինձ այլանդակ այլս  
բարը ձաղկելի ու ծաղրելի է յաւէտ:

9. Ի վերայ=վրան.— Նախադրութիւն մըն է  
ռական խնդիր առնող. Այլ երբ խնդիր չունի  
բային վրայ ինկած ըլլայ, մակբայ է, ի նախդիր  
վերայ նախադրութեամբ կազմուած. նախադրութի

Կրք խնդիր մը չունենայ ու բային վրայ գրուած ըլլայ մակրայ, կարելի է լուծել, և թէ՛ աւելի ճիշտ է լուելայն խնդիրն լրացնելով լուծել. բայց իսկապէս մակրայն այն ածականները, որոնք բային մէկ հանգամանքը, եղանակը ցոյց կուտան. զոր օր. Բարոնխ խօսեցաւ, արգար ասացեր. Մեծածայն կարդացէք (—կանչել). Չարաստ ասնջէր. Քաջ գիտէր. Բարձրածայն աղաղակեցին: Բարոնխ՝ խօսեղ—ին, արդար՝ ասելին, մեծածայն՝ կարդաց—ին, քաջ՝ զիտել—ին որպիսութիւնը, բարձրածայն՝ աղաղակելի—ին մէկ որպիսութիւնը կը յատկանշեն:

Իրտելի է որ ածականի մը վրայ ս գիրն դնելով մակրայի կը վերածուի. Բազումն խօսեցաւ, համարձակագոյնս գոչեր:

10. Ուրախութիւն մեծ. — Հայցական բնութեան խնդիր է, փոխանակ ըսելու, ուրախութեամբ մեծաւ կամ յուրախութիւն մեծ:

Ձէզոք բայերը, երբ իրենց արմատը կամ արմատին համանիչն խնդիր առնուն, այս խնդիրը հայցական կը դրուի, զոր օր. Չքաղումն իշոյ թագեցի. Չման արդարոյ մեռանի: Գնաց զճանապարհ երից աւուրց սա. այս օրինակ բայերու մօտիկ գտնուած որ յարաբերական դերանունն ալ հայցական հոլով կը դրուի որով՝ի տեղ: Վասն յանցանացն զոր յանցեաւ = որով յանցեաւ:

Ի մեղս իւր զոր մեղաւ = որով մեղաւ:

Բժշկել ի վիրացն զոր խոցեցին զնա = որով խոցեցին զնա:

Ոչ թողից քեզ զանարգանս դիցն զոր անարգեցեր զնոսա = որով անարգեցեր զնոսա: Ուստի այդ զորք փոխանակ գործիականի բնութեան խնդիր լուծելու է: Բայց պէտք չէ շփոթել էական Բային քով գրուած տրական բնութեան խնդիրը սևուականին հետ, զի Կական բայը տրականով նիւթական ունենալ բնաւին չի նշանակեր, Օր. Ձիւնչ եղեր ինչ որդեակ = Որդեակ քեզի ինչ կղաւ:

Ձիւնչ անուն է ինչ = Անունդ ինչ է:

Այնն խնդրոյ չի սպառուած = Այն խնդիրը վերջ չունի. Բանի ինչ են ինչ ընչ ինչ = Քեզի հետ խօսելիք ունիմ ելն:

11. Ի տեսլեան = տեսիլքին մէջ. — Ի նախորի վերջահոյով տրական բնութեան խնդիր է, նախորի

վերջահողով տրական է. երբ բուն տրականին վրայ նախ-  
դէր մը դրուած ըլլայ, որ մէջ կը նշանակէ: Կան կարգ  
մը բառեր՝ որոնք իշ, ուս, ուրդ վերջաւորելով Ա. հոլո-  
վանիչով կը հոլովուին, այսպէս. Տեսիլ, տեսլեան, ի տես-  
լենէ, տեսլեամբ. Գալուստ, Գալստեան. Խորհուրդ,  
խորհրդեան (=խորհրդոյ), Ժողովուրդ, ժողովրդեան  
(Ժողովրդոյ): Երբ միեւնոյն բառը երկու ձեւով ալ հո-  
լովուի, ատոր պատճառը հին գաւառաբարբառներու մէջ  
փնտռելու է, որովհետեւ յայտնի է որ նոյն բառը ու-  
րիշ դաւառի մէջ տարբեր եղանակաւ հոլովուած է:

17. Ընդ այլ նանապարհի գնացիւն.— (=Ուրիշ ճամ-  
բէ գացիւն) ընդ Անորոշ հայցականով տեղի մը ու բանի մը  
մէջէն կամ մէջտեղէն անցնիլ կը նշանակէ: Զոր օր. Ընդ  
եղեգան փող ծուխ ելանեք=Եղէ գին փողին (=խողովակ)  
մէջէն ծուխ կ'ելլէր.

Եւ ընդ իս խակ անձն անցիք=Բու հոգիդ ալ սուր պիտի մտնէ.  
ընդ, անորոշ հայցականով շարածուքիւն ալ կը նշանակէ.  
Արշաւես' ընդ ամենայն կողմսնս=Արշաւէ ամէն կողմ.  
ընդ ամենայն երկիր=Բովանդակ երկրի վրայ.

Ընդ, եթէ անորոշ հայցականով կրկնուի, մէջտեղ կը  
նշանակէ. Զոր օր. Ընդ իս եւ ընդ քեզ=Իմ և քու մէջտեղ.  
Ընդ երկինս եւ ընդ երկիր=Երկնի և երկրի միջև. Խտի-  
մեծ է ընդ բազումս եւ ընդ սակաւս = Շատին և քիչին  
մէջտեղ մեծ սարբերութիւն կայ:

## Բ Ա Ռ Ք

Կրսսեր, կրսսերոյ, կրսսերաց, ամ. փոքր:

Գաղս=Գաղսնի կերպով:

Ստուգել, ստուգեցի, ն. ճշդել:

Յոյժ. մկ. Շատ:

Հանդերձ. նիս. Միատեղ:

Մասուցանել.—մատուցին. ն. Տալ, ընծայել, մօտը բերել:

Ազդ առնել, Իմացնել:

Տեսիլ, տեսլեան, տեսլեանց.—Երազ, երես, դէմք, տեսարան:

Պատարագ, պատարագի, պատարագաց.—Ընծայ, զոհ, տուրք:

Անդրեւ. մկ. Նորէն հոն, նոյն տեղը:

Այլ, այդոյ. ամ. ուրիշ, տարբեր:

Այլ. շղկ. Հասպա, բայց.

1. Էստրան (==Գոյական) բայն է եմ, իսկ շինիւն, եղանիւն իրարմէ ծնունդ առած պակասաւոր բայեր են, որոնք զիրար կը լրացնեն. նոյն պակասաւորներէն է Գոն(==Գլ-ալ) բայը, հաս ի դիւրութիւն կը դնենք անոնց խոնարհումները :

Սահմ. եղանակ Ներկայ

- Եզ. եմ, Գոմ== Ես եմ
- ես, Գոս== Դուն ես
- է, Գոյ== Մն է

- Յոգ. եմք, Գոմք==Մենք ենք
- էք, Գոյք== Դուք էք
- են, Գոն== Սնոնք են

Անկասար

- Եզ. Էի, Գոյի== Ես էի
- էիր, Գոյիր== Դուն էիր
- էր, Գոյր== Մն էր

- Յոգ. Էամք, Գոյամք==Մենք էինք
- էիք, Գոյիք== Դուք էիք
- էին, Գոյին== Սնոնք էին

Կասարեալ (Չունի)

Ապառնի (Չունի)

Հրամայական եղանակ

- Եզ. Ե՛ր==եղի՛ր Ողջե՛ր ելի՛ն.
- Յոգ. Է՛ք կամ՝ եո՛ւ՛մ Ողջ է՛ք
- Ողջ եո՛ւ՛մ (ուրիշ ատեն անգործածելի է:
- (Գոմ՝ բայն հրամայական չունի)

Ստորագասական եղանակ

- Եզ. Իցեմ, Գուցեմ== որ ըլլամ
- Իցես, Գուցես== ըլլաս
- Իցէ Գուցէ== ըլլայ

(Երբեմն իբր մակրայ կը գործածուի)

- Յոգ. Իցեմք, Գուցեմք== ըլլանք
- Իցէք, Գուցէք== ըլլաք
- Իցեն, Գուցեն== ըլլան

Գերբայ

- Անորիւ. Ել, Գոլ== ըլլալ
- Անցեալ. Եալ(Գոմ՝ բայը չունի)
- Ապառնի. Ելոց (Գոմ՝ բայը չունի)

Լինիւն և աճեցական մասնիկով, շինիւն բայը փոխուած է Եղանիւնի՝

Է==Ղ. գարձած Եղ արմատ չկայ

Սահմ. եղանակ Ներկայ

- Եզ. Լինիմ, եղանիմ==Կ'ըլլամ
- Լինիս, եղանիս==Կ'ըլլաս
- Լինի, եղանի==Կ'ըլլայ

- Յոգ. Լինիմք, եղանիմք==Կ'ըլլանք
- Լինիք, եղանիք==Կ'ըլլաք
- Լինին, եղանին==Կ'ըլլան

Անկասար

- Եզ. Լինէի, եղանէի==Կ'ըլլայի
- Լինէիր, եղանէիր==Կ'ըլլայիր
- Լինէր, եղանէր==Կ'ըլլա՞րքն
- Եոգ Լինէամք, եղանէամք==Կ'ըլլայիք
- Լինէիք, եղանէիք==Կ'ըլլայիք
- Լինէին, եղանէին==Կ'ըլլային

Կասարեալ

(Լինիւմ՝ բայը կատարեալ չունի)

- Եզ. Եղէ== Եղայ
- Եղեր== Եղար
- Եղես== Եղաւ

- Յոգ. Եղամք== Եղանք
- Եղէք== Եղաք
- Եղեն== Եղան

Ապառնի

- Եզ. Լիցիմ, Եղէց == Պիտի ըլլամ
- Լիցիս, Եղիցիս== Պիտի ըլլաս
- Լիցի, Եղիցի == Պիտի ըլլայ

- Եոգ. Լիցիմք, Եղիցիմք== » ըլլանք
- Լիցիք, Եղիցիք == » ըլլաք
- Լիցին, Եղիցին == » ըլլան

Հրամայական եղանակ

- Եզ. Լե՛ր կամ՝ (յորդորական)
- Լիջի՛ր == Եղի՛ր [Եղէք
- Յոգ. Լեո՛ւ՛մ, Լիջի՛ք, Եղեո՛ւ՛մ ==

	Արգելական ձեւ	Լինիցիք, եղանիցիք = <del>բլլաք</del>
Եզ.	Մի՛ լինիր, Մի՛ եղանիր = Մի՛ բլլար	Լինիցիքն, եղանիցիքն = <del>բլլանք</del>
Յգ.	Մի՛ լինիք, Մի՛ եղանիք = Մի՛ բլլաք	Դերբայք
	Ստորադասական եղանակ	Անորիւ. Լինիլ, եղանիլ = <del>բլլալ</del>
Եզ.	Լինիցիմ, եղանիցիմ = <del>բլլամ</del>	Անցեալ. Լեալ, եղեալ = <del>եղած</del> , <del>բլլած</del>
	Լինիցիս, եղանիցիս = <del>բլլաս</del>	Ապառնի. Լինելոց, եղանելոց
	Լինիցցի, եղանիցցի = <del>բլլացի</del>	= <del>լլալու, որ գիտի բլլալ</del>
Յգ.	Լինիցիմք, եղանիցիմք = <del>բլլանք</del>	

Դիտուլ. իք (=կայ, ալ էական բայ մըն է բայց մի-  
նակ չի գործածուիր այլ չ բացասական մակբայով,  
Չիք (=չկայ). որ. Չիք ինչ ծածուկ որ ոչյայտնեացի  
= Չկայ գաղտնիք մը որ չյայտնուի. Չիք ոք աստ =  
Հոս մէկը չկայ. Չիք հնար = Հնար չկայ, հնար չէ. Ուս-  
եաղ բնաւ չիք = Բնաւ սորված չէ՛. Չիք իմ տեսեալ =  
Տեսած չունիմ, չեմ տեսած :

**Բ. Մանուկն Յիսուս ի տանարին**

2. Ի տանարին. — Ի նախդիրը, երբ բուն տրականին վրայ գրուի նախորիւ վերջանողով տրական կամ ներդոյա-  
կան կը կոչուի և կը նշանակէ մէջ :

Ի տանարին = տանարին մէջ :

3. Լի իմաստութեամբ. — Ածականներն ալ խնդիր-  
ներ կ'առնուն բացի ուղղականէ և նայցականէ, ամէն հո-  
լով խնդիր կրնան առնուլ. հոս՝ յի ածականը գործիա-  
կան հոլով խնդիր առեր է : Սեռական խնդիր կ'առնուն  
բայածականները, ու, իչ, եալ ներգործական ընդունե-  
լութեան ոյժ ունին, ինչպէս. Պարգեւատու բարեաց, Գու-  
շակ ճշմարտութեան, Վիրաւորք արոյ, Փորձն յուշարար է  
Քեասակարացն, Աւարառութ ասացուածոց, Ատատարեք  
ցորենոյ : Այս ոեռական խնդիրները, իայցական սեռի  
խնդրի փոխան դրուած են, որովհետև ներգործական  
բայերէ կազմուած բայածականներու կը վերաբերին.  
Ինչպէս Տալ, Գուշակել, Վիրաւորել, Յուշարար է = յուշ-  
ածէ, Աւար առնուլ, բերել :

4. Տրական խնդիր ածականը. — Ածականներու  
խնդրառութեան բանալին՝ անոնց ո՛ր տեսակ բայէ ծա-  
գելը գիտնալն է. վասն զի եթէ ներգործական բայէ

ծագած ածական մըն է, սեռական հոլով կ'առնու փոխանակ հայցականի, իսկ եթէ Չէզոք է բնութեան խընդիր մը կ'ուզէ անհրաժեշտարար :

Ածականը կ'առնու Տրականին հետեւեալ եղանակաւորումներն, վերջահոյով՝ որ է բուն հոլովուած Տրականը, ի նախդրիւ. առ նախդրիւ խնդիրներ : Վերջահոյով տրական առնող ածականներ : Նման մանկուոյ (=Չ. նմանել-էն) =տողու պէս : Բաւական իւրեանց=Սրենց օգտելու չափ : Հաւանանս սմա (=Չ. համեմատել-էն) =Ասոր համեմատ. Հաւատար հրեշտակաց (=Չ. հաւասարել-էն) : Արժանի սղջուների (Չ. = արժանանալ-էն) : Հասարակորդս մեզ արարեր զգոսա :

5. Ի նախդրիւ տրական առնող ածականներ. — Պիտանի ի գործ, Վասան ի գործ, ի մարդ սպասան, կազմ ի գործ, պատրաստ ի մահ. աշխարհաբարի մէջ արականի վերածել, գործի, մարդու, մահուան :

6. Առ նախդրիւ տրական առնող ածականներ. — Գուրթ, Չգացմունք, Վարմունք, կերպ ցուցնող ածականները առ նախդրիւ խնդիր կ'առնուն : Պատրաստ է սիրտ իմ առ քեզ. Պատրաստ առ ամենայն ինչ. Կին նախանձ ընդդէմ առ միւս կին. Առ քեզ կարի շանգաւոր է իմ. Առ Աստուած մեղաւոր (է). քաղցր առ ամենեսեան. Առ բարերարն Տմարդի. իսկ եթէ աներեւոյթ մըն է ածականին խնդիրը թէ՛ առ և թէ ի նախդիրներով կրնայ ըլլալ. ինչպէս. դժուարին առ իմանալ են բանք. երկաթ՝ ցուրտ առ ի շօշափել, Բաժակ խրատոյն առ ճաշակել դատն է. և առ թժյկել օգտակար է, Գեղեցիկի տեսանել (=տեսքով գեղեցիկ) արագ առ ի լսել, Ընդ, լուս նախդրիւ խնդիր առնող ածականներ : Ապախտարո՞ր ընդ երախտաւորս. լուս որ տրականով համեմատ կը նշանակէ, ածականի խնդիր ալ կ'ըլլայ. Արժանաւոր լուս բանիցն առաքելոց :

7. Ածականները բացառական հոյով խնդիր կ'առնուն, ա՛յն ատեն երբ իրենք բացառական խնդիր առնող բայէ մը ծնունդ առած ըլլան :

Չատ (զատել) ի միմեանց. Անզաւակ (անզաւակել) յագգե՛ քունն եղբեր. Սուրբ (սրբել) իմ շատե՛ն արե՛նեցուն. Տարագիր ի դրախտն.

Բացառական կը տրուի ամականին, երբ այդ խնդիրը՝ ազգ և որպիսութիւն ցուցնէ և աշխարհարարի մէջ գործիականի կը համապատասխանէ, թէ և բացառականի ալ պատշաճ է երբեմն:

Ի տիոց մանուկ — Տարիքովը տղայ. Ի տիոց հասակակիցք. Ի մտաց թեթեւ. Տկար յոտից. Կաղ յերկուց ոտից. Հռովմայեցիք յազդե — ազգաւ: Եթէ գործիականով ալ ըսենք սխալ չէ:

Թուական և անորոշ ամականներն ալ, բացառական հոլով խնդիր կ'առնուն, երբ գոյականաբար գործածուին. Այսպէս. Ոմն ի զիմուորաց, Ոմանք ի Լոցանկ, Մին ի մեկը, Առաքեաց դերկուս յաշակերաց խրոց, Իւրաքանչիւր ոք ի մեկը, Այլք յիմաստնոց, Բազումք ի մեկը, Կէսք ի Լոցանկ, Հինգն ի Լոցանկ:

8. Գործիական խնդիր ամականի. — Գործիական խնդիր կ'առնուն, յեցուն, կուշտ, ազգ և որպիսութիւն ցուցնող ամականները.

Տուն յի ամենայն բարութեամբ. Հոծ բազմամբոյս շուքեամբ. Մի՛ շինիք շոյս մտօք. Էր աւուրբ մանուկ. Տիօք առոյց եւ բարձր հասակաւ եւ զեղով եքտաց սխանչելի:

9. Ամական մը կրնար երկու երեք տեսակ խնդիր առնել. Ծարաւի եւ մեզ, Ծարաւի եւ քն.

Կարօ՝ տրական, բացառական և գործիական խնդիր կ'առնու, այսպէս. Կարօ հանճարոյ, յերեսաց իոց, խիք ոչ կարօ յիմեքե, իւիք եղի և յն:

Կրկին դիտել կուտանք թէ ամականներու խնդրառութիւնը իրենց բայէն կախում ունի. Այսպէս.

Բայ

Ամական

Երկնչիւմ ի Տեսունկ = Ծարայ աներկիւղ ի Տեսունկ  
Նմանեցի եմա = Նման եմա շինեչոց եմք

Կարօսացայ իւիք = Կարօս ողորմութեան:

10. Ի վերայ Լորա. — Ի վերայ սեռական խնդիր առնող նախադրութիւն մըն է:

11. Ամի ամի. — Երբ բառ մը կրկնուի մակբայ և նոյն բառը երբ իք հարկով կրկնուի մակբայ յառաջ կուգայ, և կը թարգմանուի. իւրաքանչիւր, ամեն. Չոր

օր. Անի անի=ամէն տարի. Ի ֆաղսֆաց ֆաղսֆաց=շատ մը քաղաքներէ. Երբեք Երբեք=երբեմն երբեմն. — Օր ըստ օրե= օրէ օր. Ուսեք ուսեք = սրկէ նրկէ, խառնի խառն. Ուրոք ուրոք արկեալ եր=մէկուն մէկայլին ձգածը. Առի փոքր փոքր. Առ սակաւ սակաւ=կամաց կամաց. Ուրոյն ուրոյն=զատ զատ. Մերձ ընդ մերձ, Հուպ ընդ հուպ=անմիջապէս. Է ուրեք գի=երբեմն. Յօշոշ=կտոր կտոր. Երախաւն երախաւն=խումբ խումբ:

Դիտելի է որ ածականի մը և կամ ածականաբար գոյականի մը կրկնումով հայեցի Գերադրական կը կազմուի այսպէս Ընկիր ընկիր=ամէնէն ընտիր:

11. Իբրեւ եղեն ճորս ամբ երկոսասան.— Էական բայն սեռականով ունենալ ալ կը նշանակէ. եթէ ներգործական բայով կազմուած նախադասութիւն մը այս կանոնով վերածել ուղենք, Ունիւն ներգ. բային սեռի խնդիրը ուղղական ենթակայ կ'ըլլայ անոր, (էական բային), իսկ ներգործականին ուղղական հոլով ենթական ալ սեռական հոլով ընտրեալ խնդիր կը տրուի էականին (=չէգոք). որովհետեւ հոլովելի գոյական մը չ'ըլլալով բայը յատկացուցիչ չի կրնար բնդուել. Եղեն նորա ամբ երկոտասան. ևս—ենթական եղեր է ճորս, սեռական ընտրեալ խնդիր եղեն (=ունենալ, ունէրին—են ամբ= որ սխտի ըլլայ զանեւ, եղեր է ենթակայ: Ընտիր ոճի մէջ յաճախ գործածուած կանոն մ'ըլլալուն համար, աւելորդ չ'սխտի համարուի քանի մը օրինակներ տալ:

Նորա եր ֆոյր մի փոխանակ ըսելու Նա ունեւ ֆոյր մի = Անիկա քոյր մը ունէր: Առն միոյց եիւն երկու որդիք փոխանակ ըսելու Այր մի ունեւ զորդիս երկուս = Մարդ մը երկու որդի ունէր: Են իւն եղբարք հիւնգ փոխանակ ըսելու Ունիւն գեղբարս հիւնգ=Հինգ եղբայր ունիմ:

Դիտելի է որ էական բային համանիչ Գոյ, Կայ և Գսանեւ բայերն ալ այս կանոնէն չեն շեղիր. Զոր օր. Ոչ զոյ զօրուքիւն մեր=Մենք զօրութիւն չունինք: Աղ-ուեսուց որջ գուն=Աղուէսները որջ ունին: Կայ եւ իւն շս եղբայր=Ես շատ եղբայր ունիմ: Ոյր կայցե կերակուր=Ով որ կերակուր ունի: Դեռ աւուր շս կայ=Դեռ կանուխ է: Առաջի ճորս ուղղութիւն գայ = Ես անոր առջին ուղղութիւն գտայ: Էական բայը գնորիչ նշանա-

կութեամբ Աստուած է յերկինս եւ յերկրի—Աստուած երկինքի եւ երկրի մէջ կը գտնուի: Էին անդ ունակ ի հաւատացելոց—Հաւատացեալներէն ոմանք հոն էին կամ կը գտնուէին:

13. Ըստ սովորութեան.— Սովորութեան համեմատ, ըստ վերջահաշիւի եղակի եւ յոգնակի տրականով Հարնեւս, Հարնաձայն, Նման, Պիւ, Չափ կը նշանակէ:

Սիրելի ըստ անձին = Անձին պէս սիրել: Եղիցի ինձ ըստ բանի քուս = Թող ինձի ըսածիդ պէս ըլլայ: Ըստ կարի—Կարողութեան չափ:

14. Կարծեիք զմտանէ.— Բացառականը ի նախդիրէն զատ զ նախդիր ալ կ'առնու եւ կը նշանակէ վրայով: Բերականները զայն անուանած են Պատմական, ուրեմն աւարկայի մը, նիւթի մը եւն. վրայ խօսելու գազափարն յայտնող բայերը՝ պատմական խնդիր կ'առնուն. Չոր օր. ճառել զանեղեւորքն. զՍահակայ Սահակին վրայով. Չմտնական = Մտնական վրայով:

15. Խնդրել.— Բայ կը կոչուին լեզուին մէջ ա'յն բաները, որոնք Ըլլալու, Ընելու եւ Կրելու ո՛ր եւ է գործողութիւն մը կը յայտնեն. եթէ ըլլալ նշանակէ բայը չեզոք է, որուն գործողութիւնը ուրիշին վրայ չ'անցնիր. Օր. Յիսուս վեց աւուրք քան զՋասիկն եկն ի Բեքանիս—Յիսուս Չատիկէն վեց օր առաջ Բեքանիս եկաւ:

Եթէ ընել նշանակէ ներգործական է, որուն գործողութիւնը ուրիշին վրայ կ'անցնի. Օր. Կոչեա՛ զՍիմոն = Սիմոնը կանչէ՛. իսկ երբ կրել նշանակէ կրաւորական է, որուն գործողութիւնը ենթակային վրայ ուրիշէն կուգայ, Օր. Որդի սիրի ի հօրե—Տղան հօրմէն կը սիրուի:

Լծող.— Կը կոչուին բայերուն անորոշ դերբայներուն վերջաւորութիւնները, որոնք չորս են թուով, ել, իլ, ալ, ուլ կամ ձայնաւորի կարգով ալ, ել, իլ, ուլ, Այս իսկ է բայերուն լծողութիւն կոչուելուն պատճառը:



Ա. Լ Ծ Ո Ր Դ Ո Ի Թ Ի Ի Ն . — Ե Մ

Ներգործական բայ. Սիր-եմ Ա. արմաս. Սիր=սեր  
Բ. արմաս Սիր-եաց=Սիր-եց

Օսան. եղանակ ներկայ  
Եզ. Սիրեմ = Կը սիրեմ  
Սիրես = Կը սիրես  
Սիրէ = Կը սիրէ  
Յոգ. Սիրեմք = Կը սիրենք  
Սիրէք = Կը սիրէք  
Սիրեն = Կը սիրեն

Անցեալ Անկասար  
Եզ. Սիրէի = Կը սիրէի  
Սիրէիր = Կը սիրէիր  
Սիրէր = Կը սիրէր  
Յոգ. Սիրէաք = Կը սիրէիք  
Սիրէիք = Կը սիրէիք  
Սիրէին = Կը սիրէին

Անցեալ Կասարեալ  
Եզ. Սիրեցի = Սիրեցի  
Սիրեցիր = Սիրեցիր  
Սիրեաց = Սիրեց  
Յոգ. Սիրեցաք = Սիրեցինք  
Սիրեցիք = (ցէք) Սիրեցէք  
Սիրեցին = Սիրեցին

Ապառնի  
Եզ. Սիրեցից = Պիտի սիրեմ  
Սիրեցես = Պիտի սիրես

Սիրեսցէ = Պիտի սիրէ  
Յոգ. Սիրեսցուք = Պիտի սիրենք  
Սիրեսցիք = Պիտի սիրէք  
Սիրեսցեն = Պիտի սիրեն

Հրամայական եղանակ  
Եզ. Սիրեա(') = Սիրէ'  
Արգել. Մի' սիրեր = Մի' սիրեր  
Յոգ. Սիրեցէ'ք = Սիրեցէ'ք  
Արգել. Մի' սիրէք = Մի' սիրէք

Ստորադասական եղանակ  
Եզ. Սիրիցեմ = Սիրեմ  
Սիրիցես = Սիրես  
Սիրիցէ = Սիրէ  
Յոգ. Սիրիցեմք = Սիրենք  
Սիրիցէք = Սիրէք  
Սիրիցեն = Սիրենք

Անորից Դերբայ Սիրել=Սիրել  
Անցեալ Դերբայ  
Սիրեալ կամ Սիրեցեալ = Սիրած  
Ապառնի Դերբայ  
Սիրելոց = Սիրելու

Ա. Դիսող. — Ամէն բայի ապառնի յոգն. Բ. դէմ-  
քը յորդորական հրամայական ալ է, Սիրեսցի'ք = Սիրե-  
ցէք ալ կը նշանակէ, եթէ ք' վերջնելով ո՛ր աւելցնենք  
հրամայականին եզակին կը կազմուի, Սիրեսցի'ր = Սիրեա'  
ըսելու տեղ :

Բ. Դիսող. — Ա. լծորդութեան եզ. իր. ես՝ ձեռով  
հրամայական կ'ըլլան ընդհանրապէս կրատորակերպ չէ-  
զոքներ. Օր. ձեպիմ = ձեպեա՛. ձեմիմ = ձեմեա՛. Աշ-  
խատիմ = Աշխատեա՛ կամ աշխատեաց. Ողորմիմ = Ողոր-  
մեա՛. և հասարակ բայեր Օր. Շահիմ = Շահեա՛. Համա-  
րիմ = Համարեա՛. Դատիմ = Դատեա՛ .

**Գ. Դիտող.** Կանոնաւոր բայերը երկու արմատ ունին, Ա. արմատ և Բ. արմատ. առաջինը, անորոշ դերբային լծորդը վերջնելով առաջ կուգայ, Սօսիչ=խօս. Գրեչ=գր=գիր. Գործել=գործ. Աղաչ=աղ. Թողուչ=թող. իսկ երկրորդ արմատը կատարեալ եղակի Գ. դէմքէն կը կազմուի. Ա. և Բ. լծորդութեանց մէջ եց, եւ մասնիկներով. իսկ Գ. լծորդութեան մէջ աջ մասնիկով աղաց. իսկ Դ. լծորդութեան մէջ ի մասնիկով րողի:

Սիրեմին պէս կը խոնարհուին ին վերջաւորած ներգործական և չէզոք բայեր, այսպէս.

Ներգործական.— Գրեմ, Գրեցի, Գրեա՛ (եւ = ի սղուելով կ'ըլլայ եւ աշխարհաբարի մէջ Գրեա՛=գրե՛. Գործեմ, գործեցի, գործեա՛. Կատարեմ, կատարեցի, կատարեա՛. Ընտրեմ, ընտրեցի, ընտրեա՛. Շինեմ, շինեցի, շինեա՛ ելն.:

Զեզոք.— Աղաղակեմ, աղաղակեցի, աղաղակեա՛. Ժամանեմ, ժամանեցի, ժամանեա՛ ևլն.:

**Դիտող.**— Եւ, իւ, աւ, ոււ, չորս լծորդութիւններն ալ իրենց յաւելուածով ձեւերն ունին ն, ան, են, զ, նչ մասնիկներով: Առաջին լծորդութեան բաղադրեալ ձեւն է Տես-ան-եմ. առաջին արմատն է Տես, իսկ բաղադրեալ արմատն է Տեսան-եմ:

**Սահմ. եղանակ ներկայ**

(Գրաբար) (Աշխարհաբար)

Նզ. Տեսանեմ=կը տեսնեմ  
Տեսանես=կը տեսնես  
Տեսանէ =կը տեսնէ

Յոգ. Տեսանեմք=կը տեսնենք  
Տեսանեմք =կը տեսնեք  
Տեսանենք=կը տեսնենք

**Անցեալ կատարեալ**

Նզ. Տեսի = Տեսայ  
Տեսեր = Տեսար  
Տես = Տեսաւ (ե՛ կատարեալ ձեւացնող մասնիկով) Ստես

Յոգ. Տեսաք = Տեսանք  
Տեսեք = (իք) Տեսարք  
Տեսին = Տեսան

**Անցեալ Անկատար**

Նզ. Տեսանէի = կը տեսնէի  
Տեսանէիր = կը տեսնէիր  
Տեսանէր = կը տեսնէր

Յոգ. Տեսանէաք = կը տեսնէինք  
Տեսանէիք = կը տեսնէիք  
Տեսանէինք = կը տեսնէինք

**Ապառնի**

Նզ. Տեսից = Գիտի տեսնեմ  
Տեսցես = Գիտի տեսնես  
Տեսցէ = Գիտի տեսնէ

Յոգ. Տեսցաք = Գիտի տեսնենք  
Տեսցիք = Գիտի տեսնեք  
Տեսցին = Գիտի տեսնենք

Հրամայական եղանակ

- Ել. Տե՛ս = Տե՛ս (Թէ՛ արմատ,  
Թէ կատարեալ Գ. գէմք  
և Թէ հրամայական)
- Յգ. Տեւե՛ք = Տեւեք  
Մի՛ սեսանէք = Մի՛ տեսնէք

Ստորագասական եղանակ

- Ել. Տեսանիցեմ = Տեսնեմ  
Տեսանիցես = Տեսնես  
Տեսանիցէ = Տեսնէ

- Թգ. Տեսանիցեմք = Տեսնեք  
Տեսանիցեք = Տեսնէք  
Տեսանիցեն = Տեսնեն

Անորիշ Դերբայ

Տեսանել = Տեսնել

Անցեալ Դերբայ

Տեսեալ = Տեսած

Ապառնի Դերբայ

Տեսանելոց = Տեսնելու

Դիտելի է որ Հարկանել (= զարնել) բայը իր կ գի-  
րը կը կորսնցնէ արմատական ժամանակներու մէջ՝ որոնք  
են կատարեալ, Հարի, հարեր, հար կամ եհար, հարսք,  
հարեք, հարիս. Ապառնի. — Հարից. Հրամ. — Հա՛ր. Անց.  
ընդ. — Հարեալ:

Տեսանեմին պէս կը խոնարհուին ան բաղադրիչ  
ժամանակով թէ՛ ներգործական և թէ՛ շէզոք բայերը:

Ներգործական. — Գտանել արմ. գիտ, կատարեալ  
գտի, գիտ, կամ եգիտ. անց, գտեալ. Դիզանել, արմ. դիզ  
կատարեալ, դիզի, դիզ. անց. դիզեալ. Հասանել (կտրել)  
արմ. — հաս, կտր, — հասի. հաս կամ եհաս. անց. — հասեալ:  
Հարցանել արմ. հարց. կատարեալ հարցի, հարց կամ եհարց.  
անց. — հարցեալ. Սպանանել արմ. — սպան, կատարեալ  
սպանի. հրամ. սպան. անց. սպանեալ.

Չեզոք. — Ելանել արմ. ել, ելի, ել, հրամ, ե՛լ,  
անց. ելեալ. Անցանել արմ. անց, կտր. անցի, անց կամ  
եանց. անց. անցեալ. Մտանել արմ. մտ. կտր. մտ  
կամ եմտ. հրամ. մտ. անց. մտեալ.

Դիտող. — Տեսանել-ին պէս կը խոնարհուին եւ վեր-  
ջաւորող հետեւեալ բայերը, ածել (= Բերել), Բերնել  
հանել.

Կաստրեալ. — Ածի, ածեր, ած կամ հած, ածսք,  
ածեք, ածիս. Բերի, բերեր, բեր կամ եբեր, բերսք, բե-  
րիք, բերիս. Հանի, հաներ, հան կամ եհան; հանսք,  
հանեք, հանիս:

Ապառնի. — Ածից: Բերից. Հանից.

Հրամայական. — Ա՛ծ. Բե՛ր. Հա՛ն.

Տեսանել-ին պէս կը խոնարհուին նաև ուզանել-ով  
 կազմուած անցողական բայերը , որոնք միայն հրամա-  
 յականի մէջ կը տարբերին , այսպէս . Մասուզանել , հրմ.  
 մասո՛ . Չորացուզանել , զորացո՛ , Յուզանել , հրմ. ցո՛ցց .  
 Մասուզանել (=մօտ կը բերեմ , կը ներկայացնեմ ,  
 կուտամ) արմ. մասոյց .

Սահմ. եղանակ ներկայ	Մասուցում—չիք—ցեմ
Մասուցանեմ—ես—է	Հրամայական եղանակ, Մասո՛
Մասուցանեմք—էք—եմ	Արգելական
Անցեալ Անկատար	Մի՛ մասուցանէր , Մասուցէ՛ք
Մասուցանէի—էիր—էր	Մի՛ մասուցանէի
Մասուցանէաք—էիք—էիք	Ստորագոյսական եղանակ
Անցեալ Կատարեալ	Մասուցանիցեմ—իցես—իցէ
Մասուցի—ցեր—սոյց	Մասուցանիցեմք—իցէք—իցեմ
Մասուցաք—էք—իք	Անորիւ Դերբայ Մասուցանել
Ապառնի	Անց. ընդ. Մասուցեալ
Մասուցից—սուս (ց=ս) ցես—ցէ	Ապառնի ընդ. Մասուցանելոց

Դիտող . — Այսօրինակ բայեր , պարզ ժամանակներ-  
 քուն մէջ (կատարեալ , ապառնի , հրամայական և անցեալ  
 ընդունելութեան) ան մասնիկը կը կորսնցնեն :

Կորնչիմ (կորսուիլ) արմ. կոր , անցողական ձեւին  
 մէջ ուզանել-ին ց՛ գիրը ս-ի փոխուած է , այսպէս . կորու-  
 սանեմ , իսկ՝ Փլանիմ , արմ. փուլ , ց՛ գիրը գ-ի փոխ-  
 ուած է , Փլուզանել=Փլցընել :

Դիտելի է որ Գոհանալ , Կախել , Ունել (=Բռնել) ,  
 Բուռն հարկանել (բռնել , քաշել) բայերը զ նախդրիւ  
 քաղաքական բնութեան խնդիր կ'առնուն , Չոր օր . Գո-  
 հանալ զիւն=Բեզի շնորհակալ եմ , Գոհանալ զԱստուծոյ  
 =Աստուծոյ շնորհակալ ըլլալ , Կախել զիսպսեհ=Փայտէն  
 կախել , Ունել զձեռանեհ=Ձեռքէն բռնել , Բուռն հարկա-  
 նել զհանդերձից=Չգետտներէն բռնել , քաշել :

14. Եկին իբրև աւուր միոյ ճանապարհ . — Երբ  
 օրուան մը ճամբայ եկան : Չափ ցուցնող բառերն ալ  
 սեռական հոլով բնութեան խնդիր կը դրուին . — Աւուր միոյ

ճանապարհ, սեռական բնութեան խնդիր է, եկին չէզոք բային: Բարձրութիւն նորա եր վեշտասան կանգնոյ=Անոր բարձրութիւնը տասնըվեց կանգուն էր:

Սեռական բնութեան խնդիր կառնուն նաև ծախշու, գնեղու նշանակութիւն ունեցող բայերը, Գնել, Վաճառել. Առնուլ, Տալ, Ստանալ, Վարձել, Սակ արկանել (=Սակարկել). Զոր օր. Դնեաց յիսուն դահեկանի=Յիսուն դահեկանի գնեց. Վաճառեցին զՅովսէփի քան դահեկանի ծախեցին. Ո՛չ ապաքէն երկու ճնճղուկք դանկի միոջ վաճառին = Զէ՛ մի (=մի՛ թէ) որ երկու ճնճղուկ մէկ դանկի կը ծախուին: Առին զմրցանակս զայս չորից դահեկանաց = Այս մրցանակը չորս դահեկանի առին: Ո՛չ դահեկանի միոջ սակարկեբը ընդիս=Հետս մէկ դահեկանի չի սակարկեցիր:

Բացառականով ալ կարելի է ըսել Առի զմատենսս զայս յերից դահեկանաց, բայց բացառականէն աւելի գործածական է ընդ-ով սեռականը, որ փոխանակ, ճեղք կը նշանակէ՝ Ընդ երից դահեկանաց=Երեք դահեկանի փոխան: Վաճառէ զժառայս իւր ընդ յիսուն դահեկանի=Իր ծառաները յիսուն դահեկանի փոխան կը ծախէ:

Տարիք ցուցնող բառերն ալ սեռական հոշով բնութեան խնդիր կը դրուին: Զոր օր. էր արևաց քանից=Քսան տարեկան էր: էր արևաց վեշտասանից=Տասնըվեց տարեկան էր: Նոյ էր արևաց վեց հարիւրոց=Նոյ վեց հարիւր տարու էր: Այս օրինակներէն այլեւս դիւրին է հետեւցնել որ, բուսական ածականները, թուով և հոլովով կը համաձայնին իրենց գոյականին հետ:

16. Յես երից աւուրց = Երեք օրէ կտք, յես նախադրութիւն մըն է սեռական խնդիր առնող երից աւուրց խնդիր է յես նախադրութեան, իսկ երից թուական ածական է աւուրց-ին թուով և հոլովով համաձայնած է գոյականին հետ:

17. Հարցանեք զնոսա=Անոնց կը հարցնէր, Հարցանել՝ որ ց նախդրիւ բնութեան խնդիր կառնու, երբեմն հայցական ալ կրնայ առնուլ: (և նոցա, և ի նոցանէ):

18. Զարմանային ամենեքեան ընդ իմաստութիւն եւ ընդ պատասխանիս նորա=Ամէնքն ալ անոր իմաստութեան և տուած պատասխաններուն վրայ կը զարմանային:

Չարեանաւ, Խնդաւ, Տրսնիւ, Խոռովիւ, ցաւ Է, անորոշ հայց. բնութեան խնդիր կ'առնուն, իբր չէղոք բայեր. իսկ իրենց կիրք և նախանձ յայտնող իմաստը Կրարարի մէջ ընդ նախորդիւ խնդրով կ'արտայայտուի, ինչ որ Աշխարհարարի մէջ ընդհանրապէս վրայ նշանակութեամբ կը թարգմանուի, Օր. Չարմանային ընդ իմաստութիւն նորա, Չարմանային ընդ յամեն նորա, Անոր ուշանալուն վրայ կը զարմանային, Մի' նախանձիր ընդ չարս = Չարերուն վրայ մի' նախանձիր և ըն' նախանձիւ ընդ թարխս, ընդ չարս = նախանձիւ աղէկներուն և չարերուն վրայ : Խոռովիւ, ընդոստնուլ ընդ բանսն = Այս խօսքերուն վրայ խոռովիւ և վեր ցատկել : Յաւ Է ինձ ընդ այն = Ես այն բանին վրայ կը ցաւիմ :

Իիս. — Նկատելի է որ, Սիրել և իր նականիչն Ասել. թէ և անժխտելիորէն կիրք կամ բաղձանք մը արտայայտեն — սակայն ներգործական ըլլալնուն համար է որ միշտ հայցական սեռի խնդիր կը պահանջեն. օր. Սիրեսցես զընկեր քո, և ատեսցես զքննալին քո, և աշխարհարար կը թարգմանուի սիրել կամ ատել մէկը, իսկ եթէ անունն է, սիրել բան մը :

19. Ասէ ցնոսա = Անոնց կ'ըսէ, ց նախորդիւ արական բնութեան խնդիր (= Անորոշ հայցական բնութեան խնդիր) կ'առնուն, Ասել. Տաւ, Հարցանել բայերը, Ես (տուաւ) ցորդին, ցնայր իւր, ցնչակս, ցնոսա = Որդւոյն, մօրը, մշակներուն և անոնց տուաւ, Եհարց ցնա = Անոր հարցուց, Հարցին ցնա, ցորս եւ սստ = Հարցուցին անոր, որոնց կ'ըսէր ալ : Հարցանել արական և բացառական ալ կ'առնու, օր. Հարցանել ևոցա, ի ևոցանկ :

## Բ Ա Ռ Ք

Մանուիկ, մանկան, մանկունք, մանկանց, Գ. Տղեկ, Ծառայ : Ըստ, նիս. ըստ, պէս, համեմատ, 2. Մէկալ կողմը, Անդին, Դուրս, Հակառակ 3. Ետքը, Ետեւէն : Խնդրել, խնդրեցի. ն. Փնտտել, Հարցնել, Ազատել : Յեւ, նիս. Ետքը, Ետեւ, Վերջը, Ետեւէն : Ամենեման, Ամենեմին, — ցուն, — ցունց, — անբումբք, Չանկնեսին, — եան, Գ. Ամէնքն ալ :

**Պատասխանի, —ւոյ—, նեաց, Գ. Պատասխան :**  
**Տալ, Առնեղ Պատասխանի. ն. Պատասխան տալ, —նել :**  
**Սխնչանամ, —ացայ, Չ. զարմանալ, հիանալ, ապշիլ :**  
**Տառապիմ, —եցայ, չ, նեղութիւն կրել, Տանջուիլ :**  
**Չի—Մկ. Ինչո՞ւ : Չի—ած. Գ. Ի՞նչ, Ի՞նչ բան :**

Գ. Մկրտութիւն Տեառն

1. Գայ Յիսուս ի Դալիլէէ ի Յորդանան առ Յովհաննէս. = Յիսուս Գալիլիայէն Յովհաննէսին (քով) Կուգայ : Առ նախգիրը անորոշ հայցականով (եզակի ու յոգնակի) գէպի անձ մը շարժում կը ցուցնէ, իսկ անշունչ առարկաներու համար ի՞նչ անորոշ հայցական կը գրուի անխտիր. Օր. Դարձուցանեղ զխաւար ի յոյս = Խաւարը լոյսի փոխարկել : Առ Յովհաննէս = Յովհաննէսին քով : Եկայք առ իս = (դէպի) Ինձի եկէք :

Մատենան (մատչիլ, մտենալ. կար. Մատենայ, մատենար, մատենալ, մատենաք, մատենայք, մատենակ) առ Փարիսեցիս = Փարիսեցիներուն քով մտեցան : Գրեաց քուղք առ եղբայր ին = Եղբորս թուղթ գրեց : Համար նշանակութեամբ ալ կը գործածուի. Չոր օր. Առ նախանձ = Նախանձու համար :

2. Ել (ելալ) վաղվաղակի ի ջրոյ անձի. — Ասի, Անձի, Այսի տեղական մակբայները, Այս, Այդ, Այն. ցուցական ածականներուն տեղ կը գործածուին բացառական հոլովին քով, և անփոփոխ կը մնան : Ի ջրոյ անձի = Ի ջրոյն յայնմանէ. — Մեկնեցաւ ի քաղաք ասի = Ի քաղաքս յայնմանէ : Ել յերկր այսի = Ել յերկրոյ յայդմանէ : Աս, Անդ տեղական մակբայները զազարում ցուցնող բայերու խնդրին հետ, Այս, Այդ, Այն, ցուցական ածականներուն տեղ կը գործածուին : Նսէր ի սան անդ = փոխանակ ըսելու, Ի սանն յայնմիկ. Կային յեկեղեցւոջ անդ = փոխանակ ըսելու. Յեկեղեցւոջն յայնմիկ :

Այս, Անդ, Այդ, շարժում ցուցնող բային խնդրին հետ կը գործածուին, Այս, Այդ, Այն ցուցական ածականներուն տեղ :

Եկին ի ֆաղաֆ այս փոխանակ ըսելու Եկին ի քաղաքս յայս  
 Գնաց ի տուն անոր » » Գնաց ի տունն յայն  
 Երբ ի հրապարակ այոր » » Երթ ի հրապարակդ յայդ

Աստ հասան և ըն. Աշխարհաբար ձեւը Գրաբարի մէջ  
 մուծանել ծիծաղելի և դատապարտելի է յաւէտ: Այս  
 օրինակներէն կը հետեւի սա կանոնը թէ՛ երբ բուն ցու-  
 ցականը գործածուի, գոյականին ծայրը ս, դ, ն, յօղե-  
 ըը կը դրուին անխտիր. ս=այս, դ=այդ. ն=այն:

3. Իբեւ զաղաւնի. = Աղաւնիի պէս. իբրեւ զ...  
 Հայցական խնդիր առնող նախադրութիւն մըն է և հա-  
 շատարութիւն, նմանութիւն կը ցուցնէ. իսկ քան զ,  
 տարբերութիւն: Սիրեմ զայս քան զքեզ = Ասիկա քեզմէ  
 աւելի կը սիրեմ: Որպէս զարեգակն = Արեւու պէս: Հայ-  
 ցական առնող նախադրութիւններն են, Զոր օր. Ի վեր  
 քան զմարդ, Ի վեր քան զմիսս եւ զխորհուրդս = Մարդէն  
 ալ վեր, միտքէն և խորհուրդէն ալ բարձր: Նախ քան  
 զանձնայն = Ամէնէն առաջ: Յառաջ քան զարեւէ անուն  
 նորս = Անոր անունը արեւէն ալ առաջ է: Գեր քան զա-  
 մենայն, Գեր զհոշակեղին եւ զվեհն անձնայն ֆերթողաց՝  
 Հոմերոս = Ամէնէն աւելի բարձր բոլոր բանաստեղծներէն  
 անուանի ու վեհ Հոմերոսէն աւելի կամ վեր:

4. Ընդ որ հանեցայ. = Որուն համար (իմ վրայ) ես  
 հաճութիւն տուի. Հաճիլ, Հաւանիլ այս օրինակ բայեր  
 ընդ նախդրիւ անորոջ հայցական բնութեան խնդիր կ'ու-  
 գեն, ինչպէս տեսանք վերը:

Հ Ա Ճ Ի Մ. — Բ. Լ Ծ Ո Ր Գ Ո Ի Թ Ի Ի Ն (Ի Մ)

Ներգործական բայ Խօսիմ Ա. արմատն է Խօս.

Բ. արմատն է Խօսեց (եաց)

Սահմ. Եղանակ Ներկայ		Անցեալ Անկատար	
Եզ.	Խօսիմ = Կը խօսիմ	Եզ.	Խօսեի = Կը խօսէի ևլն.
	Խօսիս = Կը խօսիս		Խօսէիր =
	Խօսի = Կը խօսի		Խօսէր =
Յոգ.	Խօսիմք = Կը խօսինք	Յոգ.	Խօսեաք =
	Խօսիք = Կը խօսիք		Խօսէիք =
	Խօսին = Կը խօսին		Խօսէին =

Անցեալ Կասարեալ  
 Եղ. Խօսեցայ = Խօսեցայ և Ն.  
 Խօսեցար =  
 Խօսեցաւ =  
 Յգ. Խօսեցաք =  
 Խօսեցայք =  
 Խօսեցան =

Ապառնի  
 Եղ. Խօսեցայց = Չիտի Խօսիմ  
 Խօսեցցիս = Չիտի Խօսիս  
 Խօսեցցի = Չիտի Խօսի  
 Յգ. Խօսեցցիք = Չիտի Խօսիք  
 Խօսեցցիք = Չիտի Խօսիք  
 Խօսեցցին = Չիտի Խօսին

Հրամայական Եղանակ  
 Եղ. Խօսեա՛ց = Խօսե՛ Կի՛ Խօսիր

Այս ձեւով կր խոնարհուին ին Բ. Լծորդութեան բողոք բայերը, Ապրիլ, Բնակիլ, Դասիլ, Կանիլ, Բարբառիլ, Սոսոկանիլ, Համարիլ, Աշխատիլ, Դադարիլ եւ Ն.:

Դիտ. Կանիլ ներգործական բայը կրաւորակերպ խոնարհում ունենալուն միակ պատճառաւ հասարակ բայերու կարգ դասուած է:

(ԻՄ) Բ. ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ ԱԾԱՆՅԵԱԼ ՁԵՒՐ

Ներգործական բայ Ուսանիլ, արմատ ուս (=ուս)

Սահմ. Եղանակ Ներկայ  
 Եղ. Ուսանիմ  
 Ուսանիս  
 Ուսանիր  
 Յգ. Ուսանիմք  
 Ուսանիք  
 Ուսանիրք

Անցեալ Անկատար  
 Եղ. Ուսանէի  
 Ուսանէիր  
 Ուսանէր  
 Յգ. Ուսանէաք

Յգ. Խօսեցարուք = Խօսեցէք  
 Մի՛ Խօսիք

Ստորդասական Եղանակ

Եղ. Խօսիցիմ = (որ) Խօսիմ  
 Խօսիցիս = Խօսիս  
 Խօսիցի = Խօսի  
 Յգ. Խօսիցիմք = Խօսիք  
 Խօսիցիք = Խօսիք  
 Խօսիցին = Խօսին

Անորից Դերբայ

Խօսիլ = Խօսիլ

Անց. Բնդ. Խօսեալ

Ապառնի Ընդ. Խօսելոց

Այս ձեւով կր խոնարհուին ին Բ. Լծորդութեան բողոք բայերը, Ապրիլ, Բնակիլ, Դասիլ, Կանիլ, Բարբառիլ, Սոսոկանիլ, Համարիլ, Աշխատիլ, Դադարիլ եւ Ն.:

Դիտ. Կանիլ ներգործական բայը կրաւորակերպ խոնարհում ունենալուն միակ պատճառաւ հասարակ բայերու կարգ դասուած է:

Ուսանէիք  
 Ուսանէինք

Անցեալ Կատարեալ  
 Եղ. Ուսայ  
 Ուսար  
 Ուսաւ  
 Յգ. Ուսաք  
 Ուսարք  
 Ուսանք

Ապառնի

Եղ. Ուսայց

	Ուսցիս Ուսցի	Ստորադասական Եղանակ
Յ-դ.	Ուսցուի Ուսցիի Ուսցին	Եղ. Ուսանիցիմ Ուսանիցիս Ուսանիցի Յ-դ. Ուսանիցիմի Ուսանիցիի Ուսանիցին
	Հրամայական Եղանակ	
Եղ.	Ուսիր = Սորվէ՛	Անորիւ Դերբայ. Ուսանիլ
	Մի՛ ուսանիր	Անց. Ընդ. Ուսեսլ
Յ-դ.	Ուսարուի = Սորվեցէ՛ք	Ապառնի Ընդ. Ուսանելոց
	Մի՛ ուսանիի	

Այսպէս կը խոնարհուին անիր՝ ով բայերը. Մնանի ծնայ, ծնի՛ր. Սկսանիւն, սկսայ, սկսի՛ր. Բռասանիւն, բռայ, բռասի՛ր, Մեռանիւն, մեռայ, մեռի՛ր. Անկանիւն անկայ, անկի՛ր. բացառաբար անկերուի (փոխանակ ա կարուի). Ազանիւն (իջեւանիւ), ազայ, ազի՛ր. յոգնակի՛ն ազերուի (փոխանակ ազարուի-ի). Անց. Ընդ. Ազուցես դուն ուրեք գործածուած :

Նստիւն բայն ալ անիր-ի ձեւով կը խոնարհու նսայ, նսայց :

Աննն ձեւով կը խոնարհուին, չ, նչ, անչ, ն մտ նիկներով կազմուած բայերը.— Թախչիւն (պահուրտիլ Թոչիւն, Մասչիւն (=մօտենալ), Երկնչիւն, Հանգչի Մարնչիւն (=կուուիլ), Կորնչիւն (=կորսուիլ) : Նոյնպէ Ճասնուլ (բարկանալ), Թախնուլ (պահուրտիլ), Զար նուլ (արթննալ) բայերը Թախչիւն-ին պէս են :

Թախչիւն Ա. արմատ Թախ. Բ. արմատ Թախի Կոր.  
Թախ-իւայ=Թախնայ

	Սահմ. Եղանակ Ներկայ	Անցեալ Անկատար
Եղ.	Թախչիմ Թախչիս Թախչի	Եղ. Թախչէի Թախչէիր Թախչէր
Յ-դ.	Թախչիմի Թախչիի Թախչին	Յ-դ. Թախչէամ Թախչէիի Թախչէին

	Անցեալ Կասարեալ	Յօդ. Քափերուփ, Մի' քաֆչիփ
Եզ.	Քափեայ Քափեար Քափեաւ	Ստորդասական Եղանակ
Յօդ.	Քափեափ Քափեայփ Քափեանն	Եզ. Քափչիցիմ Քափչիցիս Քափչիցի
	Ապառնի	Յօդ. Քափչիցիմփ Քափչիցիփ Քափչիցիմն
Եզ.	Քափեայց Քափիցես Քափիցէ	Անորիւ Դերբայ. Քափչիլ
Յօդ.	Քափիցուփ Քափիցիփ Քափիցենն	Անց. Ընդ. Քափուցեալ
	Հրամայական Եղանակ	(Անցողականին անցեալն է գործածուած Քափուցանեն Անց. Ընդ. Քափուցեալ)
Եզ.	Քափի'ր Մի' քաֆչիլ	Ապառնի Ընդ. Քափչելոց

Գրեթէ այսպէս կը խոնարհուի Մեղանչեմ, Կտր.— Մեղայ, ար, աւ, ափ. Ապառնի.— Մեղայց, Մեղիցես, Մեղիցէ, ցուփ, ջիփ, ցեն: Հրմ.— Մեղիլ, Մեղարուփ: Անց. ընդ.— Մեղուցեալ:

Ա. Լծորդութեան ամանց ձեւէն Յանցանել բայն ալ այսպէս կը խոնարհուի. Կտր.— Յանցեայ, ար, աւ, ափ, այփ, ան: Ապառնի.— Յանցեայց, իցն, իցէ. իցուփ, իջիփ, իցեն: Հրմ.— Յանցի'ր, Յանցերուփ, անց. Յանցուցեալ կամ Յանցեալ (Յանցել պարզ ձեւէն): Եոյնպէս Չարքնում, Չարքեայ, Հրմ.— Չարքիլ, Չարքիփ: Անց. Չարքուցեալ: Ապառնի ընդ.— Չարքելոց: Եղնում, Եղուայ, Հրմ. Եղուի'ր, Եղուարուփ: Անց.— Եղուեալ աւ Եղելոց: Քաղցնում (=անօթենալ), Քաղցեայ, ար, աւ, ափ, այփ, ան, Քաղցիլ, Քաղցեալ ևն.:

Բ Ա Ռ Ք

Արգելում.— Կտ. Արգելի. ն. արգելք ըլլալ: Թոյլ տալ.— Թոյլ նս. ն. Թուլատրել, Թողուլ, Լնում.— Լցի. ն. Լեցնել, Լնցնել, գլուխ հանել. Արդարութիւն.— Արդարութիւն Գ. արդար ըլլալ, իրաւունք, իրաւունքի դէմ բան մը չգործել: Իրքն.— մկ. Երբոր

Իբրեւ զ.— նիւ. Պէս, նման, հաւասար :  
Վաղվաղակի.— մկ. Շուտով, Անմիջապէս  
Հաճիմ=Հաճեցայ.— Չ. Հաւանիլ, ուզել, հաւնիլ.  
Անկի.— մկ. Անկէ. ն. դիմորոշ յողին և այն ցու—  
ցական ածականին տեղ կը գործածուի :

Գ. Յիսուս վարի յանապաս փորձիլ ի սասանայի

1. Փորձիլ= Փորձուիլ Ա. եւ լծորդութեան վերա—  
բերեալ ներգործական բայ մը կրաւորականի վերածելու  
համար, ե=ը ի—ի փոխելու է, Սիրել=սիրիլ, Նուաճել  
=նուաճիլ, =ուիլ և ինչ. :

2. Քարինքս այսոբիք= Այս քարերը.— Յուցական  
ածականները այս, այդ. այն իրենց գոյականին հետ  
թուով և հոլովով կը համաձայնին. այսպէս երկու ձև հո—  
լովում ունին մին կարճ, միւսը երկար : Կարճ ձևը.— Ո.  
այս, Հ. զայս, Ս. այս, Տ. այս, Բ. յայս, Գ. այսու :  
Յոգն. այս (անփոփոխ է այսք = դեւեր ըսել կ'ըլլայ)  
Հ. զԱյս (անփոփոխ նոյնպէս) Ս. այսց. Տ. այսց. Բ.  
յայսց. Գ. այսու (անփոփոխ) : Կարճ հոլովումը գոյակա—  
նէ առաջ կը դրուի միշտ, իսկ երկայն ձևը գոյակա—  
նէն յաճախ ետքը կը դրուի : Ո. Այս, Ս. այսորիկ, Տ.  
այսմիկ, Բ. յայսմանկ, Գ. յայտիկ, Յոգն. Այսոբիկ, Հ. զայսոբիկ,  
Ս. և Տ. այսոցիկ, Բ. յայսցանկ, Գ. այսոբիք : Այսպէս կը  
հոլովուին Այդ, Այն, եթէ առանձին գործածուին յոգն.  
ուղղականին մէջ Այսք, այդք, այնք կրնան ըլլալ : Ինք.  
այք, եայք, անք, իք, ոյք, ունք յոգնաձայն մասնիկներով  
յոգնակի կ'ըլլան հոյլ մը անուններ առանց ձայնաւորի  
փոփոխման օրէնքներէն ու կանոնաւոր հոլովումներու  
հնգեակ ձևերէն չեղելու. Այսպէս.— Այք, եայք, Աղա—  
խիկ, աղախնոյ : Յոգն. Աղախնայք կամ աղախնեայք, Ս.  
աղախնայց, աղախնոք կամ եօք : Այգեասն, այգեասնեայք :  
Արուարձան, արուարձանեայք : Դարբին, Դարբնայք : Հա—  
գապ, հաղապայք և ինչ. : Ան-ով Սերմն, սերման, սեր—  
մանց, սերմանք : Երագաղ, երագաղսն (ցանց) : Մեղ,  
մեղանք : Մեղմեղ, մեղմեղանք (կեղծաւոր, սասանայ,  
Բ. հիլէպալըզ, շէլթանըզ) : Յանգանք, — լու, — լուանք :  
Նուեր, նուիրանք (է=ի) և ինչ. : Իք կամ ինք.— Կարծ,  
կարծիք, եաց, եօք : Արնս, արնսիք կամ արնսիք



Աւանդ, աւանդիք. Աւետ, աւետիք: Դրուս, դրուստիք:  
 Երաշխ, երաշխիք: Խոսոյս, խոսոյսիք: Մանրաբեռն,  
 Ճանրաբեռնիք (փոխանակ ծանրաբեռնիքի): Պարս, պար-  
 սիք: Սերմն, սերմանիք, ւակ: Օրհն(=օրհնութիւն), օրհնիք:  
 Տոկոս, տոկոսիք: Քար, քարիք: Ոյլ-ով. — (Գ. հոլովման  
 գէս. ի) Բաշխ, բաշխոյք, Բարք, բարոյք: Ունք-ով. —  
 Սան, սանու, սանուիք, սանուց, սանուք: Անոյշ, անու-  
 յուիք: Առիծ, առիծուիք: Եպիսկոպոս, եպիսկոպոսուիք:  
 Երագ, երագուիք: Խաչանս, խաչանանուիք: Խոնջան,  
 Խոնջանուիք: Հերետիկոս, հերետիկոսուիք: Հողմն, հող-  
 մուիք: Զագ, ձագուիք: Զրագ, ճրագուիք: Նուագ, նուա-  
 յուիք. Ռուն, որունիք: Պատերազմ, պատերազմուիք: Սար-  
 յաւագ, սարկաւագուիք, սարկաւագաց: Յից, ցցուիք: Մկան,  
 մկանուիք: Պառաւ, պառաւուիք: Զիրան, ճիրանուիք,  
 ճիրանանց, ճիրանաւքիք:

3. Ձի մի երբեք զգարի հարցես զոսն ին. — Հին  
 Հայերէնի մէջ միայն Տրական հոլովն է որ ամէն նախ-  
 դիր կրնայ առնել. հոս՝ զգարի հարկանել=քարին զար-  
 նել: Աշխարհաբարի թարգմանութենէն դիւրաւ կը հաս-  
 կըցուի տրական ըլլալը, զոր անուանին Գարագաշ իր  
 Դպրութեան մէջ զնախդրիւ սեռական կ'ընդունին (Տե՛ս  
 Դպրութիւն էջ 167 յօդուած 415), ինչպէս նաև՝ մե-  
 ծանուն Այտրնեան (Տե՛ս հայ Գրաբար Գերականութիւն,  
 1885, էջ 241): Զարկան զգեսնի=Գետինին կամ գետի-  
 նը զարնուեցան: Այս օրինակներէն պարզ կ'երեւայ որ  
 Հարկանել, Արկանել բայերը զնախդրիւ բնութեան խըն-  
 դիր կ'ուզեն, զնախդրիւ տրականով:

Դիտելի է որ, երբ Հարկանել (=զարնել թ. չարկմագ)  
 նշանակէ, զով տրական կ'առնու. իսկ երբ (=անցընել թ.  
 ստփլամագ նշանակէ ի նախդրիւ տրական և ոչ թէ սե-  
 աական կ'առնու. Օր. Մի ոմն ի գիճուորացն առ սպունգ  
 ի քացախով եւ հարեալ յեղեգան՝ ետ ըմպել Յիսուսի=  
 Եղեգին ծայր անցուցած խմելու տուաւ, (Տե՛ս Այտրնե-  
 ան, նոյն էջ 241) կամ Յիսուսի տուաւ որ խմէ.  
 Գարձեայ տրական այս ի նմա հարկանի:

4. Ի լեառն մի բարձր յոյժ= Շատ բարձր լեռ մը.  
 — Մակբայ մը ոչ թէ միայն բայի մը գործողութեան  
 կերպը կամ եղանակը կը յայտնէ, այլև՝ ածականի մը

խմաստը աւելի կ'ընդլայնէ ու կը սաստկացնէ. Յոյժ բարձր = յոյժ մակբայը բարձր ածականինն է :

Բ Ա Ռ Ք

Վարիւն. — Վարեցայ. Չ. Քչուիլ, Վարուիլ, տարուիլ, գործածուիլ. Տիւ = Տուրնիքան. — Գ. Ցերեկ Բաղցնոււմ = Բաղցեայ. — Չ. Անօթենայ կեամ = Լեցի, կեաց, կեցեալ. Չ. Ապրիլ Ածեմ = ծի. — ած. ն. Բերել, տանիլ (տովորաբար շնչաւոր բան մը) : Ի վերայ. — նիս. Վրայ կաղուցանեմ = ուցի. — ն. կեցնել, կանգնել, կարգել : Արկանեմ = արկի. — ն. նետել, Ձգել, Լեցնել, Թափել Աստի եւ անտի. — մկ. Ասկէ, Անկէ, Ասդին, Անդին Ի վայր. — մկ. նիս. Վար, Վասն. — նիս. Համար : Բառնամ = քարձի, քարձ. — ն. Վեր վերցնել, Տանիլ, Շալկել : Հարկանեմ = հարի, հար. ն. Չարնել Յայնժամ. — մկ. Այն ատեն Յեսս. — մկ. Ետեւը : Անկանիւն = անկայ, անկիր. Չ. Իյնայ : Մաջիլ = մասեայ, մասուցեալ. Չ. Մտտենայ Պաշտեմ = պաշտեցի. — ն. Սպասաւորել, Մտաայութիւն ընել :

Յ. Սերն Ի Քրիստոնէութեան

1. Բարեկամաց ձերոց. — Իմ' (եւ-էն), քո' (դու-էն), մեր' (մեք-էն), ձեր' (դուք-էն), իւր' ուղղ. և հայց. չունի(\*) անձնական դերանուններուն սեռականներէն կազմուած են թէև, բայց իբրև ուղղական կը հոյովուին : Ո. Իմ Հ. զիւմ Ս. իմոյ Տ. իմում Բ. յիմև Գ. իմով Յոգն. Ո. Իմք Հ. զիւս Ս. իմոց Տ. իմոց Բ. յիմոց Գ. իմովք : Յոգնակի ուղղականի մէջ ք, իսկ հայցականին

(\*) Իւր, պակասաւորհոյովում ունի, որունՈ. և Հ. — (Չունի) — Ս. Տ. իւր կամ իւրեան Բ. յիւրմէ. Գ. իւրև, իւրեաւ, իւրեամբ, երեակ ձեռնորով, Յոգնակի — Ո. Իւրեանք. Հ. զիւրեանս. Ս. Տ. Իւրեանց. Բ. յիւրեանց. Գ. իւրեամբք. Յոգնակիին մէջ պակասաւոր չէ իւր (= ինքն) անձնական գերանունը, իսկ ստացական ած. իւր կը հոյովուի առանց պակասորդ հոյովման. այսպէս. Ո. իւր. Հ. զիւր. Ս. իւրոյ. Տ. իւրում. Բ. յիւրմէ. Գ. իւրով. Յոգն. իւրք Հ. զիւրս, Ս. Տ. Իւրոց. Գ. Իւրովք :

մէջ ա կը դրուի, երբ առանց գոյականի գործածուին : Մեր, ձեր, իւր ճիշտ այս ձեւով կը հոլովուին : Ստացական անձականները գոյականէն թէ՛ առաջ և թէ՛ ետք դրուելով թուով և հոլովով կը համաձայնին : Բարեկամք ձեր (ձեր, յոգնակիրին մէջ ք կ'առնէ մինակ եղած ատեն, նոյնպէս ձեր, իւր, — քո, որուն յոգն. ուղղականը կ'ըլլայ քոյք, առանց գոյականի եղած ատեն) : Բարեկամաց ձերոց, ձերոց անձականն է բարեկամաց-ին, որուն համաձայնած է թուով և հոլովով :

2. Արդ եղերուք դուք կատարեալք = Դուք կատարեալ եղէք. — Էական բայի անբայինն ինչ կամ ո՞վ ըլլալը յայտնող բառին ստորագելի կ'ըսուի : Պարզ նախադասութեանց մէջ հետեւեալ կարգով կը դրուի. առաջ՝ ստորագելին, յետոյ՝ բայը, և յետոյ՝ ենթական : Զոր օր. Անմահ ե հոգի, Մեծ ե Տեր, Պահակ կալան զնա, Պատականս համարի զնոսա : Այն բառը՝ որ ստորագելին կը վերաբերի ստորագեալ կը կոչուի : Երբ բայը էական է, ստորագելին միշտ ենթակային կը վերաբերի և ուղղական կ'ըլլայ, քանի որ ենթակային է : Ներգործական բայերու մէջ ստորագելին սեռի խնդիրին վերաբերելով անոր հետ կը համաձայնի թուով ու հոլովով. բայց երբ ենթակային վերաբերի, ուղղական կը դրուի միշտ : Վերեւ պահակ կալան (= ունել-էն) զնա, պահակն ստորագելի է զնա սեռի խնդիրին. պատականն համարի զնոսա, պատականս ստորագելի է զնոսա սեռի խնդիրին :

Եթէ էական բայի ենթակային ստորագելին գոյական մըն է, ի նախդրեւ հայցական ալ կրնայ դրուիլ. Եղիցուք հեզ ի ծառայս = փոխանակ ըսելու Ծառայ եղիցուք հեզ : Լինել ի ժողովուրդ տառն = Ժողովուրդ շինել տառն : Ամենայն որո՞ւ իցէ խայս եւ պիտակ այժեաց ի գողօնս համարեալ լիցի ինձ = Դողօնք համարեալ լիցի ինձ :

Դիտելի է որ ձեւաւոր խօսքի մը մէջ, ստորագելին առաջ դրուելով հանդերձ, ենթական բայէն նախադաս կրնայ ըլլալ. Զոր օր. Բազմաց և քաջութիւն իմն իրքն քուին, եւ այն իսկ է սգոյ արժանի : Շահավանս մեծ աստուածաբաշտքիւնն է : Զի մի կարծիք ինչ իրքն հաւնարիցիս :

3. Օրհնեցեք զանիծիչս ձեր = Զձեզ անիծողները

օրհնեցէք, Բարի արարեմ ասելեաց ձեռոց—Չձեզ ատող-  
ներուն բարիք ըրէք.— Ի՛չ և ելի կամ չի (լեզուարանո-  
բէն միայն ի մասնիկ կ'ընդունուի և ի մասնիկով ածանց  
բառերով հարուստ է մեր լեզուն) ընդունելութիւն կազ-  
մող մասնիկներ են, որոնք բայարմատներու կամ բուն  
արմատներու վրայ կը գրուին:

Ի՛չ, ելի— ող կը թարգմանուին, Առնել (= ստեղ-  
ծել), որուն բայարմատն է արար. աւելցնենք ի՛չ, Արա-  
րիչ (=արարող): Տածել (=խնամել) տած, տածիչ. Կի-  
զում, կիզ, կիզիչ. Վարեմ, վար, վարիչ ևլն. օրինակ-  
ներէն կը հետևել որ ի՛չ մասնիկը միայն ներգործական  
բայերուն կը կցորդուի. սա՛չափ միայն կարեւոր է  
գիտնալ որ, իրենց սեռի խնդիրը յատկացուցիչի ձեւով  
կ'առնուն, որ պէտք է լուծել սեռական սեռի խնդիր.  
Չոր օր. Եթէ կարծիչ յանցանաց (զյանցանս) էին դեւ  
ոչ երբեք զմարդիկ ի կռպպացսուքիւն օտարեցուցանէին  
եւ ոչ ընդ աստիցա պեուցանել (պշուցանէին): Գործել  
այնպիսեաց փոխանակ ըսելու զայնպիսիս որ, եթէ ըսէինք  
յունարէն կ'ըլար. բայց որ յարարերականով ըսել նոյն-  
չափ նախընտրելի է որ գործեն զայնպիսիս. ինչպէս  
նաև ելիւով, Գործելիք այնպիսեաց = Այնպիսի բաներ  
գործողները: Ուստի միեւնոյն նախադասութիւնը հայ-  
կարանօրէն կը կազմուի թէ ի՛չ և թէ ելի մասնիկներով  
և թէ որ յարաբերակալով:

Ող և ելի (ի) թէ՛ ներգործական և թէ՛ չէղոք բա-  
յերուն կը լծորդուին. իսկ կրաւորականը ներկայ ըն-  
դունելութիւն չունի արդէն: Նկատելի է որ, եթէ ելիւով  
կազմուած ընդունելութիւն մը ածական է ա՛յն ատեն,  
երբ տրական խնդիր մ'ունի: Չոր օր. Ընդունելի է ինձ.  
Իսկ երբ ող նշանակէ սեռական սեռի խնդիր կ'ուզէ ան-  
պատճառ: Օրինակներ:

Ընդունելի իմ ես դու (իմ =զիս ընդունող)

Եթէ սիրեմ զսիրելիս ձեր (ձեր—զձեզ սիրողները)

Ո՛չ ապաքէն մեղաւորք սիրեն զսիրելիս իւրեանց  
(իւրեանց—զիրենք սիրողները)

Ի՛հսող.— Այսօրինակ դարձուածներն են որ Հայ-  
կաբանութիւն կը կոչուին:

4. Ածէ անձրեւ—Կ'անձրեւէ, անձրեւ կը բերէ.—Գրաս-  
րի մէջ յաճախ անուն մը հոլովուած կամ նախդրիւ,  
պի մը հետ միաձոյլ գործածուելով կը կազմէ ոճ մը՝  
վայելուչ եղանակաւ մէկ բառով բացատրուելիք  
նաստ մը՝ երկու բառով ըսուելուն մէջ կը կայանայ.  
այլէս ածել (=բերել, սովորաբար շնչաւորի մը, բայց  
ով անշունչի ալ կ'ըսուի) -ով բազմաթիւ ոճեր կը  
սզմուին: Օրինակներ:

Ածել= Յեղեղել իմաստով, Չամենայն պղծութիւնս  
իջրեան ածեն:

Ածել= Կապել իմաստով, Ած զգօսի ին, ածցես  
ցա կամարս:

Ածել= զղխով= Մերկացնել, Հանել, Անդէն հրա-  
յեաց զղխով ածել զծիրանիսն:

Ածել= Չարնել իմաստով, Ած ապսակ Յիսուսի:

Նուագս ածել= Երգ շարնել, Չամենայն նուագս  
եւր յուկի ինար իւր:

Ածել= Յաւելուլ, Յարել, Վրայ բերել, Ածէ զնո-  
ւեր, երբ հայեցարով յԱքրահաւ:

Ածել= Դնել՝ իմաստով Ած զձեռն իւր զսկիւնք ինով:

Ածել= Բռնել իմաստով, Չձեռոք ոչ կարաց ածել  
յրն.— որ զքռաւք ածելոցն իսկ է զմեծ վիշապ:

Ոգի զոգւով ածել= Հեւալ, Ոգի զոգւով ածեւ

Ածել= Յանկուցանել, Չհրեայսն գիւրեւ ածիցե

Ածել= Ածիլել, Ածել զհերս եւ զվօրուս ծառայից նորս

Ածել= Բանի մը վրայէ անցընել= Ածել զբոցով

Ածել= Տատանիլ, Տատամիլ, Առանց ընդ բանս ինչ  
նկոյ:

Ածել= Խեթկել, Խրոխտալ, Եղջիւր ածել. Յորժամ  
ածիցես իբրեւ զեջ՝ եւ եղջիւր ածիցես իբրեւ զցու:

Ի համբոյր ածել= Մերձեցուցանել, Ի համբոյր գալ,  
որդորել, ընտանեցնել, Չառիժու կորիւն անուցեայ ածե  
համբոյր եւ ի թիւնս—Կ'ընտանեցնէ: Գազակ մարդե-  
ն արուեստիւ պատեալ՝ բազում անգամ զան ի համբոյր:

Յարդիւնս ածել= Արդիւնաւորել, Յարդիւնս ածիցե  
անն:

Ի հասուսն ածել= Ստեղծել, Որ բաւարան է՝ որ-  
ս ի ծալն զկենդանութիւն, Նոյնպէս եւ ի զհուրիւն

խորյ անարատ հոռեանն ժամանեցուցանել, եւ յեսյ արա—  
րածոցն ի հասուսն, ըստ իւրաքանչիւր բնութեանց Ածել ։

Դիտելի է որ, երկու բառէ կազմուած բայերը, Մեքորպեան լեզուի մէջ յահա՛ն իրարմէ բաժնելով իրենց հետ կապակցութիւն ունեցող բառերը— նախադաս կամ յետադաս— իրենց միջև կ'առնուն ։ ի հասուսն . . . .  
ածել. Ձի մի մուսայլքն (==միթարքն) որ զրբօքն շողայ-  
ցեն (==երեւայ) Արգել հայելոյ ի յըստակութիւն լուսոյն  
լիցիկն = Ձի մի' արգել լիցիկն ։

Ածել (ի չդոյէ) ի գոյ = Ոչինչին գոյութիւն տալ,  
Ստեղծել, Ձի ամն ի չգոյի ի գոյ զչգոյսն ։

Յուցանել (յոչնչէ) յիկն = (ոչինչէն բան մը) ստեղ-  
ծել ։ Ձի եցոյց յոչնչէ յիկն զչէսն ։ Ի մոռացուս ածել =  
Մոռացուս առնել = Մոռնայ ։ Յանկալի եւ գործֆն, զի  
գոյիչասակն մեր անմահ պահեն, եւ ոչ սան ժամանակաց  
ածել ի մոռացուս ։ Չառացիսն մոռացուս առնիցեմք ։  
Ընդ վայր զմիսս ածել = Ի քաղ արկանել (քաչկուտել) =  
Միտքը այլ և այլ բաներու տանիլ, միտքը ասդին ան-  
դին պտտոցնել ։ Իսկ սաս ընդունիլ պարս է եւ ոչ ինդրել,  
հաւանիլ եւ ոչ երկնիլ, հաւասայ եւ ոչ ընդ վայր զմիսս  
ածել ։ Արդ առաքելոյն՝ որ անճառ գրասնս հաւնարի,  
պարս է անսաղ, թէ Մարկիոնի, որ ի քաղ արկեալ ընդ  
վայրս գրասնս ածիցէ ։

### Բ Ա Ռ Ք

Ապաքեն = մկ. Իրաւ, Ստուգիւ, Արդարեւ ։

Անիծիչ = ծչի, ծչաց, Գյ. ած. Անիծող ։

Անեամ = գի. ն. Ատել ։ Ո՛չ ապաքեն = Չէ՞ մի որ ։

Անելիք = եղնաց. Գյ. ած. Ատող, Թշնամի ։

Վարձ = վարձք, ու, ուց. Գյ. Վարձք, հատուցում ։

Մասաւոր = աց. Գյ. Մաքս առնող (կէօմբիւկճի) ։

### Է. Նախանձ քան Տեառն

1. Յես այսորիկ = Այսուհետեւ, յես այնորիկ = այ-  
նուհետեւ, նախադրութեամբ կազմուած մակբայներ են ։

2. Եւ անդ լինեք ոչ բազում ինչ աւուրս. Չով  
կամ առանց զ-ի հայցականը՝ երբ յայի, ճեւղորթիկն,  
վերայ նշանակէ սեռի ինդիր չի, այլ հայցական հոգով թնու-  
քեան ինդիր. ինչպէս է հոս՝ աւուրս նաեւ՝ Չվեց օր գոր-

ծեսցես . Չխառատուն եւ զվեց ամ շինեցաւ ասածարս եւ դու  
զերիս արուս կանգնես զդա—Քառասուն եւ վեց տարուան  
մէջ շինուած տաճարը դուն երեք օրուան մէջ կը կանգնես  
(շինես) . Չառեկայն զիշերս աշխատ եղաք եւ կալաք ոչինչ  
= Ամբողջ զիշերը աշխատեցանք ու բան մը չբանեցինք :

### Ա Մ Ա Ն Յ Ա Կ Ա Ն Մ Ա Ս Ն Ի Կ Ն Ե Ր

Չուանեայ .— Ածանց կամ ածանցումն կը կոչուի  
արմատ բառի մը նախադաս կամ յետադաս մասնիկով  
մը ո՛ր եւ է կերպարանափոխութիւնը , որ է արմատէն ու-  
րիշ բառի մը ծնունդը , որուն քերականական անունն է  
ածանցեալ . Չոր օր . Չուանեայ , որուն արմատն է Չուան ,  
եայ մասնիկով ածանցուած— Չուանեայ = Չուան — է :

Եայ — բանի մը ի՛նչ նիւթ է ըլլալը կը յայտնէ . Օր .  
Ծաղիկ , ծաղկեայ . Մարգարիտ , մարգարտեայ (ի սրղ-  
ուած) . Եայ , կը նշանակէ նաև՝ տեղափոխութիւն .— Հին ,  
հին— օր— եայ , Մի— օր— եայ , Չորեք— օր— եայ = չորս  
օրուան , մէկ օրուան , հին օրերու :

Դիտելի է որ , Եայ , որ երկրարբատ մըն է , Աշխար-  
հարարի մէջ սզելով մէկ ճայնաւորի կը յանգի . Եայ = է .  
Օր . Մարգարտեայ = մարգարտ — է . բացառականին հետ  
չչփոթուի :

Հայերէն լեզուի մէջ — նախադաս ու յետադաս—  
հարիւրէ աւելի(\*) ածանցական մասնիկներ կան , բայց  
անոնց մէջէն կարեւորները միայն մասնանիշ կ'ընենք :

Նախադաս մասնիկները յետադասներուն չափ ճոխ  
չեն եւ են հետեւեալները .— Ան , ս , չ , ապ , դժ . կամ

(\*) Մեր կրօնական , պատմական , բանաստեղծական եւ որ աւելին  
է , Ոսկեշարու Ոստանիկ լեզուին Թարգմանչական ճոխ գրականութիւնը  
եւ թէ յետադարեան բազմութիւն քերականներ մինչև Մ . Գարագաշ (առա-  
ջին քերական Դիոնեսիոս Թրակացիէն , եւ մասնաւորապէս Հայ լեզուի  
քերականութեան հիմնադիր Յովհան Երզնկացիէն , յետոյ աւելի կանո-  
նաւոր աշխատութեամբ լատիներէն լեզուով՝ Փրանչիսկոս Լիվօլայի  
Հայ քերականութենէն մինչև հոյակապ Հ . Ա . Բագրատունի ու անհա-  
ւասար բանասէրն Ա . տրնեան՝ մանրախուզիւք քննող Հայ լեզուի ուսուց-  
չին եւ կամ բանասէրին աչքէն բնախի՛ն չպիտի վրիպէին հարիւրէ աւե-  
լի ածանցական մասնիկները , որոնցմէ ոմանք Յունարէնի , ոմանք ալ  
Պարսկերէնի վրայ ձեւուած են . սակայն այս հայեակը լուսարանելու  
համար , մասնաւոր ուսումնասիրութեան կը կարօտի : Այժմիկ մեր զձամբ  
մանրակար մըն է :

ծծ, որոնք բառի մը վրան դրուելով հակառակ իմաստ մը յայտնելուն պատճառաւ բացասական կամ ժխտական կը կոչուին : Օր. Ան. — Անմեղ, Ողոք—անողոք, Ճառ—անճառ. Պատում—անպատում : 8. — Մոյն—տմոյն. Գէտ—տգէտ. Գեղ—տգեղ : չ. — Աջողութիւն—չաջողութիւն, չքանանայ, չեպիկոպոս, չերէց : Ապ. — Ապերախտ, Ապէնիազ : Դժ. — Գոհ—գոհ, բախտ—ըրժբախտ : Տժ. — Գոյն—տժգոյն, Գին, տժպին :

Ասոնցմէ զատ կան իրրև նախադաս մասնիկ նաե՛քանի մը տառեր—ք, զ, ի, ն. որոնք բառերուն կցորդուելով՝ անոնց իմաստը կամ աւելի կը փոխեն և կամ կը սաստկացնեն. Օր. ք-ով, Ողջախոհ—բղջախոհ (Ո ձայնաւորը կորսուած). — Ողոք—բողոք : զ-ով, Աչացու—զաչացու, Արտուղի—զարտուղի, Եղծում—զեղծում, Գետնել—զգետնել, Ետեղ—զետեղել : ի-ով, Մուտ—մուտ, Զօր—հզօր, լու—հլու : ն-ով, Պերտ(—հպարտ)—նպերտ, Ծողեմ—նշողեմ, Անիր—նանիր (պարսպ) :

Դիւս. — Բայարմատ ասանդեալ մը իր բային զօրութիւնը կ'ունենայ. Օր. Ծնանել—ին արմատն է ծինանծին—չծնող. Փորձել—ին արմատն է փորձ, անփորձ—չփորձուած, չփորձող :

Կան Յունարէն լեզուէ փոխադրուած կամ Յոյն լեզուի վրայ ձեւուած մասնիկներ ալ, զորս Ոսկեդարու անկոծ շրջանէն վերջ հելլէնարան մատենագիրներ աւելի ցանկորդեցին, և են հետեւեալները, որոնց մեծազոյն մասը բառերու կրճատմամբ առաջ եկած է, և արդէն ըստ արդի համեմատական լեզուաբանութեան ալ, բոլոր մասնիկները վաղեմի բառերու բեկորներն են :

Ապ—ան. — Ապերախտ, ապուշ :

Առ—Առարկայ, առարկել, առգանութիւն, առձեռն, առժամայն :

Արս—Արտաքս, զուրս. — Արտասանութիւն, արտաբերել, արտուղի :

Բաղ—կից. — Բաղդատել, բաղկանալ :

Բաց—զատ. — Բացայայտ, բացատրութիւն :

Գեւ—բարձր. — Գերազանց, գերագոյն :

Դեւ—փոխ. — Դերանուն, Դերբայ :

Ենթ—տակը. — Ենթակայ, ենթադրել :

Հակ = հակառակ . — Հակառակութիւն :  
Մալ = վրայ . — Մակերես , մակաբերել , մականուն :  
Յար = կից — Յարաբերութիւն , յարակից :  
Ներ = ներս . — Ներգործել , ներկայ , ներածութիւն .  
Շաղ = կապ . — Շաղկապ , շաղապատեմ , շաղապատ ,  
շաղաչարեմ , շաղամանութիւն .

Շար = յարգ , կից . — Շարունակել , շարադրել :

Պար = շուրջ . — Պարունակել , պարագայ , պարբեր-  
ութիւն :

Ստոր = ստորագրել , ստորադասել , ստորասել (= հաս-  
տասել) ստորասութիւն :

Վայր — Վայրաբերել , վայրագաւիթ :

Վեր . — Վերաբերել , վերաբերում , վերսկսիլ :

Տար = նեռ . — Տարածամ , տարբաղադրել :

Տի = մեծ . — Տիկին = մեծ կին . ախայր = տեար =  
մեծ մարդ , ախեղերք = անծայրածիր :

Տրամ . — Տրամաբանութիւն , տրամախօսութիւն ,  
տրամադրել :

Փաղ = համ , նոյն . — Փաղանունութիւն , փաղա-  
նուն (համանուն) , փաղասեռ (= նոյնասեռ) փաղառու-  
թիւն (նեղ) :

Բ . Յետադաս մասնիկներն են — Ական , Այիկ , Ած ,  
Ակ , Իկ , Եակ , Ան , Անդակ , կամ Ընդակ , Արան , Անոց ,  
Ոց , Աւեհ , Եայ , Եան , Եղ , Եղեկ , Ենի , Էն , Իջ , Եար ,  
Կեր , Ոյր , Ունն , Ոս , Որդ , Ունի , Անոյշ , Ունդ , Ունի ,  
Ուս , Ուս , Ուրդ , Արան :

Ական և այիկ . — վերաբերութիւն կը ցուցնեն . Զոր  
օր . Բաղաք , քաղաքական . Բրիտոնեայ քրիստոնէա-  
կան (եայ = է սղուած) Հիւսիս , հիւսիսային . Ծով , ծո-  
վային . Երկին , երկնային :

Դիանլի է որ այիկ աւելի տեղական ածանցի յա-  
տուկ է . իսկ բուն վերաբերում ցուցնող սովորինիկ  
մասնիկներն են . եղեկ . օրեկ , առար . Աստուածեղէն =  
աստուածային , Երկնաւոր = երկնային , Մարդկեղէն =  
մարդկային = մարդկօրէն : Նոյնպէս կարեւոր է նկա-  
տել որ , այս վերաբերական ածականները յատկացուցիչի  
զօրութիւն ունին . Զոր օր . Երկնային շոյս = լոյս երկնից .  
Գուսանական երգ = երգ գուսանաց ևլն :

Ած=ող. — Գթած (գթացող), Ողորմած (ողորմող)  
Ակ կամ ևակ, եակ, իկ—նուագական և փաղաքա—  
կան մասնիկներ ըլլալէ զատ, ող—ի զօրութիւն ալ ունին  
Բլուր, բլրակ (ու ինկած), Գիտակ, թիակ, նաւակ ելն. —  
Որդեակ, Պատանեակ, Արկղիկ, Ոցիկ, իսկ Մայրիկ —  
Հայրիկ բառերուն մէջ իկ փաղաքական է: Իրրե ող.—  
Մնդրակ=փնտռող. Գոյակ, =Եզող, էակ. Պահակ —  
Պահապան. Մարտիկ — մարտնչող. Երգեցիկ — երգող —  
Պօսնակ=խօսող (աքաղաղ, սոխակ):

Ան=ող. — Ոթան, Վիպասան, Ճարտասան, Դե-  
րասան, Արժան ելն.:

Անյակ, կամ ընյակ (Պարսկերէն—լրիւ, ամբողջո-  
վին). — Բովանդակ, Օժանգակ, Դժնդակ ելն.:

Արան, անոց, ոց, տեղական մասնիկներ են. —  
Վարժարան, Պոր՝րդարան, Հիւանդանոց, Որբանոց,  
Ամուր, Ամրոց, Մարտիկ, Մարտկոց ելն.:

Ա.ս. — Մարմնի մը կտրած անդամը, տկարութիւն  
մը կը ջուցնէ. — Ականջատ, Մայրատ, Լեզուատ ելն.:

Աւոր կամ ուոր, ունեցող կամ կրող կը նշանակէ. —  
Լոյս= լուսաւոր. Թագ = թագաւոր. Ապախտաւոր =  
ապերախտ. Մաքսաւոր. Զինուոր. Մեղք=մեղաւոր.  
Փառք=փառաւոր ելն.:

Դիս. — Երբ ք արմատական չէ, թէ ածանցման և  
թէ բարդութեան մէջ կ'իյնայ. ինչպէս Մեղք, Մեղա-  
ւոր, Դժոխային. բայց եթէ արմատական է ք կը մնայ.  
Զոր օր. Կնիք, կնքաւոր. Քաղաք, քաղաքական.  
Թոք, թոքային:

Դիս. — Երբ ք արմատական չէ, բայաշինութեան  
մէջ ալ կ'իյնայ, Զոր օր. Մեղք, մեղանչել. Կուք,  
կռել. Սարք, սարել. Նո'յնն է իք=ի.ք. այս քն ալ  
արմատական չէ. Զոր օր. Կարծիք, կարծել. Ընթրիք,  
ընթրել. Կեղծիք, կեղծել. Հերձիք (հերձուած), հերձ-  
նում, հերձանիւմ. իսկ արմատական է քն սա' բառե-  
րուն մէջ. Բողոք, բողոքել. Թեք, թեքել. Մորմօք,  
մորմօքիլ. Հերիք, հերքել. Կնիք, կնքել ելն.:

Աւեհ—Առատութիւն կը ջուցնէ. — Օղաւէտ, Մաղ-  
կաւէտ, Կենսաւէտ ելն.:

Եան—Սերունդ, ծագում, վերաբերում կը յայտնէ.

— Դեւոնդեան, Իսրայէլեան. կը նշանակէ նաև ունեցող—  
Վեցթեւեան(վեց թեւեր ունեցող). Գունեան= գունաւոր.

Եղ—Շատութիւն կը ցուցնէ.— Կարչնեղ, Հանճա-  
քեղ, Շքեղ, Ահեղ, Աղեղ, Ընչեղ ևլն.:

Եղեկն= Բանի մը ի՛նչ նիւթէ ըլլալը կը յայտնէ.—  
Հուր, հրեղէն. հողեղէն. Լոյս (յ սղուած)լուսեղէն. Եղեկն  
վերաբերում ալ կը ցուցնէ. Աստուածեղէն, մարդկեղէն:

Ենի—Պտուղ ցուցնող բառի մը վրայ դրուելով ծա-  
ռը կը նշանակէ. Արմաւ., արմաւենի. Նուշ, նշենի (ու  
սղուած=լուելեայն ղ-ի). Թուզ, թզենի. երբեմն մինակ  
իւով, Կաղնի, Հերձի, Խնձորի, տանձի ևլն.։ Բայց  
եթէ կենդանիներու անուններուն վրայ դրուի՝ անոնց  
մորթը, միսը կը նշանակէ. Խողենի, Առիւծենի. Ենի վերա-  
բերում ալ կը ցուցնէ, Հայր, հայրենի. Մայր, մայրենի:

Եւս կամ սս (Պարսկերէն լծորդ. եստ Հայերէն=ել)  
հին մասնիկ մըն է պարսկերէնէ փոխադրուած. Գո-  
վեստ, Ուտեստ:

Կեր=ող, նոյնպէս պարսկերէն (կեր=ող). Աղօթ-  
կեր (=աղօթող), Համողկեր (=համողիչ). Խոհակեր  
(=խոհարար, Պրակ.=քեար, գործ):

Էն—Ունեցող նշանակութեամբ՝ Նկարէն, Ծուէն,  
Ծակոտկէն.— Իչ=ող, Արարիչ, Հաստիչ (=ստեղծող)  
ևլն. գործիք իմաստով.— Բրիչ, Քերիչ ևլն. Ումն.—  
Յուզումն, Հնչումն, երգումն: ՈՏ.— Ունակութիւն  
կամ ախտ նշանակութեամբ.— Երկչոտ, Նախանձոտ,  
Բորոտ ևլն. Որդ—Արհեստ մը կը ցուցնէ.— Խաղա-  
խորդ, Սայլորդ, Յանցորդ, Անցորդ, Նաւորդ, Որսորդ,  
Այգորդ, Անդէորդ ևլն. Նաև ող նշանակութեամբ,  
Նախատորդ (=նախատող), Գնորդ, Ժառանգորդ ևլն.։  
Ուս՝—Առատութիւն կը ցուցնէ.— Ապառաժուտ, Շամ-  
բուտ, Ծանծաղուտ ևլն.։

Ունի, Անոյշ—Իգական մասնիկներ են, աղջիկ կը  
նշանակեն, Հայ, հայունի. Հայկ, Հայկանոյշ, Հայկունի  
ևլն.։ Ունդով—Սերունդ, ծնունդ, Մնունդ:

Ուրդով— Ժողովուրդ, Անկանուրդ, Կցուրդ:

Ունիւով—Արքունի, Արծրունի, Վահեւունի:

Ուսով (=ս կամ եւր-ի).—Ապրուստ, Թաքուստ,  
Յետուստ: Պանով (Պրակ. մասնիկ տէր նշանակու-

Թեամբ) — Պաշտպան, Պարտիզպան, Կառապան և ընդ  
Ստանով (նոյնպէս Պրսկ. մասնիկ) — երկիր տեղ նշո  
նակութեամբ. — Թուրքաստան, Պարսկաստան, Մառա  
տան, Այգեստան և ընդ :

Յի—Ո՛ր երկրէն ըլլալը կը ցուցնէ. — Պօլսեցի  
Ատարազարցի, Եւրոպացի և ընդ :

Յու— Պաշտօնի մը յատկացեալ անձ մը կը ցուցնի  
— Բահանայացու, Տիրացու և ընդ :

Ուն—ողի իմաստն ունի. — Շարժուն, Թռչուն  
Սողուն և ընդ : Օն—Գողօն, Կարօն և ընդ :

Վեց հոլովներով ալ ածանցներ կը շինուին Ջոր օ  
Ուղղ. — Հայրենի :

Հ. — Կենսական (= զ-կիանս = ա-ը կորսուելով — կենս  
Սեռկ. — Քեռական :

Տրակ. — Ինձէն, Քեզէն : Մեզէն, Չեզէն :

Գիս. — Ասոնք Գրաբարի նախնական բացառակաւ  
ձեւեր են :

Գործ. — Արամբ-ի, Կանամբ-ի, Իւրով-ի, Մտով-ի  
Գլխով-ին :

Հայերէն լեզուի ամենաէական ու հարուստ ածաւ  
ցական մասնիկներն են. ի և ու. — Յարգ-ի, Թորմ-,  
Դառնաթորմ-ի, Հերձ-ի (ծառ, սագրղ աղածը), Մոյ  
Արբ-ի, Ջրարբ-ի, Այր-ի, Այռ-ի-ք (ճաթիլ ուտելէ, պ  
ապէ), Պայթ-ի-ք, Աւետ-ի-ք, Բազմ-ի-ք, (banc) Երե  
ի-ք (տեսիլք), Ուտ-ի-ք, Ազգ-ի (տեսակ), Ազն-ի, Օ  
Հայկազն-ի, Ամ-ի, Օր. Բազմամ-ի : Երեմ-ի (երեք տ  
րու), Անկիւն-ի, Օր. Եռանկիւն-ի : Արդ-ի, Օր. Անարդ-,  
Արծ-ի, Յր. Թաւարծ-ի : Աչ-ի. Օր. Բազմաչ-ի (= եայ), Եր  
կոր-ի, Բերան-ի, Օր. Երկբերան-ի, Գլխ-ի, Իննագլխ  
Գն-ի, Մեծագն-ի : Գուն-ի, Բազմագունի : Դիմ-ի, Բա  
մադիմի : Երեկոյ-ի, Մարաւի, Կար-ի, Կերպ-ի, Երկկերպ-  
Աղիկամ-ի, Կուս-ի, Մեկուսի, Հերկ-ի-ք (հերկելէն  
Նոր-ի (թուրքմաստ), Ժր-ի (ժիրէն), Մարդ-ի, Անմարդ-  
Միասայր-ի, Վայր-ի, Ընտան-ի, Իշավայր-ի, Ամար-ան.  
Աչն-ան-ի, Չմեր-անի, Գարն-ան-ի, Հարս-ան-իք, Մ  
տան-ի, (մասն, մատին, թերեւս ունէր նաև ան-  
սեռկ. մատան, որ եղած է այսպէս), Աղ-ի, Ասու-  
Արուր-ի, Աւազ-ի, Կտաւ-ի, Պղնձ-ի, Գին-ի, Գործ-

Վող-ի, (կով արմատէն), Ա.գ-ան-ել-ի, Ա.դ.դ.ել-ի, Անձ-կալ-ի, Ան-ակն-կալ-ի, Բանալ-ի, Տեսանել-ի, Արծուի, Դալար-ի, Լույ-կի, Հով-ան-ի, Մայր-են-ի, Արամբ-ի, Կանամբ-ի, Առն-ի, Իւրով-ի, Ամննեւին, Բոլորով-ին, Գլխով-ին և ին. և ին. չափազանց շատ են :

Ու-ով.— Ա.ու-ու, Ա.կն-առ-ու, Ա.ւար-առ-ու, Պար-առ-ու, Ա.բկ-ու, Օր. Ա.ւար-կու, Բանա-ար-կու, Գի-նարբ-ու-ք, Ան-արգ-ու, Ա.ել-ու-ք, Ա.յց-ել-ու, Անկ-ու, Սարգ-անկ-ու (անկանիմ հիւսիլի), Բար-ու, Բան-արա-րու, Բարձ-ու, (Հոգե-բարձ-ու) կամ ճիշտը — հոգե-բարձ-ու, Երգ-ու, Օրհն-եր-գու, Ըմպ-ու, Գին-բմպ-ու, Զր-բմպ-ու, Լեզ-ու, (լիզել-էն կամ լիզու-էն (և ին. և ին.)) :

Յ. Որ գաղաւթին վաճառեին .— Ա.զաւնի վաճառողները.— Ընտիր Գրաբարի մէջ ներկայ բնդունելութիւնը շատ զգուշալի է գործածել, անոր տեղ կր կազմուին որ յարաբերականով ձեւեր, որոնց հայկաբանական ձեւ անունը կուտանք. փոխանակ ըսելու վաճառողի, բուռած է՝ որ գաղաւթին վաճառեին : Այսօրինակ հայկաբանական կանոններու վրայ աւելորդ պիտի չհամարէինք քիչ մը աւելի խօսիլ : Ընդունելութիւն ներկայի խնդրաւորութիւնը Յունարէնի պէս հայցական պիտի ըլլար, եթէ մեր ոսկեղարու թարգմանիչները որ յարաբերականի միջոցաւ այդ հելլենարանութենէն չխուսափէին, թէպէտեւ այժմեան աշխարհաբարի ներկայ բնդունելութիւնը ճիշդ Յունարէնի պէս սեռի խնդիր կ'առնու. Զոր օր. Առիւ.— Ա.կանջ ունեցողը. Գրք.— (Նա) Որ ունիցին ակաւջս. Չեզ ընդունողը = (Նա) Որ ընդունին գձեզ (և յօդը որ յարաբերականով սկսող բայերուն կամ անոնց խնդրին վրայ կը դրուի նա զօրութեամբ իմացուած յարաբերակութիւն տեղ. այսպէս կրնար բուռիլ Որ գձեզն ընդունի : Արար եզողը եւ պիտի չդառնայ = Որ իցի յսնիին մի՛ դառնայցի յեսս : (Նորա) Որ սիրեն զանուն ին = քու անունդ սիրողները : (Նա) Որ առաքեացն զիս. նոյնպէս ս դիմորտով, (Ես) Որ խօսիւն ընդ ինզ = Ես եմ որ խօսիմ ընդ քեզ. դով, Որ ետք սեր = (Դու) որ տէր ես :

Բ Ա Ռ Ք

Էիւնիւն.— կտ. եղի, հր. շեր, անց. շեալ, Զ. Ըլլալ = Գտնուել է

Մերձ.— մկ. նիս. Մօտ :  
Գտանել.— Գտի ն. Գտնել :  
Արջառ.— ոյ, ոց կամ աց. գոյ. Եզ. Կով, Յուլ և Նոյ. :  
Լուսնայափոխ.— ից. ած. Սեղանաւոր  
Խարսկան.— աց. գոյ. Մտրակ :  
Հաստփանառ.— ի, աց. գոյ. Լուսնայափոխ :  
Վանառ.— ի, աց. Առուտուր, Շուկայ :

### Ը. Հարսանիքի Ի Կանա

1. Հարսանիքի էին ի կանա.— Կանայի մէջ հարսնիք կար.— Անեզական բառերուն բայը յոգնակի կը դբուի.— Երբ Կայ պակասաւոր բայով սեռականը կրկնուի, բացասական խօսք մը կը կազմուի. Օր.

2. Զի՞ կայ իմ եւ քո.— Ի՞նչ ունիս մեզի հետ կամ մենէ ի՞նչ կուզես : Զի՞ կայ քո եւ անպատի.— Անպատը ի՞նչ գործ ունիս : Զի՞ եւս կայ նորա եւ կողոց.— Կուռքերուն հետ ի՞նչ գործ ունի : Ասոնց ենթական է (Զի) :

3. Քակոյկի կնեայք.— Կնեայ թակոյկներ.— Յետադաս բաղմամբանկ ածականը գոյականին հետ թուով և հոլովով կը համաձայնի :

### Ի Ա Ռ Ք

Հարսանիք.— նեաց. գոյ. Հարսնիք :

Կոյիմ.— եցառ. Չ. կր. Կանչուիլ, Հրաւիրուիլ :

Զի՞նչ.— տր. ած. Ի՞նչ, ի՞նչ բան, ի՞նչ բան որ

Առնել.— արարի, արա՛, արասցի՛ր, արասցի՛ք. հր. Լ՛նել :

Քակոյկի.— Կուլի, Կով, Կուկաց.— Աման

Կնեայ.— ած. Քարէ, Մարմարէ. արմ. Կուճ.— Մարմար.

Ի վեր.— մկ. Վեր, Բարձր, Դուրս :

Մի մի ի նոցանե մարս երկուս կամ երիս.— Մէ-

կիկ մէկիկ, ամէն մէկը երկերկու, երեքերեք մար կ'առնէր :

Տանարապետ.— ի, աց. Գյ. Սեղանապետ, մառա-

նապետ (քիլէրճի, սուֆրաճի) :

Պաշտել.— եցի ն. Մեծարել :

Յորժառ.— մկ. Երբոր, որ ժամանակ :

Արքեանառ.— եցայ. Չ, Գինուլեալ :

Յոռի.— լոյ, լոց. ած. Գէշ, Վար :

Այժմ.— մկ. Հիմա.

Թ. Ջուրն կենդանի

1. Մերձ ի գիւղն գոր ետ Յակովբ որդոյ խրում Յովսեփայ. (g) նախորբ արականէ զատ վերջանողով արական ալ կ'առնու որդոյ խրում՝ Յովսեփայ, բացաշայտիչ բացայայտեալ թուով և հոլովով նամաձայնած են, հոս՝ Յովսեփայ յատուկ անանք, յ'առաջատ րլլալով բացայայտիչ է որդոյ խրում բացայայտեալին, որուն համաձայնած է:

2. Անգ եր աղբիւր մի Յակովբայ. — էր էական բայը երբ գտնուի ի նշանակէ — վերագոյն ցոյց առինք — սեռական բ'նութեան խնդիր կ'առնու, Յակովբայ սեռական բնութեան խնդիր է:

3. Տուր ինձ ընկել = Տուր որ խմում. — Ինձ արական ենթակայ է ընկել բային, ընկել, երբեք խնդիր է՛ տուր դիմաւոր բային:

4. Գու մե՛ծ ինչ ոք իցես քան զհայրն մեր Յակովբ. Քան զ նախորբութեամբ տարբերական բազգատական կը կազմուի, որ ցոյց կուտայ անականնեբու միջոցաւ երկու կամ աւելի բանեբու միջ եղած տարբերութիւնը: Քան զհայրն մեր Յակովբ խնդիր է մեծ անականին: Ջի՛նչ չար քան զո՞՞ կույրէ քան զո՞՞, խնդիր է «չար» անականին: Գտանի հիւղն մեծ քան զնա. — քան զնա խնդիր է «մեծ» անականին: է՛յ սա արդարացեալ քան զնա. — Քան զնա նախորբութեամբ խնդիր արդարացեալին:

5. Բայց որ ընկե ի ջրոյն գոր ես սաց. — և յօդբ այն ցուցական անականին աւել գրուած է. փոխանակ ընկու. — Բայց որ ընկե ի ջրոյն յայնմանէ:

Բ Ա Ո Ւ Ք

Կենդանի. — լոյ, եաց. ան. կեանք ունեցող, Ապրող, Ողջ: Վաստակիւն. — եցայ. Չ. Յողնիլ, Աշխատիլ: Հանել ջուր. — չ. Ջուր քաշել: Ջի. — չղկ. Որովհետեւ: Խառնակիւն. — եցայ. Չ. Բարեկամութիւն ընել, Կենակցիլ: Քանգի. — չղկ. Որովհետեւ: Դող. — դողի կամ դոյ, ից. — գոյ. (Գովա): Ընկել. — արբի, արբ. չ. Խմել:

հաշն.— ին, ինք, անց, գյ, Ոչխար :  
Միւսանգամ.— մկ. Նորէն, Դարձեալ :  
Յաւիտեան.— մկ. Մինչև վերջը :

### Ժ. Բժեկել ի Շաբաթու

1. Որոյ երեսուն եւ ութ ամ եր.— Որոյ, սեռա-  
կան բնութեան խնդիր էր-ին :

2. Ի հիւանդութեան իւրում.— Նախդրիւ վերջա,  
հոլով տրական է էր-ին. օրինակէն որոշ կը տեսնուի որ  
ստացական ածական իւր, համաձայնած է իր գոյական-  
նին (ի հիւանդութեան) հետ. Այսպէս կը հոլովուի իւր,  
իւրոյ, իւրում, յիւրմե, իւրով, գիւր, յաքն. իւրք, իւրոց,  
իւրոց, յիւրոց, իւրովք, գիւրս.

Այսպէս կը հոլովուին քս, մեք, ձեք, միայն քո բա-  
ռին սեռականը յ մր աւելցնելով կ'ըլլայ քոյ. յոգ.  
ուզդ. քոյք, հայց. գիոյս. ինչպէս տեսանք վերև :

3. Ոչ արժան եր առնուլ հեզ զմահիճս էո— Պէտք  
չէր որ մահիճդ առնէիր.— քեզ տրական խնդիր է ար-  
ժան-ին և միաժամանակ տրական ենթակայ ալ է առնուլ-ին :

Կան Հայերէնի մէջ բառեր, որ միայն յոգնակի կը  
գործածուին, և որոնցմէ են Մահիճք, Պատճառք, Դա-  
գաղք, Գերեզմանք, Դժոխք, Կեանք, Կառք, Վարք, Վանք,  
Կոչումք Աճառք, = Վարաւանդ (ձիուն զարդերն այ-  
լովքն հանդերձ) և շն. :

4. Որ բժեկեացն զիս = Ձիս բժշկողը.— Ող, ներ-  
կայ ընդունելութիւնը վերագոյն տեսանք որ հայցական  
չէր կրնար առնել, ներկայ ընդունելութեամբ եղած նա-  
խադրութիւնները, որ յարաբերականով բացատրել յա-  
կարանութեան պահանջն իսկ էր :

### Բ Ա Ռ Ք

Այր.— Առն, արք, արանց գոյ. էրիկ մարդ :

Ողջ յինիղ.— Չ. Առողջանալ, Աղէկնալ

Յուզիւմ.— Չ. Տակնուվրայ ըլլալ, Շարժիլ :

Յառաջագոյն.— մկ. Աւելի առաջ :

Մահիճք=ճաց.— Անկողին :

Ողջանամ=ցայ.— Աղէկնալ

Յառնեղ—յարեայ.— Արի, Չ. Տեղէն ելնել, Յա-  
րութիւն առնել:

Շրջիմ—եցայ.— Չ. Շրջիլ, Պտըտիլ, Փոխուիլ:

Խոյս տալ.— Ետ. Չ. Փախչիլ:

Ամբոխ— ի, իւ, ից. Գոյ. Բազմութիւն:

Տեղի— տոյ, եաց. Գոյ. Տեղ:

ԺԱ. Թե չե պարս հոգալ վասն մարմնոյ

1. Ոգի առաւել է քան զկերակուր.— Ածականը  
գոյականին որպիսութիւնը երեք կերպով կրնայ ցուցնել,  
զոր վերապոյն, մասամբ ցոյց տուինք Դարկան, Բաղդա-  
սական և Գերայրական:

Դրականը առարկայի մը բնական յատկութիւնը  
ցոյց կուտայ. Զոր Օր. Սպիտակ ձիւն, Կարմիր վարդ:

Բաղդատականը՝ որ հաւասարութիւն մը և կամ  
առաւելութիւն մը կը ցուցնէ, կը կազմուի իբրեւ զ,  
քան զ, նախադրութիւններով, առաւել մակբայով և  
ածականին կցորդուած գոյն առաւելութիւն նշանակող  
մասնիկով, իբրեւ զ... հաւասարութիւն մը ցոյց տալու  
համար կը գործածուին, այսպէս. Ոչ զգեցաւ (Սողոմոն)  
= Անոնցմէ մէկուն պէս չհաղաւ Իբրեւ զմի ի Լոցանէ:  
Ոչ ոք է իմաստուն իբրեւ զՍողոմոն = Սողոմոնին պէս  
իմաստուն մէկը չկայ: Սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն  
քո = Ընկերդ քու անձիդ պէս պիտի սիրես: Հանդերձ  
նորա եղեն սպիտակ իբրեւ զոյս = Անոր հանդերձները  
լոյսի պէս ճերմակ եղան:

Քան զ... առաւել քան զ-ով դրական ածականը  
բաղդատականի վերածող գոյն մասնիկով կը կազմուի  
Տարբերական բաղդատականը, որ առաւելութիւն մը կը  
յատկանչէ, ինչպէս վերի Ոգի առաւել է քան զկերակուր  
= Ոգի և կերակուր բաղդատուած են իրարու հետ և  
ոգին աւելի է եղեր: Քան զ... նուրբ և արագ քան զմիս  
= Միտքէն աւելի արագ և նուրբ: Արդ զինչ պայծա-  
րազոյն քան զոյսն կայցէ: Զինչ զեղեցիազոյն քան զսի-  
րանարգ:

Նախադրութեամբ ինդիքները ածականներուն կը  
վերաբերին, քանի որ անոնց աստիճանն է որ կը ցուցը-  
նեն, իսկ ածականներն ալ արդէն իրենց գոյականնե-

բունն են: Թէև հայերէնի մէջ գերադրական չիկայ. իսկ ամեն(\*) մասնիկով կազմուածները ոսկեդարեան չեն, բայց անոր նմանող հոյլ մը ձեւեր կան:

Գերադրական. — Ոսկեդինիկ հայերէնի մէջ գերադրականը կը կազմուի ածականներուն վրայ, կարի, յոյժ, անհնարին, մեծապէս և դեռ ուրիշ մակբայներ աւելցնելով: Զոր օր. Յոյժ իմաստուն, Անհնարին բարձր էն: Գերադրական ձեւեր կը կազմեն նաև՝ սեռական, տրական, բացառական հոյովները. Զոր օր. Վաս.արանց = Մարդոց է՛ն վատը: Սոց սուս—էն սուտը, սուտին սուտը: Անմտղն ի ձեկնջ = Ձեզմէ ամենէն անմտղը: Նախ դրիւ տրականով Կրստը յիշխանս. Կրստըսոյն յորդիս նորա: Օրհնեալք ի կանայս = Կիներուն էն օրհնեալը: Ածականը կրկնելով, — Զբարի բարին = Ամենէն բարիները: Զյոռի յոռին = Ամենէն գէշերը: Թողիք զծանր ծանր օրինացն = Օրէնքներուն ամէնէն ծանրերը թողուցէք:

### Հ Ո Ք Ա Մ . — Գ . Լ Ծ Ո Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն ( Ա Մ )

Գ. Լծորդութեան բայերն ալ կը խոնարհուին այսպէս Աղամ Ա. արմասն Աղ. — Բ. արմասն Է Աղսց

Սահմ. Եղանակ ներկայ	Հրամայական Եղանակ
Եղ. Աղամ, Աղաս, Աղայ	Եղ. Աղա՛, Մի՛ աղար
Յօգ. Աղամք, Աղայք, Աղան	Յօգ. Աղացէ՛ք, Մի՛ աղայք
Անցեալ Անկասար	Ստորադասական Եղանակ :
Եղ. Աղայի, Աղայիր, Աղայր	Եղ. Աղայցեմ. Աղայցես, -ցէ
Յօգ. Աղայաք, Աղայիք, Աղային	(ա-իցեմ) = յ ներդաշնակութեան տառով եղած է . ալցեմ:
Անցեալ Կասարեալ	Յօգ. Աղայցեմք, Աղայցէք, -ցեն
Եղ. Աղացի, Աղացեր, Աղաց	Անորի Գերբայ. Աղալ
Յօգ. Աղացաք, -ցիք, էք, Աղացիք	Անց. Ընդ. Աղացեալ
Ապառնի	Ապառնի Ընդ. Աղալց
Եղ. Աղացից, Աղացես, -ցէ	
Յօգ. Աղացաք. Աղացիք, -ցեն	

(\*) Ամէն մասնիկով ոսկեդարեան բառեր կան, բայց ամենէն և աւելի նշանակութիւն չ'ունին: Զոր օր. — Ամենագէտ, Ամենակալ, չեն նշանակեր ամենէն աւելի գիտուն, ամենէն աւելի, այլ ամէն բան գիտցող և ամէն բան իւր ձեռքը. — Աստուած ամենակարող — Ամէն բանի կարող:

Այսպէս կը խոնարհուին Ան վերջացող բոլոր ներդ. և չէզոք բայերը, Կարդան, Հաւատան. Ողբան, Լան (արմո. լաց). հրմ. Լա'ց.— Գնամ, Գնացի, Գնա : Կան (արմ.կաց), կացի, կաց կամ եկաց : Խաղան, Փռարան ե ին : Գիտող.— Ա. լծորդութենէն Ասեմ, (=ոսել). Գիտեմ, Կարեմ (կրնամ), և Մարթեմ (կարենամ) բայերն այ կառարեալին, ապառնիին, հրամայականին և անդ. ընդունելութեան մէջ Գ. լծորդութեան պէս կը խոնարհուին :

Կար. Ասացի, ասացեր, ասաց, ասացոյ, ասացիք, -ցին.

» Գիտացի, գիտացեր, գիտաց, գիտացայ, -ցիք, -ցին.

» Կարացի, կարացեր, կարաց, կարացայ, -ցիք, -ցին.

» Մարբացի, մարբացեր, մարբաց, մարբացայ, -ցիք, -ցիք, մարբացին, կ'ըլլայ նաև, Բ. լծորդութեան պէս, Մարբացայ, մարբացար, մարբացաւ, մարբացոյ, -ցոյք, ցան.

Ապառնի. Ասացից, ասացես, ասացեք, -ցոյք, -ջիք, ցեն.

» Գիտացից գիտացես, գիտացեք, -ցոյք, ջիք, ցեն.

» Կարացից, կարացես, կարացեք, -ցոյք, -ջիք, -ցեն.

» Մարբացից, մարբացես, -ցե . ուք, -ջիք, -եք. կ'ըլլայ

նաև Մարբացայց, մարբացիս, -ցի, -ցոյք, -ջիք- ցին.

Հրմ. Անմ կամ ասացիր, ասացիք կամ ասացիք.

» Գիտա՛ կամ գիտացիր, գիտացիք կամ գիտացիք.

» Կարա՛ կամ կարացիր, կարացիք կամ կարացիք.

» Մարթա՛ կամ մարբացիր, մարբացիք կամ -ջիք.

Ստորագրասական.

Անց. Ընդ. Ասացեալ, Գիտացեալ, Կարացեալ, Մարբացեալ.

Գիտ. — Կարեմ և Մարթեմ բայերը կրաւորական չունին : Ճիշտ Աղանին պէս կը խոնարհուին Կեան (=ապրիլ), անկանոն բայն ու Ասեան (=ասեմ) բայը, որոնց եւս մասնիկը ե-ի՞ կամ ե-ի կը փոխուի, քանի մը ժամանակներու մէջ.— Կեան, արմ. Կեցի =կեաց.

Սահմ. Եղանակ Ներկայ

Եղ. կեամ, կեսս, կեայ  
Յգ. կեամք, կեայք, կեսն

Անկասար

Եղ. կէի, կէիր, կեայր(եռ-է-ի)  
Յգ. կէաք, կէիք, կէին

Անցեալ Կասարեալ

Եղ. կեցի, կեցեր, կեաց  
կամ Եկեաց  
Յգ. կեցաք, կեցէք, կեցին

Ապառնի

Եղ. կեցից, կեցցես, կեցցէ  
Յգ. կեցցուք, կեցցիք, կեցցեն

Հրամայական Եղանակ Ներկայ

Եղ. կեա՛ց, կեցջիր (Յգ.) կեցէք

Արգել. Մի՛ կեար, Մի՛ կեայք

Ստորադասական

Եղ. կեայցեմ, (կամ կեցեմք),  
կեայցես, կեայցէ

Յգ. կեայցեմք, (կամ կեցեմք),  
-ցեք, -ցեն

Անորոշ Դերբայ կեալ

Անց. ընդ. կեցեալ

Ապառնի ընդ. կելոց

Սահմ. Եղանակ Ներկայ

Եղ. Ասեամ, Ասեսս, Ասեայ  
Յգ. Ասեամք, Ասեայք, Ասեան

Անկասար

Եղ. Ասէի, Ասէիր, Ասեայր  
Յգ. Ասէաք, Ասէիք, Ասէին

Անցեալ Կասարեալ

Եղ. Ասեցի, Ասեցեր, Ասեաց  
Յգ. Ասեցաք, Ասեցէք, Ասեցին:

Ապառնի Դերբայ

Եղ. Ասեցից, Ասեսցես, -ցէ  
Յգ. Ասեսցուք, -ցիք, -ցեն

Հրամայական Եղանակ

Ասեա՛, Ասեսջիր, Ասեցէք, -ցիք

Արգելական

Մի՛ ասեար, Մի՛ ասեայք

Ստորադասական Եղանակ

Եղ. Ասիցեմ, Ասիցես, Ասիզէ  
Յգ. Ասիցեմք, Ասիցէք, Ասիցեն

Անորոշ Դերբայ. Ասեալ կամ Ասել

Անցեալ Դերբայ

Ասեցեալ

Ապառնի Դերբայ. Ասելոց

Գ. Լծորդութեան ամանց ձեւը

Սահմանական Եղանակ Ներկայ

Եղ. Սսանամ, Սսանաս, Սսանայ  
Յգ. Սսանամք, Սսանայք, -ան

Անցեալ Անկասար

Եղ. Սսանայի, Սսանայիր, -այր  
Յգ. Սսանայաք, -այիք, -ային

Անցեալ Կասարեալ

Եղ. Սսացայ, Սսացար, -ցալ

Յգ. Սսացաք, Սսացայք, -ցան  
Ապառնի

Եղ. Սսացայց, Սսացսիս, -ցի  
Յգ. Սսացուք, Սսացիք, -ցին

Հրամայական Եղանակ

Եղ. Սսացիր, Յգ. Սսացարուք

Արգելական Եղ. Մի՛ Սսա-

նար, Յգ. Մի՛ Սսանայք

Ստորագասական	Անորիշ Գերբայ.	Սսանալ
եզ. Սսանայցեմ, -ցես, -ցէ	Անցեալ Գերբայ.	Սսացեալ
Յոգ. Սսանայցեմք, -ցէք, -ցեն	Ապառնի Գերբայ	Սսանալոց

Այսպէս կը խոնարհուին անամ վերջացող ներդործական և չէզոք բայերը, ինչպէս. Գոհանամ, Գողանամ, Խոսանամ, Կուրանամ, Հեռանամ, Մերկանամ, նոյնպէս եկամ վերջաւորող բայերը. ե՛՛ գիրն անխախտ պահելով, սակայն Արբեկամ, արբեկայի, արբեցայ, արբեցայց. հրմ. արբեցի՛ր, արբեկալ, արբեցեալ: Սսանամ-ինպէս կը խոնարհուին նաև հոյլ մը Ամ վերջաւորող բայեր — Հոգամ, Յնծամ, Որսամ, Յուսամ, կտր. Հոգացայ, Յնծացայ, Որսացայ, Յուսացայ, Ապասնի Հոգացայց, Յնծացայց, Որսացայց, Յուսացայց: Բայց հրամայականին միջ դարձեալ ճի՛շտ Ազամ-ին պէս կ'ըլլան, Հոգա՛, Յնծա՛, Որսա՛, Յուսա՛. իսկ կան անամ-ով՝ բայեր ալ, որոնք Ազամ-ին պէս հրամայական կ'ըլլան. Մոռանամ, հրմ. Մոռա՛ կմ. Մոռացիր: Լուանամ, լուա՛ կմ. լուացիր: Իմանամ, իմա՛ կամ իմացիր:

Բ Ա Ռ Ք

Ազանիմ. ազայ, ազիր, ազուցեալ. ն. Հագնիլ  
Գիշերել. Չ. Իջեւանիլ  
Հայիմ. — եցայ. Չ. Հայիլ  
Վարեմ. — վարեցի. Հ. Հերկել:  
Յաւելում. — ելի. հ. Աւելցնել  
Նիւթեմ. — եցի. ն. Մանել, Հիւսել, Պատրաստել,  
Դաւադրել: Ամենայն. — ի. ած Ամէն:  
Շեմարան. — ի, այց. գոյ. Ամբարանոց:  
Առ հոգալ իւրում. — Հոգալով, հոգալուն համար:  
Վայրենի. — լոյ. ած. Վայրի (եսպանի):  
Ի վայրի. — Բայ տեղ: Վաղիւ. մի. Վաղը:  
Զգենում. զգեցայ. ն. Հագնիլ:

ԺԲ. Սերմանացանն

1. Առ ծովեզերք == Ծովեզերքին մօտիկ. — Առ գործիականով, Բով, Բովնիլեր, մօտեն կը նշանակէ: Առ

գործիականով ժամանակը, օրովն ալ կը նշանակէ Առ կործանմամբ Իլիոնի—Իլիոնի կործանման ատենը Առ Սահակալ քահանայապետի—Սահակ քահանայապետին օրովը, ատենը :

2. Խոնեցան գնովալ = Անոր շուրջը, բոլորտիք խոնեցան : Զ. նախդրիւ գործիականը շուրջը, բոլորտիք կը կը նշանակէ և կը կոչուի Պարառական :

3. Մինչեւ ի նալ մեանել նմա.— Մինչափ որ նալ (Յիս.) մտաւ. մինչեւ մակրայր մինչև նախադրութենէ կ'որոշուի դիւրաւ : Մինչեւ մակրայ է առանց ց նախդրի տրականի, և կը նշանակէ այնչափ որ, իսկ մինչեւ ց, ժամանակ սահման, կը ցուցնէ. Մինչեւ ցգամաբել ցրոյն = Մինչև որ ջուրը ցամքեցաւ : Մինչեւ ցամաբել ցրոյն = Այնչափ որ ջուրը ցամքեցաւ. այնպէս ալ՝ Մինչեւ նալ մեանել = Այնչափ որ նալը մտաւ :

4. Սերմանող.— Ոսկեղինիկ հայերէնի մէջ — ողմիայն ներկայ ընդունելութիւնը իբրև բայանուն, գոյական կը գործածուի առանց խնդիրի :

5. Ոչ գոյր հիւք երկրին = Երկրը հիւք չունէր. — Գոմ, բայը իբրև եմ-էականին նոյնանիչն է և սեռական ընտրութեան խնդիր կ'առնէ որ է երկրին : Գոմ (ըլլալ պակասաւոր բայ մըն է, Սահմ. ներկայ, Ստորագատական և Աներեւոյթ ունի միայն : Սահմ. — Գոմ, գոյ, գոյ գոմք, գոյք, գոն : Անկար. — Գոյի, գոյիք, գոյր, գոյաք գոյիք, գոյին : Սար. — Գուցեմ, գուցես, գուցեք, գուցեմք, գուցեքք, գուցեն :

6. Ի մէջ փոց = Փուշերուն մէջ.— Ի մէջ նախադրութիւնը տրական խնդիր կ'առնու, որ է հոս՝ փոց :

7. Զի ոչ գոյին արմատ ցամաբեցաւ = Որովհետև արմատներ չ'ունէր չորցաւ. երբեմն՝ սեռական խնդիր կը գեղչուի, որ է նորա (Զի ոչ գոյին նորա արմատ) :

8. Ընդ միոյ երեսուն = Մէկուն տեղ երեսուն. — Ընդ սեռականով փոխանակ, տեղը կը նշանակէ :

## Բ Ա Ռ Ք

Սերմանացան.— ի, այց. ամ. գոյ. Սերմ ցանող տերմանահան : Խոնքիմ.— եցայ. Զ. Դիզուիլ :

Ուսուցանեմ.— ուցի. ն. Քարոզել, Սորվեցնել :  
Գոմ.— Գոյ, գոյի, գուցէ. Զ. Ըլլալ, Կենալ :  
Պտուղ տալ.— ետ. ն. Պտղաբերել :

ԺԳ. Այլակերպս լինել Յիսուսի

1. Առնու ընդ իւր— Իր հետը կ'առնէ, ընդ անու-  
րոջ հայցականով թէ եզակի և թէ յոյնակի հետը կը  
նշանակէ, յոգնակին է, Ընդ իւրեանս— Իրենց հետ :

2. Առաջի նոցա— Անոնց առջին.— Առաջի, սե-  
ռական խնդիր կ'առնու : Մովսիսիւ հանդերձ— Մովսէ-  
սին հետ մէկտեղ, հանդերձ նախադրութիւնը գործիա-  
կան հոլով խնդիր կ'առնու. Զոր օր. Մովսիսիւ հան-  
դերձ : Հանդերձ մարքն իւրով— Իր մօրը հետ միատեղ :  
Հանդերձ, թէ նախադաս և թէ յետադաս կրնայ դրուիլ :  
Այլովն հանդերձ և յն. :

3. Արացուց երիս տալաւարս, մի՛ քեզ, եւ մի՛ Մով-  
սիսի, եւ մի՛ Նդիայի— Երեք տաղաւար շինենք, մէկը  
քեզի, մէկը Մովսէսի և մէկն ալ Նդիայի : Մի թուա-  
կանին քով պէտք է իմանալ տալաւար, Մի տաղաւար և շն :

Բ Ա Ռ Ք

Այլակերպութիւն.— եան. գոյ. Ուրիշ կերպարանք  
առնել, փոխուիլ :

Ընդ — նիս. Հետ, մէկտեղ. 2. դէպի. 3. մէջէն.

4. տեղը, փոխանակ. 5. տակը :

Ընդ... ընդ.— կրկնուելով՝ Մէջը, մէջտեղը :

Նյանեմ.— Զ. Նլլել

Լեառն— լերին. Գ. լերամբ, լերին, լերանց. Գյ. Լեռ :

Յայլակերպս լինել— եղել.— Զ. Ուրիշ կերպարանք  
առնել : Առաջի.— նիդ. Առջեւը :

Զորձ — ոյ.— Գոյ. Զգեստ, լաթ :

Թափիշ— շի, շաց.— Գյ. Լաթ լուացող, ճերմկցնող :

Ռաբբի.— Իրր. գյ. Վարդապետ (իրր— րաբունի) :

Բարւոք.— մկ. Աղէկ, լաւ :

Զարհուրիմ— եցայ.— Զ. Սարսափիլ :

Առնել— Արարի, արա՛, արարեալ.— Շինել, ստեղծել :

Հովանի— նույ, նեալ.— Գյ. Շուք :

Լսեմ=Լուայ, լուբ. լուարուբ, լուեայ.— ն. Մարտի  
ընել, ականջ դնել :

Իւր=Իւրեանց, եամբբ.— Տր. Իրեն, իրենց, իրենցմով :

### ԺԴ. Վասն որդւոյ այլուոյ

1. Եւ մասուցեալ (Յիսուս) ի դագաղսն= Յիսուս  
դագաղին մօտնալուով : Յիսուս ուղղական ենթակած  
լուեղեայն է : Դագաղի միշտ իբրև անեղական կը գործ  
ծածուի Գրարարի մէջ : Արի=եյի՛ր— Յառնեմ-ին հրա  
մայականն է : Ասեղի առնուլ.— ոճ=կանգ առնուլ, կենալ

### ԺԵ. Երկու լումայք կնոջն այլուոյ

1. Ընդդէմ գանձանակին= Գանձանակին դէմ. —  
Քնդդէմ նախադրութիւնը և իր հումանիշները՝ Հանդէպ,  
Յանդիխան, սեռական խնդիր կ'առնուն :

2. Արկ երկուս լումայս= Երկու լումայ ձգեց, —  
Երկու, երեք, չորս գոյականէն թէ առաջ և թէ ետք  
դրուելով կը հոլովուին և միշտ յոգնակի են, եղակի  
չունին, իսկ մի արդէն եղակի է : Բացարձակ թուական-  
ները, հինգ-էն սկսեալ մինչև վերջը թէ եղակի և թէ  
յոգնակի կը հոլովուին, և թէ գոյականին հետ կը համա-  
ձայնին, թէ և անհամաձայն ալ կրնան մնալ : Հաւատա-  
քապէս կրնանք ըսել, Սօթանց սարկաւազաց և եօթն  
սարկաւազաց :

3. Առ ինքն= Իր քովը. — Առ անորոշ հայցակա-  
նով քով կը նշանակէ :

4. — Յաւելորդաց իւրեանց= Իրենց աւելորդներէն.  
— Իւրեանց միշտ յատկացուցիչ լուծելու է, ինչպէս  
նաև, նորա :

5. Արկ գոյիւ չափ գբանս(ստացուածք, ինչք) իւր=  
Իր ունեցածը ամբողջապէս ձգեց. — Գոյիւ չափ մակրայ է :

### Բ Ա Ռ Ք

Լումայ.— Ստակ (ագչէ)

Նախարակիս= Նաքարակտի.— Ստակին մէկ չոր-  
տորդ մասը :

Արկանեմ=արկի.— ն. **Ձգել** :

Գոյիւ չափ.— մկբ. *Ունեցածը, չ'ունեցածը, բո-  
նդակապէս :*

### ԺՁ. Յիսուս սասեկ ծովուն

1. **Ձկնի նորա=Անոր ետեւէն.**— Ձկնի, զհետ (=ետե-  
ս) սեռական հոլով խնդիր կ'առնուն, այսպէս զհետ  
չչին=Փրկչին ետեւէն. Ձկնի-ին զ'ն յաճախ կը տե-  
փոխուի. ինչպէս. Ձկնի չարին կրնայ ըլլալ Չարին  
իի, և զչարին կնի, կամ զ կրկնուելով խնդրին վրայ.  
արին զկնի. կրկնութենէ խոյս տալու համար Ձկնի կը  
դչուի. օր. *Ձկնի նոցա երթան և զմեր ոչ գան :*  
*անապէս կրնան տեղափոխուիլ :* Ի վերայ երկրի =  
բկրի վերայ : Առ ընթեր (քովը) զետոյն = Առ գետոյն  
Քեր : Վասն մարդոյ= Մարդոյ վասն : Ի սակս (=հա-  
ր) ձեր=ի ձեր սակս ևլն. երբեմն ալ բողոքովին կը  
ւանայ նախադրութիւնը. օր. *Վասն ի լաւութիւնս  
արդն յորդորելոյ ևլն :*

2. Մինչ նալին ծածկել յայեաց=Այնչափ որ նաւը  
իքներէն կը ծածկուէր. նալին՝ տրական ենթակայ է  
ծկել-ին :

### Բ Ա Ռ Ք

Սասեմ=սեցի.— Ձ. *Յանդիմանել, կշտամբել :*

Ի.— նխ. *Տրականի, բացառականի և ներգոյակա-  
վրայ. մէջ, վրայ, համար կը նշանակէ :*

Ձկնի.— նխդ. *Ետեւէն :*

Մասչիմ= մասեայ, մասիր, մասերուք. Ձ. *Մօտենալ  
Յարուցանեմ= ուցի, ուցեալ. — ն. Արթնցնել,  
ք հանել :* Կորնչիմ=կորեայ. Ձ. *Կորսուիլ :*

Ընդէր.— մկբ. *Ինչո՞ւ :* Վասասիրս.— ած. *Վախկոտ  
Սակաւահաւաս.— ած. գյ. Թերահաւատ :*

### Բ Ա Ր Դ Բ Ա Ռ Ե Ր

Վասասիրս.— *Բառերուն կազմութիւնը ցոյց կու-  
այ երեք երեւոյթ, պարզ կամ արմատ, ամանցև բարդ .*

Բարդ-բառ կը կոչուին ա՛յն բառերը, որոնք երկու կամ աւելի բառերով կազմուած են : Բարդութեան մէջ կը մտնեն սնուն, ածական, բայարմատ, ընդունելութիւններ, նախդիրներ և մակբայ, զորս կը կցորդեն ա, ե, Է տառերը, որ յօդակապ կը կոչուին :

Ա-ով կը յօդակապուին, երբ առաջին բառը բաղաձայնով սկսի . Օր . Վատասիրտ = վատ-ա-սիրտ : Ամ-ա-նոր . Բան-ա-սէր , Մարդ-ա-սէր . Սով-ա-ման . Մարդ-ա-շատ , Գր-ա-գէտ ևլն . :

Գիսող . — Առաջին բառն է հոլովական փոփոխու մը պատողը , իսկ երկրորդը անփոփոխ կը մնայ յաճախ . բայասիկ են՝ սիամօր , ծովեղեր , հինաւորց , բարդածանց համհօրեայ (մէկ հայր ունեցող) , որոնց երկրորդ բառը փոխուած է : Օր . Ատեան , Ատենադպիր , դեւ (եւ = ի) դիւահար . բայց երբ բառ մը ինքն իրմով բարդուի յօդակապ չի դրուիր . վազվազ , փոփոխ (= փոխ-փոխ) , հեղեղ (= հեղհեղ , երկրորդ և զեղչուած) , Բարբառ (Ա . ուն ր-ի կը փոխուի) , Կարկառ , (ն գլխէն դատ երբ ուրիշ բաղաձայնի մը հանդիպի ր-ի կը փոխուի) , Յարմար (յ-ն վ-ի կը փոխուի ձայնական օրէնքով) ևլն . : Սակայն կան ալ որ ա-ով կը յօդակապուին . ինչպէս , Չարաչար , Մեծամեծ , Գունդագունդ . երբեմն երկրորդ բառին սկզբնատառը և մերթ միջնատառը կը փոխուի . — Աղխաճաղխ (թ . եր . ք , տէնկ) , Աղջաճուղջ , Սթածաճուճ , Շեղտամեղտ (չըլըխաի) , Բարձրարբրձ , Ժանտաժաւտ , Թոթով (թովթով) , Շաղփաղփ (= շաղփշաղփ) , Սպառսպուս (փոխանակ սպասսպաւ-ի) : Կցուածով բառեր ալ կան , առանց բառի մը փոփոխութեան և առանց յօդակապի . Կաթնկեր , Ժուժկալ , Քարկոծ , Չեւնաու , Չեւընպահ , Չեւնթափ ևլն . :

Ա-ով կը յօդակապուին երբ առաջին բառը ձայնաւորով վերջանայ , Զոր օր . Է-ա-կից , Մնտոխ-ա-պաշտ :

Եթէ առաջին բառը բաղմալանկ ըլլալով ի վերջաւորի , ի-ն և կամ իա-ն Է-ի կ'ամփոփուի . Զոր օր Բարի-ա-կամ = բարեկամ , Գերի-ա-դարձ = գերեդարձ , Թերի-ա-հաւատ , հոս ալ ի-ն ջնջուելով կ'ըլլայ թերահաւատ ևլն . : Եթէ նախադաս բառը ձայնաւորով վերջանայ և յետագայն ալ ձայնաւորով սկսի , երբեմն եր-

կուքն ալ անեղծ կը մնան, իսկ երբևի՛ն ալ կը սղուին, ինչպէս— Մարգարէաւանդ, Զիարչաւ, Միեղջերու, Դինըմպու, Դինարբուք, Բարի-արար—սղուելով — իաւե Բարերար. Եթէ առաջինը բաղաձայնով վերջանայ, իսկ երկրորդը ձայնաւորով սկսի, առանց յօդակապի կը միանան, Մարդատեաց, Բանտարգել, Գետեզր, Մովսի, Բարձրնտիր:

Ա-ի տեղ քիչ անգամ կը գործածուին ի, է, ո, և ու Քրէիքուր (=աղտեղի), Ագիկար, Քնէած, Խառնի-խուռն, Խառնիճաղանճ. Ընդոծին (ընդածին, իմաստով ալ կը տարբերի բնական, բնածին կը նշանակէ, իսկ ընդածին, աւելի՛ մեծատան մը ծառաները, Տան մարդ, Տղայ): Ու-ով Այրուծի, Տանուաէր, Հատուկտիր, Ութուտան, Թէև ու միշտ զգուշալի է:

Բարդութեան մէջ կը գործածուին սեռական ու հայցական հոլովները, Ո. Հրափայլ, Ս. Հորաքոյր, Կանանցարարոյ— Հ. Բանսարկու, Կենսատու, Սրէնսդիր, Մեղսակից եւն.:

Բայարմատներէ ալ բարդեր առաջ կուգան. Անձկայրեաց, Հրայրեաց, Գանձնկէց:

Դերբայներէ և բայածականներէ.— Շիչելափառ, Դիւրընթեռնի, Ընթելակից, Ամենօրհնեալ:

Դերանուններէ.— Ինքնարոյս, Եսասէր, Իւրաստեղծ եւն.:

Նախդիրներէ.— Յայգ, Յերիկ, Ընդասուն, Ընդարձակ, Առբերեմ, Զառիվայր, Դիրկընդխառն, Դիրկընդգիրկ: Ըստ—Դորս նշանակութեամբ բարդութեանց մէջ կը գործածուի առանձ ը-ի. Ստգիւտ (փոխ. ըստ գիւտ-ի, մեղադրանք), Ստունգանել (փոխ. ըստ ունկն—Ականջանցուկ), Ստերիւր (ճամբէ շեղած):

Մակրայներէ.— Դեուարոյս, Հանապազաստուտ, մըշտադալար, Յարածուփ, եւն. Եաղկապ ու միջարկութիւն ո՛չ ածանցման և ոչ իսկ բարդութեան մէջ կը գործածուին—Թէական, Թէութիւն, Թէարան եւն. յետնադարեան յերիւրանքներ են:

Դիտելի է որ բարդման մէջ երկրորդ բառը՝ եթէ բայարմատ է իր բային նշանակութիւնն ու խնդիրները կը պահէ. Զոր օր. Կուսածին—ի կուսէ Մնեալ, Կա-

նանցածին = ծնեալ ի կնոջէ կամ ծնունդ կանանց, Մահաշունչ = որ զմահ շնչէ (= մահ շնչող). Խանձարագատ = ի խանձարուրս պատեալ. նախադաս անունն իբր յատկացուցիչ — Աստուածորդի = Որդի Աստուծոյ, Քրոջներամ = երամ թռչնոց, Գարեհատ = հատ գարւոյ եւն. :

Գոյականը գոյականի հետ, ածականն ալ ածականի հետ բարդուած ատեն, բարդբառը ածական կ'ըլլայ բայց գոյականաբար կրնայ գործածուիլ : Աւագորեար, Մանրալեզու, Ձիւնափայլ. երբ գոյականը բայարմատի ժը հետ բարդուի, ըստը ածական կ'ըլլայ. Չոր օր. Մատենագիր, Մատենագէտ, Արծաթասէր, Փառասէր եւն. :

Դիտող. — Բարդման մէջ անեզականները եզակի կ'ըլլան, եթէ իրենց էն արմատական չէ. սյսպէս, Դագաղք, Դժոխք, Փառք, Պատճառք, Կառք, Կիրք, Մեղք, եւն. իսկ եթէ բառերուն մէջ քարմատական չէ, և այս յայտնի կ'ըլլայ բարդ կամ ածանց կազմուած ատեն, Դժոխային, Կրայոյղ, Մեղազարտ, Փառապսակ :

Երբ բարդութիւնը երկուքէ աւելի բառերով ըլլայ յարաբարդ կը կոչուի, Չոր օր. Միարանասէր, Աստուածընդդէմ (Աստուած միշտ առաջ կը դրուի, բայց երբ կուռք կը նշանակէ կը յետադասուի — ինչպէս. Բազմաստուածեան), սակայն զգուշալի է յարաբարդը :

Շատ կարեւոր է մատնանիչ ընել որ, բարդութեան մէջ յետադաս բառերը իրենց հոլովումը կը փոխեն. — Գիր, գրոյ, գրոց : Մատենագիր, մատենագրի, մատենագրաց : Գործ, գործոյ, Այգեգործ, այգեգործի, այգեգործաց : Գ. հոլովանիչը (ո) եզակիի մէջ Գ. (ի) և Ա. (ա) յոգնակիին մէջ. Ձէն, զինու. : Սպառազէն, սպառազինի, սպառազինաց : Ե. հոլովանիչը (ու) եզակիին մէջ Գ. (ի), իսկ յոգնակին՝ (ա)ի տակ կ'երթայ Աղքատասէր (Մէր = սիրոյ), = սիրի, = սիրաց եւն. :



**ԺԶ. Ուրախութիւն յերկինս ընդ դարձ միոյ մեղաւորի**

1. Ո՛չ թողուցու=**Չթողուր**.

**Դ. Լ Ծ Ո Ր Դ Ո Ի Թ Ի Ի Ն . — ( Ո Ի Մ )**

**Դ. Լծորդութեան բայերն ալ կը խոնարհուին  
այսպէս Թողուչ Ա. արմաս Թոյ**

Սահմ. եղանակ ներկայ	Յոգ. Թողուոք, Թողչիք, Թողցնէ
Յոգ. Թողում, Թողուս, Թողու Յոգ. Թողումք, Թողուք, Թողուն	Հրամայական Նղանակ
Անց. Անկասար	Նղ. Թո՛ղ, Մի՛ թողուր Յոգ. Թողե՛ք, Մի՛ թողուք
Յոգ. Թողուի, Թողուիր, Թողոյր Յոգ. Թողուաք, Թողուիք, Թողուին	Ստորադասական Նղանակ
Անցեալ Կասարեալ	Նղ. Թողուցում, -ցուս, -ցու Յոգ. Թողուցումք, -ցուք, -ցուն
Յոգ. Թողի, Թող եր Թող[ <sup>ո</sup> ] Յոգ. Թող փակ վանկը տեղեկութեամբ երող Յոգ. Թողաք, Թողեք, Թողին	Անարիւ Դերբայ. Թողուլ
Ապառնի	Անցեալ Դերբայ. Թողեալ
Յոգ. Թողից, Թողցես, Թողցէ	Ապառնի Դերբայ. Թողոց

**Ոււի ամանց ձեւն է, Ընկենում, բայադրեալ  
արմաս ընկ-են, ընկ-եց**

Սահմ. եղանակ ներկայ	Ընկեսցուք, -Ընկեսցիք, -ցեն
Ընկենում, Ընկենուս, Ընկենու Ընկենումք, Ընկենուք, Ընկենուն	Հրամայական Նղանակ
Անցեալ Անկասար	Ընկեա՛, Մի՛ ընկենուր Ընկեցե՛ք, Մի՛ ընկենուք
Ընկենուի, -նուիր, -նոյր Ընկենուաք, -նուիք, -նուին	Ստորադասական Նղանակ
Անցեալ Կասարեալ	Ընկենու-ցում, -ուս, -ու
Ընկեցի, -ցեր, (Ընկեաց)	Ընկենուցումք, -ուք, -ուն

[<sup>o</sup>] Փակ է վանկը, երբ բառի մը վերջին վանկը ձայնաւորէն ետքը  
դրուած բաղաձայնով մը կը վերջաւորի, իսկ Բաց է վանկը, երբ ձայ-  
նաւորով մը կը յանգի. օր. Արս՛. Գ. լծորդ. հրմ. եզ. Բ. դէմքը. Բայե-  
րու կտր. եզ. Գ. դէմքը, եթէ փակ վանկ ունենայ կ'անցուի նը կա-  
տարեալ կազմող տասուով, Թող, ևՅող. Տես, էտես ելն. իսկ երբ բաց  
վանկ ըլլայ. և տասին տեղ է կը դրուի. օր. Ա՛ն, Է՛տես. Օ՛ձ, Է՛օձ ելն.  
պայմանաւ որ միավանկ ըլլայ :

Ընկեցաք, Ընկեցէք, -ից

Անորիշ Դերբայ. Ընկեցուլ

Ապ սոնհի

Անցեալ Դերբայ. Ընկեցեալ

Ընկեց-ից, Ընկեցես, -ցէ

Ապսոնի Դերբայ. Ընկեցից

Ուն պարզ ձեւով կը խոնարհուին բոլոր ուն վեր-  
ջաւորող բայերը: Այսպէս.

Չենոււն (մորթել) զեն, զեն կամ եզեն, հրմ. զեն

Հեղոււն (թափել) հեղի, հեղ » եհեղ, » հե'ղ

Կիզոււն (այրել) կիզի, կիզ, » եկիզ, » կե'զ

Արգելոււն, արգելի, արգել, հրմ. արգել':

Իսկ Ընկեցոււն-ին պէս կը խոնարհուին. նուա՛ն կամ  
ենոււն ածանցները Այսպէս.

Չզենոււն, զզեցայ. հրմ. զզեցիր, զզեցարաք. նոյնպէս

Սկսոււն, Սկսայ, հրմ. Սկսիր

Ընթեւնոււն (կարդալ) ընթեցայ, ընթեռյի՛ր

Չքօսոււն, գքօսայ, գքօսիր

Չերծնոււն (ազատել) զերծայ, զերծիր

Յենոււն (կռթնել) յեցայ, յեցիր ևլն:

Չորս լծորդութեանց Ա. եւ, աւ-եւ. Բ. իւ, աւ-իւ:  
Գ. աւ, աւ աւ: Գ. ուն, նուն կրաւորականները կազմելու համար սա ընդհանուր կանոնն ի յայտ կուգայ թէ՛ եւ. Բ. լծորդութեան Ա. ձեւին իւ=Սօսիւմ-ին ներգործակերպ խոնարհման պէս կրաւորական կ'ըլլայ աւ-եւ, իւ-ի Բ. ձեւին, Ուսակիւ-ին պէս: Բ. լծորդ. իւ, աւ-իւ կրաւորականը և ներգործականը նոյն են: Գ. լծորդ Ամ, իր Բ. ձեւին՝ աւ-աւ-ին պէս կ'ըլլայ, իսկ ուն իր նուն ածանցին յար և նմանն է:

Ա. լծորդ. կրաւորականը եւ-ի ե զիրը ի-ի փոխելով կը կազմուի: Այսպէս.

Սահմ. Եղանակ ներկայ

Սիրիմ, -իս, -րի = կը սիրուիմ

Սիրիմք, Սիրիք, Սիրից

Անցեալ Անկատար

Կրաւորական և ներգործական նոյն են.

Սիրէի, Սիրէիր Սիրէր ևլն. որով կը նշանակէ, թէ՛ կը սիրէի և թէ՛ կը սիրուէի

Հրամայական Եղանակ

Սիրեա՛ց, Սիրեսցիր, Սիրուէ՛ [ցէք

Սիրեսցարուք, Սիրեսցիք, Սիրուե-

Արգելական

Մի՛ Սիրիր, Մի՛ սիրուիր

Մի՛ Սիրիք, Մի՛ սիրուիք

Ստորադասական Եղանակ

Սիրիցիմ, -ցիս, ցի = Սիրուիմ

Սիրիցիմք -ցիք, -ցից

Անորոշ Դերբայ. Սիրել

Ապառնի

Սիրեցայց, Սիրեցիս, - ցի  
Սիրեցումք, Սիրեսչիք, - ցիք

Անցեալ Գերբայ.

Սիրեալ կմ: Սիրեցեալ=Սիրուած  
Ապառնի Գերբայ  
Սիրելոց=Սիրուելիք, նաև՝ Սիրելի

Գիտնող. Անց. Կատարեալի Եղ. Գ. դէմքէն առնուած  
Բ. արմատով (Ա. արմատ Սէր). և Սիրեաց=սիրեց-ով (ս  
ձայնաւորին սղմամբն) կրնայ կազմուիլ ներգործական,  
ներգործակերպ և կրաւորակերպ չէզոք բայերուն անցեա-  
լը. Օր.— Կոչեւ, կոչ-եց-եալ. Ննջեւ, նն-ջեց-եալ. — եւ  
վերջաւորած բոլոր ներգործական բայերն այսպէս կրա-  
ւորական կ'ըլլան. Անիւ, աճ-եց-եալ. Հայիւ, հայ-եց-եալ.  
Նայիւ, նայ-եց-եալ. Խօսիւ, խօս-եց-եալ=Խոսուած. Իսկ  
Խօսեալ (նշանած). — եղեալ ձեւը կրաւորականի յատուկ է,  
երբ մանաւանդ հոլովուած ըլլայ. Օր. Ա. և Բ. Լծոր-  
դութիւններն են որ, եղեալ անցեալ կրնան ունենալ.  
Եւ վերջաւորած բոլոր ներգործական բայերն այս-  
պէս կրաւորական կ'ըլլան. Գրեմ, գրիմ. Կոչեմ, կոչիմ ևլն. :

Տեսա-ն-եւ, անեմ ածանց ձեւն ալ ե՛ր ի-ի փոխելով  
կ'ըլլայ Տե-սա-նիւ:

Սանմ եղանակ Ներկայ

Տեսանիմ, Տեսանիս, Տեսանի  
Տեսանիմք. - իք, - իք

Անցեալ Անկատար

Տեսանէի, - էիր, - էր = Տեսնուէր  
(Կր. և Ներգ. նշն են)  
Տեսանէամք, - էիք, - էիք

Տեսայ, - ար. - աւ = Տեսնուեցայ  
Տեսամք, Տեսայք, Տեսան

Ապառնի

Տեսայց, Տեսիցս, Տեսցի  
Տեսցումք, Տեսչիք, - ցիք

Հրամայական Եղանակ

Տեսի՛ր, Տեսցի՛ր = Տեսնուէ  
Տեսարուք, Տեսչիք = Տեսնուեցէք

Արլելական

Մի՛ Տեսանիր = Մի՛ Տեսնուիր  
Մի՛ Տեսանիք - Մի՛ Տեսնուիք

Ստորադասական

Տեսանիցիմ, - իս, - ի = Տեսնուիմ  
Տեսանիցիմք. - իք, - իք

Անորից Գերբայ. Տեսանիլ

Անցեալ Գերբայ  
Տեսեալ = Տեսնուած

Ապառնի Գերբայ  
Տեսանելոյ = Տեսնուելու

Այսպէս կը խոնարհուին անեմ վերջաւորող բոլոր  
բայերը ի նշպէս. Գսանեւ, գսանիւ, գսայ, գսի՛ր. Հար-

կանիւն, կամ հարայ, հարիր. Սպանանեմ, Սպանանիւ  
Սպանայ, Սպանիր :

Երկրորդ լծորդութեան իւն, և ան-իւն, վերջաւոր  
ուած բայերուն ներգործականն ու կրաւորականը նոյն է  
միայն թարգմանութիւնը փոխելու է. օր.

Խօսիւն, խօսեցայ = Խօսուիւն, խօսուեցայ  
Ուսանիւն, ուսայ = Սորվուիւն, սորվուեցայ և ըն. :

Գ. լծորդութեան Աւ-ին կրաւորականը իր ածանցի  
ան-ամ-ին պէս կ'ըլլայ :

Սահմ. Եղանակ ներկայ

Աղամ, Աղաս, Աղայ  
= Կ'աղացուիւն, -իս, -ի

Անցեալ Անկասար

Աղայի. Աղայիր, Աղայր  
= Աղացուիւն և ըն.

Անցեալ Կասարեալ

Աղացայ. -ար, -աւ  
= Աղացուեցայ և ըն.

Ապառնի

Աղացայց. -ասցիս, -ասցի  
= Պիտի աղացուիւն և ըն.

Աղացուիւն, -ցիք, -ցին

Հրամայական Եղանակ

Աղացի'ր = Աղացուէ' [ց]  
Աղացարուիւն, -ասցիք = Աղացու

Ստորադասական

Աղայցիւմ. -ցիս, -ցի = Աղացուի  
Աղայցիւմք, -ցիք, -ցին

Անորիւ Դերբայ.

Աղալ = Աղացուիլ

Անցեալ Դերբայ. Աղացեալ

Ապառնի Դերբայ

Աղալոց = Աղացուելու

Աւն վերջաւորած բայերուն կրաւորականն ալ այսպէ  
կ'ըլլայ : Լամ, շացայ, շացի'ր. Կարդամ, կարդացայ, կար  
դացիր. Հաւասամ, հաւասացից, հաւասացիր. Ողբամ  
ողբացայ, ողբացիր և ըն. :

Չորրորդ լծորդութեան կրաւորականը իր ածանցի  
ներգործակերպ խոնարհման յար և նմանն է :

Սահմ. Եղանակ ներկայ

Քողուիւն, -ուս, -ու = Կր թողուիւն  
Քողումք, -ուիք, -ուն

Անցեալ Անկասար

Քողուիք, -ուիր, -ուր = Կր թողուէ  
Քողուաք, -ուիք, -ուիք

Անցեալ կասարեալ  
Թողայ, -ար, -աւ = Թողուեցայ  
Թողաք, -այք, -ան

Հրամայական եղանակ  
Թողի՛ր = Թողուէ  
Թողարուք = Թողուեցեք

Ստորագասական եղանակ  
Թողուցում, -ցուս, -ցու  
= Թողուիք

Անորոշ Գերբայ

Թողուլ = Թողուիլ

Անցեալ Գերբայ

Թողեալ = Թողուած

Ապառնի Գերբայ

Թողոց = Թողուելու

Գիտող.— Նու՛մ վերջաւորած բայերուն կրաւորա-  
կանն ու ներգործականը միեւնոյն ըլլալուն պատճառաւ  
հասարակ բայ կոչուած են :

2. Զնե՛ս կորուսելոյն = կորսուածին ետեւէն . — Զհե՛ս  
նախադրութիւնը սեռական հոլով խնդիր կ'առնու, ինչ-  
պէս է կորուսելոյն . կորուսեալ, անցեալ ընդունելու-  
թիւնը իրրե գոյական գործածուելով հոլովուած է :

3. Անդ իս = Ինձի հետ . — ընդ առանց գ-ի հայցա-  
կանով հետը կը նշանակէ :

Քան վասն իննսուն եւ ինն արդարոց = Քան թէ ին-  
նիսուն և ինը արդարներուն համար . — քան հայցական  
խնդիրով քան գ . . . նախադրութիւն մըն է, իսկ երբ  
առանձինն ըլլայ շաղկապ է :

Առաջի հրեցական = Հրեցականներուն առջև . —

Առաջի նախադրութիւնը սեռական հոլով խնդիր  
կ'առնու : Հրեցական սեռական խնդիրն է առաջի խընդ-  
բառուին : Նոյնպէս սեռական խնդիր կ'առնուն առանց  
= առանց նորա : Յե՛ս = յես մահու, յե՛ս աւուրց, յե՛ս գա-  
լսեան : Յե՛սոյ (= ետեւը) նորա կայր . փոխանակ ջրոյ,  
Յանդիւնան, Յանդիւնան դրախտին, Հանդեպ, հանդեպ  
ճանն, Ի վերայ, ի վերայ երկրի, Առընթեր (= քովը) . —  
առընթեր խաչին, առընթեր գետոյն, Սակս ձեր (= համար)  
ի սակս ձեր, Յադագս (= համար) յադագս սիրոյ :

Բ Ա Ռ Ք

Կորուսանել.— Կորուսի, Կորուսեալ. ն. Կորսնցնել  
Ձեկ.— նիս. Ետեւէն

Ուրախ շիկիլ.— եղե, եղերուք. Չ. Ուրախանալ

Լուցանեմ.— ուցի շուցեալ. ն. վառել

Աւել ամել.— ոՏ= Աւելել

ՎԵՐՋ Ա. ՏԱՐԻՈՅ



**ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ**  
**Բ. ՏԱՐԻ**

## Բ. ՏԱՐԻ ՈՍԿԵՂԵՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ

### ԺԷ. Որդին անառակ

1. Յէս ոչ բազում աւուրց = Քիչ օրերէ ետք. — Յէս նախադրութիւնը սեռական հոլով խնդիր կ'առնու. Աւուրց սեռական խնդիր է յէս խնդրառուին: Գրաբաշխեզուի մէջ ա, ե, ի, ո, ու հնգեակ կանոնաւոր հոլովումներէն կը զարտուղին հետեւեալ անուններն, որոնք զարտուղի հոլովմունք անունը տուած են իրաւամբ, և են — Ո. Այր, Հ. զԱյր, Ո. Տ. Առն, Բ. յԱռնէ Գ. Արամբ = Յոգն. Արք, Հ. զԱրք, Ս. Տ. Արանց, Բ. յԱրանց, Գ. Արամբք. այսպէս կը հոլովուին այրով կազմուած բարբառներն ալ, Քեռայր, Կեսրայր, Տէր. — Ո. Տէր Հ. զՏէր — Ս. Տ. Տեառն, Բ. ի Տեառնէ, Գ. Տերամբ. Յգն. Ո. Տեարք, Հ. զՏեարս Ս. Տ. Տեարց կամ Տերանց, ի Տեարց կամ ի Տերանց, Գ. Տերամբք: Տէրով կազմուած բարդ բառերն ալ նոյնպէս կը հոլովուին, Պարտատէր, Տանուտէր, ինչ. Տանուտեառն ևլն, Հայր. Ո. Հայր, Հ. զՀայր, Ս. Տ. Հօր, Բ. ի Հօրէ, Գ. Հարբ կամ Հարամբ. Յոգն. Ո. Հարք, Հ. զՀարս Ս. Տ. Հարց կամ Հարանց, ի Հարց. Գ. Հարքք կամ Հարամբք. նոյնպէս են. Պատմահայր, Քերթողահայր, Խոստովանահայր, Տէրհայր, Նախահայր, Կնքահայր, Մայր, Եղբայր, Քաղաքամայր, Կնքամայր, Տիրամայր, Տեառնեզրայր:

Կին. — Ո. Կին, Հ. զԿին, Ս. Տ. Կտջ, Բ. ի Կտջէ, Գ. Կանամբ կամ կնաւ. Յոգ. Ո. Կանայք. Հ. զԿանայս, Ս. Տ. Կանանց, Բ. ի Կանանց, Գ. Կանամբք. նոյնպէս Առնակին, Տիկին, Տան տիկին:

Քոյր. — Ո. Քոյր, Հ. զՔոյր, Ս. Տ. Քեռ, Բ. ի Քեռէ, Գ. Քերբ. Յոգն. Քորք, Հ. զՔորս, Ս. Տ. Քերց Բ. ի Քերց, Գ. Քերբք: Նոյնպէս, Հօրաքոյր, Մօրաքոյր:

Գիւղ. — Ո. Գիւղ, Հ. զԳիւղ, Ս. Տ. Գեղջ, Բ. ի Գեղջէ, Գ. Գիւղիւ: Յոգն. Գիւղք, Հ. զԳիւղս, Ս. Տ. Գիւղից, Բ. ի Գիւղից, Գ. Գիւղիւք: Նոյնպէս Քաղաքագիւղ, Միջագիւղ:

Օր.— Ո. Օր, Հ. զՕր, Ս. Տ. Աուր, Բ. յՕրէ  
Գ. Աուրբ, Յոգն. Ա. ուրք, Հ. Ջաուրս, Ս. Տ.  
Աուրց, Բ. յԱուրց, Գ. Աուրբք ինչպէս է վերև  
աւուրց, նոյնպէս հասարակ օր (=կէսօր)=Օրհասարակ:

Տիւ.— (=ցերեկ) Ո. Տիւ, Հ. զՏիւ, Ս. Տ. Տուրնջ-  
եան, Բ. իՏուրնջենէ, Գ. Տուրնջեամբ: Յոգն. Տիւք,  
Հ. զՏիւս, Ս. Տ. (տուրնջեանց, ի տուրնջեանց, տու-  
րնջեամբք): Յոգն. Յոգն. Ո. (Տիւք) և Հ. զՏիւսմիայն  
յաճախուած են ,

2. ժողովեալ զամենայն կրսերոյն— կրտսերը ամէն-  
քան ժողովելով. — Ընդունելութիւն անցեալին տէր բա-  
յին սեռական կը դրուի, եթէ բայը ներգործական է. Օր.  
ժողովեալ զամենայն կրսերոյն. սեռական ենթակայ է.  
ժողովեալ ներգործական բային, իսկ եթէ բայը չեզոք է,  
ուղղական ենթակայ կը դրուի անցեալ ընդունելութեան  
քով. Օր. Մատուցեալ փարիսեցիքն ասնն ցՅիսուս:

3. Քանի՛ վարձկանք իցեն ի սան հօր իմոյ հացա-  
լիցք. — Իմ հօրս տան մէջ ո՛րքան հացալիցք վարձկան-  
ներ կան. — Հացալիցք, ածական ստորոգելին համաձայ-  
նած է թուով և հոլովով իր վարձկանք ստորոգեալին,  
որ ենթակայ է իցեն-ին: Այստեղ ստորոգելին ստորոգ-  
եալէն շատ հեռի դրուած է, մինչդեռ պարզ նախադա-  
սութեան մը մէջ պէտք էր գնել նախ ստորոգելին, յե-  
տոյ բայը և յետոյ ենթական կամ ինդիքը. Օր. Մեծ է  
Տէր — պահակ կալան գնա և ըն. : Ուրեմն պէտք էր ըլ-  
լալ Քանի՛ հացալիցք իցեն վարձկանք ի սան հօր իմոյ.  
սական հոս՝ հացալիցք և սովամահ բառերուն հետ հա-  
մեմատութիւն կենայով, գրողը համեմատութեան եզրե-  
րը իրարու կը մօտեցնէ, որով գրուածքին ոլորուն դար-  
ձուածք մը կ'ընծայէ:

Աւ ոչ եւս արժանի եմ կոչել որդի քո— Ա՛լ որգեղ  
կոչուելու արժանի չեմ: Արժանի իբրև արժանանալ չե-


չոք բայէն ծագած ածական մը տրական խնդիր կ'առնու: Բայց երբեմն ուղղական ալ կը մնայ. — Արժանի կոչելոյ, իսկ թէ դիմաւորի վերածուի, — ոչ եւս եւ՛ առժանի զի կոչեցայց որդի թո: Կարեւոր է զիտնալ որ, էական բայէն զատ կան հոյլ մը բայեր, որոնց տէր բային և երբեմն ալ սեռի խնդիրը ստորոգելի կ'առնուն: Այսօրինակ բայեր են, Կոչեմ, Անուանեմ, Առնեմ, Դնեմ, Կարգեմ, Կացուցանեմ: Այստեղ կոչեցայցի ենթական է ես, որուն ստորոգելին է որդի թո, բայց երբ կոչիչ ներգործական է, ըստ կանոնի ստորոգելին սեռի խնդրին կը վերաբերի, այսպէս. Կոչեցի զքեզ բարեկամ. բարեկամ ստորոգելի է զքեզ սեռի խնդրին, որուն համաձայնած է:

Մէջի՛նէկ օրինակ ալ տանք միւս բայերէն. — Որ անուանեցաւն Քրիստոս, ստորոգելի է որ ենթակային: Արար զնեզ սուրբս, ստորոգելի է զնեզ սեռի խնդրին: Դու զո՞ առնես զքեզ, զո՞ ստորոգելի է զքեզ սեռի խնդրին: Ո՞ կացոյց զքեզ դասաւոր, ստորոգելի է զքեզ սեռի խնդրին:

### Ի Ա Ռ Ք

- Անառակ. — ի, աց. ամ. Անամօթ, Շոայլ, Անկարգ,  
Ինչի. — ընչից. գյ. Հարստութիւն, ստացուածք,  
Կեանք. կենաց. գյ. Ստացուածք, Կեանք:  
Անդ. — մկ. Հոն:  
Վասնեմ. — ցեցի. ն. Շոայլել, Մսխել:  
Կեամ. — կէի, կէիր, կեայր, կեցի, կեաց, կեցեալ.  
Չ. Ապրիլ, Յղեմ. — ղեցի. ն. Ղրկել:  
Յարիմ. — եցայ. Չ. Կապուիլ  
Եկեալ ի միսս իւր. ոճ. Միտքը գալուիլ, Խելքի գալուիլ  
Գալ ի միսս կամ յիցն կամ ի խելս — Սթափիլ,  
Ուշաբերիլ, Պարարակ. — ամ. Գէր:

Հացալից .— *ած . Հացով լեցունս , կուշա ու կուռ ,  
 Կշտապինդ : Ընթանալ ընդ առաջ .— ոճ . Դիմաւորել :  
 Սովաման կորնչիլ = Սովաման լինիլ . ոճ . Նքթիլ ,  
 որ է անօթի մեռնիլ : Առ .— նիս . Դէպի , 2 .  
 Բովը , 3 . Համար , 4 Ժամանակը , Կողմը :*



Գալ բայով կը կազմա ին ընտիր ոճեր :

Գալ ի միսս = Ուշաբերել , Եկեալ ի միսս իւր :

Ընդ աղբ գալ , ընդ ծուխ , ընդ փոռի = Աղբիւսը  
 նստիլ , Լքուիլ . Ընտրեցի ես ընդ աղբ գալ ի սան Աս-  
 սուծոյ առաւել քան զբնականալ ի յարկս մեղաւորաց :  
 Զբանիւք գալ = Կրկնարանել , Հակասել , Զի մի  
 երեւեսցի ի մեջ անմտաց իբրեւ զբանիւք իմն եկեալ .  
 Զբանիւք եկեալ երեւեր :

Գալ ի գղջումն , յողորմութիւն , ի քնին , յանումն  
 ի վախճան , ի յուսմն եւլն . = Իբր զղջալ , Ողորմիլ ,  
 Բննել , Աճիլ , Վախճանիլ , Լրանալ :

Գալ ըս կամաց , կամ ըս բանի իմաստնոյն = Կարուի

Գալ ընդ կուսական արգանդ = Ծնանիլ ի կուսէ :

Գալ զսիրով ուրուք կամ իրիք , զմիմեամբք , զգրովք ,  
 զիւրիք , յարիլ , փարիլ , զխրատու եւ զիմաստութեամբ գային :

Ի դեպ գալ , Ելանել = Պատշաճիլ . Ի դեպ ելանե  
 նոցա ասուածական բարբառն

Զակամբ գալ = Աչքին իջնել , Գլուխը զարնել . Յորժամ  
 արբեցաւ , եւ զինին եկն զակամբ նորա :

Ընդ բերան գալ = Բերանը ըլլալ . ներգործական է ,  
 Ընդ բերան ածել = Միօրինակ զրուցել . Եւ դուք ձեզէն  
 իսկ զիտէք քե ալ զիրք այնպէս ընտանի ումեք ոչ են ,  
 որպէս սաղմոսն , զոր յամենայն ժամ ընդ քերան ածեն ,  
 և անդսին իսկ յիրացն յայտ է քե որչափ օգուտ մտաց  
 լինին յորժամ բանք սաղմոսիցն (= աջ) յօհնեալ ձայնիւք  
 միտք ընդ քերանսն գայցեն :

ԺԸ. Մի բարձրնօսիւ լինել ի կոչունս

1. Ասաց Յիսուս եւ առ կոչնակիսնս առակ մի = Յիսուս կոչնականներու վրայ առակ մ'ըսաւ. Առ նախ դրիւ անորոշ հայցականը ոչ թէ միայն դիպի փոքր կ'նշանակէ, այլ և վրայ, որովհետեւ հոս կոչնականներու չէ որ կ'ըսէ, այլ անոնց վրայ կը բերէ առակը և կա անոնց կ'ուղղէ:

2. Առ կոչնականսն = կոչնականներուն և յօդը՝ « բառի մը որոշեալ ըլլալը կը ցուցնէ, ունի բաղմաթի կիրառութիւններ, որոնց զլխաւորներն են.

Ա. — Անուն մը որոշ անձ մը կամ իր մը եղաւ ատեն յօդը անհրաժեշտ է Զոր օր. եզեն հայր Բո զեզն պարտակ = Պարտակ եզը. Առ կոչնականսն = կոչնականներուն. Մնաւ մանուկն = Մնաւ մանուկը. Մեկնեա զերազն = Մեկնեց կրազը:

Բ. — Երբ անուն մը ընդհանուր իմաստով առնու յօդ չառնուր. Օր. Գինի ուրախ առնէ և իւղ զուար Ամէն դինի և ամէն իւղ: Այսպէս անուն մը անոր իմաստով գործածուած ատեն, եթէ հայցական է, նախդիրն ալ չ'առնուր. Օր. Ա՛ն հաց (գոհացաւ). Ա՛ ոմն մեծաւուն ազանէր բեհեզս եւ ծիրանիս:

Գ. — Սեռ կամ տեսակ ցուցնող գոյականը և կա գոյականաբար առնուած ածականը, եզակիին մէջ յօդու իսկ յոգնակիին մէջ առանց յօդի կը գործածուին.

Օր. Ասաց անգգամն (եզ) ի սրտի իւրում թէ ոչ գի Աստուած: (յգն.) — Անգգամ գիրաս անգոսնեմ:

Դ. — Նոյնպէս անունը յօդ չ'առնուր, երբ իմ, Բո մե՛ր, ձե՛ր, իւր ստացական կամ յատկացուցիչ ածական ներուն և ևորա, ևոցա, իւրեան, իւրեանց, յատկացուցիչներէն մէկը ունի:

Իմ՝ ու՛մ = Տուն իմ տուն աղօթից կաշեցի.

Գո՛՞ւմ = Թողեալ լիցին եեզ մեզ Բո.

Մեր՝ ով = Մինչեւ ե՛րբ քափես զոգիս մեր .

Ձեր՝ ով = Հանդերձ ձեր սպիտակ .

Նոցա՝ ով = Տեսին զմայր նորս .

Նոցա՝ ով = Կատարել զհրաման նոցա .

Խորեանց՝ ով = Առ դրան խորեանց .

Գրտելի է որ, երբ գոյականին վրայ *ս*, *դ*, *ն*, նըշմարուին, այս, այդ, այն, ցուցական ածականներուն տեղ դրուած կ'ըլլան . Օր. Յորդոյս ինմե = Իմ այս որդիէս : Յերկրին ձերում = Ձեր այն երկրին մէջ : Յագարակն = Իր այն ագարակը . բայց բացառականի հետ աստի, անտի, այտի, մակբայները գործածելը աւելի ընտիր է . այսպէս . Յորդոյս աստի ինմե կ'ըն . նախդրու տրականի հետ, երբ բայը գագարում ցուցնէ՝ սովորաբար աստ, անդ, կը գործածուին, Բնականաց յերկրի աստ ինում = յերկրիս յայսմիկ կ'ըն . իսկ երբ բայը շարժում ցուցընէ ի նախդրու հայցականին հետ սյար, անդր, այր, մակբայները կը գործածուին այս, այդ, ան, ցուցական ածականներուն տեղ :

Ձոր Օր. — Առաքեաց ի քաղաք անդր նոցա = Ի քաղաք յայն նոցա : Գոյականները ցուցական ածականէն առաջ դրուած ատեն բնա՛ւ յօդ չեն առնուր . Օր. Այս այր . Ձայն տեղի . Յայրմ տան . այլ երբ վերջ դրուին յօդ կ'առնուն . — Այրս այս . Ձտեղիդ զայդ . Ի տանն յայնմիկ կ'ըն . :

Ե. — Երբ յօդ առնող անունները և շարկապով կապուած ըլլան յօդը առաջինին վրայ կը դրուի միայն . օր. Աղքատն և տնանկ, դպիրքն և փարիսեցիք են . բայց երբ յօդ առնող անունը յետադաս կամ նախադաս ածական մ'ունենայ, սովորաբար յօդը գոյականին վրայ կը գրուի . մեծ Թագաւորն Միքատո . — Իբրև ետես այլև իմաստուն գտին զժառայն հիւանդ բժշկեալ :

Զ. — Գոյականը յատուկ եղած ատեն յօղը նախա—  
դաս ածականին վրայ կը դրուի. երբ ածականը յետա—  
դաս ըլլայ երկուքն ալ յօղ չեն առնուր. — օր. — մեծն  
Աղեքսանդր. — Աղեքսանդր մեծ. — Երանելոյն Մես—  
րոպայ. — Մեսրոպայ երանելոյ .

Է. — Երբ յօղառու բառը յատկացուցիչ ունենայ,  
յօղը յատկացուցիչին վրայ կը դրուի թէ նախադաս և  
թէ յետադաս ըլլայ այն. այսպէս. Առ դրան Տաճարին.  
— Ետես զմայր մանկանն. — Կատարեաց զօրն հրաման ևն :

Նմանապէս դիմորոշ յօղը յատկացուցիչին վրայ կը  
դրուի, երբ յատկացեալը զօրութեամբ կիմացուի : Է  
Բարկութիւն որ գովելի է ի գրոց, որպէս Մովսէսին =  
որպէս Մովսէսի բարկութիւնն :

Ը. — Գոյական մը չկրկնելու համար, յօղը ածակա—  
նին վրայ կը դրուի. Զոր օր. Եկեալ իցէ օր տեսան՝  
մեծն և երեւելիին : Նոյնպէս ածականին վրայ կը դրուի  
յօղը՝ երբ գոյականը լուեղեալն է : Զորօր. Եթէ ընդ փայտ  
դալար զայս առնեն ընդ չորն (= փայտ). զի՞նչ, լինիցի :

Թ. — Յօղը յատկացեալին վրայ կը դրուի այն ատեն,  
երբ յատկացուցիչը յատուկ անուն մըն է. օր. Անդ էր  
մայրն Յիսուսի. Թարգմանիչքն Հայոց .

Գարձեալ յօղը յատկացեալին վրայ կը դրուի. երբ  
յատկացուցիչը եզական բան մը, կամ ամբողջ սեռ մը  
կամ տեսակ մը ցուցնող գոյական մըն է. օր. Որդիքն  
Աստուծոյ, — Զլոյսն արեւզական, Աստուած, Արեգակն  
եզական են .

Տէրն արարածոյ. — Աստուածն օրինաց. ամէն արա—  
րածոց տէրը ամէն օրէնքներուն Աստուածը. բայց յատ—  
կացուցիչը առաջ դրուած ատեն՝ յօղը իր վրայ կրնայ  
առնուլ վայելչօրէն. Օրինացն Աստուած. Արարածոցն տէր

Ժ. — Գոյականը բացարձակ թուականներուն հետ,  
երբ որոշ անհատը չի ցուցներ, յօղ չ'առնուր, ո՛չ ալ հայ—  
ցականին Զ նախդիրը. Զոր օր. տեսիւրս երիս, և տեսի  
զերիս արսն Ա. երեք մարդ տեսայ Բ. երեք մարդիկը  
տեսայ :

ԺԱ.—Գոյականը գառական թուականներուն հետ նա-  
խադասուելով յօդ կ'առնու անխտիր. Յաւուրն երրորդի :  
ԺԲ.—Գոյականը անորոշ ածականներուն հետ եր-  
բեք յօդ չ'առնուր, քանի որ արդէն անորոշ ածական-  
ներն են որ, անորոշ իմաստ մը կը յայտնեն. Վարդապետ  
ունն. Իշխան ունն. ծառայ ոք. Արք ունախ. Զայլ քաղաք.  
Յայրեն քաղաք. Այլով քաղաքաւ եւն.

Բարձրնիւր շինիւն.— ոճ. Առաջին տեղը փնտուել,  
տեղւոյ՝ Բարձի (բազմոցի վրայ կը նստէին) ընտրութիւն  
ընել.

Կոչունիք=նոց.— գոյ. Խնճոյք.

Բազմիչ=մնցայ.— Զ. Նստիլ.

Ի վեր մատչիլ.—Վեր ելլել.

Ձեռնին տնայն ունել.— ոճ Վերջին տեղը բռնել.

### ԺԹ. Տալ գկայսերն կայսեր

1. Ձի ոչ հայիս յերեսս մարդկան = Որովհետեւ  
մարդու երես չես նայիր.— Հայիչ— ի նախդիւ տրա-  
կան (=անորոշ հայցական) կ'առնու: Նոյնպէս, Նայիւն,  
Գրան, Հաւասար — վերջահոլով տրական ալ՝ կ'առնու  
(Հաւատա՛ դու ինձ), Խնայել, Յուսամ. Գարծիւն եւն.:  
Երբ որոշ կէտի մը նայինք՝ ի-ով, իսկ երբ անորոշ տեղ՝  
ընդ-ով. Հայեցաւ Յիսուս յնրկինս, գլխուն վրայ որոշ  
տեղ մը, ընդ երկինս= գէպի երկինքը:

2. Մարդիկ= Իկ, ան, անի, անն, անր, կան, նեար,  
որայ, ջի, ոքի = Բ. եզաձայն մասնիկներ են, ձեւով  
եզակիր պատրանքը կուտան, բայց իմաստով և ծագմամբ  
յոգնակի են:

Ան-ով — Խուժ, խուժան, խուժանի, խուժանիւ.  
Գ. հոլովման տակ կ'երթան, Էչ, իշան. Ձի, ձիան, Գա-  
ռակ, Գառական. Թի, Թիան եւն.:

Անի-ով — Նամակ, նամականի, նամականուոյ, նա-  
մականուով կամ նամականեաւ. Աւագ, աւագանի. — Գ.

հոլովման պէս (ո) կը հոլովուին .— Աթոռ, աթոռանի . Ազատ, ազատանի . Կին, կանանի (=կանայք) . Հանդերձ, հանդերձանի . Երէց, երիցանի, (երիցունք) :

Եան-ով՝— Գիրք, գրեան, գրենոյ, գրենով . Դ . հոլովման պէս կը հոլովուին .— Բերդ, բերդեան . Թուղթ, թղթեան . Էշ, իշեան . Խոզ, խոզեան . Նախարար, նախարարեան . Ճանճ, ճանճեան . զօրագլուխ, զօրագլխեան :

Եար-ով՝— Վարժ, վարժեար, վարժերոյ, վարժերով . Դ . հոլովման պէս կը հոլովուին .— Էշ, իշեար . Վան, վանեար, Աշխարհարարի պէս եղած է եար=եր :

Իկ-ով՝— Մարդիկ, մարդկան, մարդկամբ . կարի հաղուագիւտ են օրինակները

Կան-ով՝— Զօրական, զօրականի, զօրականաւ . Բազմական, բազմականի, բազմականաւ :

Նեար-ով՝— Բարձիկ, բարձկնեար . Նաւիկ, նաւկնեար :

Որայ-ով՝— Արտ, արտորայ . Դաշտ, դաշտորայ . Դաշտեր . Կալ, կալորայ . Վանք, վանորայ :

Տի-ով՝— Մանուկ, մանկտի, մանկտոյ . Մեռեալ, մեռելտի . Ծակ, ծակտի :

ՈՏի-ով՝— Ոսկր, ոսկրտի . Փոր, փորտի :

Այս յոգնակերտ մասնիկներն իրեւ պարզ եղակի նկատուելով, յոգնականացուցիչ ֆ-ով գործածուած են . այսպէս, Ձի, ձիան, ձիանք . Աւագ, աւագանի, աւագանիք, Գիրք, գրեան, գրեանք, գրեանց, զգրեանս . Որեար, որեարք . Մարդ, մարդիկ, մարդիկք, մարդկանց : Արտ, արտորայ, արտորայք, Մանուկ, մանկտի, մանկտիք, մանկտոց, մանկաւովք և ըն . :

Իրեւ յոգնականացուցիչ ձև կը գործածուին ուրիշ-ով բառերը . Օր .— Գերութիւն=գերիք : Մարդկութիւն=մարդիկ : Ընտանութիւն=ընտանիք : Յանցաւորութիւն=յանցաւորք : Նոյնպէս յոգնակիի իմաստ կուտան կրկնակ գոյականներ ու գոյականաբար աւանուած

ածականներ . Անդ ելին ազգ ազգ Տեառն=Ա.զգ.ք. Ժողո-  
վեցին զբարի զբարին յամանս=զբարիսն :

Զյոռի յոռին ընկեցին արտաքս= Զյոռիս . Եկեսցէ  
ընտիր ընտիր ընչից= ընտիրք ընչից :

Ընտիր ընտիր զարդուց= ընտիրս զարդուց . =ընտիր  
զարդեր :

Յ. Տս'ւք զԿայսերն Կայսեր' եւ զԱսուծոյն' Ասու-  
ծոյ .— Արդ տ'ւր զնորացն նորս (==նմա) . Ոսկ .— Ինչ  
որ Կայսեր կը վերաբերի Կայսեր տուէք, և ինչ որ Աս-  
տուծոյ' Աստուծոյ : Շատ անգամ յատկացեալը զեղչուե-  
լով միայն յատկացուցիչը կը դբուի իր յատկացեալին  
խնդիրով և ն' դիմորոշ յօդով : Եթէ ուզենք ամբողջա-  
ցնել կ'աւելցնենք սլատչած յատկացեալ մը . Տուք զնարկն  
Կայսեր' կայսեր, իսկ զԱրքայութիւն Աստուծոյ' Աստուծոյ :

## Բ Ա Ռ Ք

Կայսր .— Կայսեր, կայսերք, կայսերաց, =of. գյ. ինք-  
նակալ, մեծ թագաւոր :

Հերովդիսնոս .— սց, Հեթանոսական և մովսիսա-  
կան կրօններու բարոյականներուն ի մի ձուլումէն առաջ  
բերուած ազանդ մըն է, որուն Հերովդէս ձեռնարկեց և  
այդ իսկ է սլատչանը այդ ազանդաւորաց հերովդիսնոսի  
կոչուելուն : Հերովդէսի հարկահաններն էին հերովդիանոսք :

Բան .— ի, իւ, գյ. Խօսք

Նեկգութիւն .— եան, գյ. Չարամտութիւն

Փոյր .— փոքոյ, գյ. Հոգ

Ոք .— ուրոք, ունեք, յունեք, ար. Մէկը

Ո . ոյր, Տր. ուն, Գործ . Որով :



### Ա Ն Կ Ա Ն Ո Ն Բ Ա Յ Ե Ր

1. Հայերէն լեզուի մէջ քանի մը բայեր ալ երկրորդ արմատը կազմած ատեն կը շեղին ընդհանուր կանոններէն և նոյն իսկ արմատէն կազմուած ձևերուն մէջ սովորական եղանակներէն տարբերութիւններ ունին. այս տեսակ բայերն ալ զարտուղի կը կոչուին. հետեւեալներէն են, Լսեմ, արմ. շու. Ճանաչ-եմ, արմ. ծանն. Յառնեմ, արմ. յ-ար-ն-եմ = յառնեմ. Բ. արմատ Յ-արի: Առնեմ (ընել) = ար-ն-եմ Բ. արմ. արար: Լի-ն-իմ արմ. յի: Տան-իմ արմ. տար: Երթ-ամ, արմ. երթ: Ուտել — լրացնողն — արմ. կերայ = կեր Մէկ բաղաձայնով կազմուած արմատներն ունին, Գալ՝ արմ. կ. ե-կ-ի: Տալ, արմ. տ: Դնել, արմատ. դ: Ասոնց ամբողջական խոնարհումներն են հետեւեալ Ա. լծորդութեան անկանոն բայերը.

### Ա. Լ Ծ Ո Ր Դ Ո Ւ Թ Ե Ա Ն Ա Ն Կ Ա Ն Ո Ն Բ Ա Յ Ե Ր

Ներգործակերպ	Համայնակաճ եղանակ
Սահմանակաճ եղանակ ներկայ	Արա՛, արասցիբ
Առնեմ, -ես, -է = Կ՛րնեմ	Մի՛ առնեբ
Անց. Անկասար	Արաբէ՛, մի՛ առնէբ
Առնէի, -էիր, -էր եւլն.:	Ասորդասակաճ եղանակ
Անց. Կասարեալ	Առնիցեմ, -ցես, -ցէ
Արարի, արարեբ, արար	Առնիցեմք, -ցէք, -ցեն
Արարաբ, արարէք, արարին	Անորիբ դերբայ. Առնել
Ապառնի	Անց. Դերբայ. Արարեալ
Արարից, -ասցես, -ասցէ	Ապառնի Դերբայ. Առնելոց
Արասցուք, արասցիք, -ցեն	Գրաւորակերպ
	Սահմ. եղանակ ներկայ
	Առնիմ, առնիս, առնիք(*)

(\*) ԵԱՆՕԹ. — Առնեմ-ին կրաւորականը Մեսրոպեան ընտիր լեզուի մէջ եղանիմ-ի տեղ կը զործածուի ստէպ, ըլլուի, ըլլալ նշանակութեամբ, մանաւանդ ներկան և ստորագասականը. Օր. Առնիմք իմաստուն, Առնիցի կգոր, Առնիմք մեծատուն և ըն.:

Անց. Անկասար  
Անէի, -էիր -էր

Անց. Կասարեալ  
Արարայ, արարար, արարաւ  
Արարաք, -այք, -ան

Ապառնի  
Արարայց, -ասցիս, -ասցի  
Արասցուք, ջիք, -ցին

*Ներգործակերպ*

Սահմ. Եղանակ Ներկայ  
Դնեմ, -ես, -է

Անց. Անկասար  
Դնէի, -էիր, -էր

Անց Կասարեալ  
Սղի, -իր, ել  
Սղաք, -էք, -ին

Ապառնի  
Սղից, դիցես, դիցէ  
Դիցուք, -ջիք, -ցեն

Հրամայական  
Դի'ր, Դիջիր, Մի' դներ  
Դիք, դիջիք, Մի' դնէք

Ստորադասական  
Դնիցեմ, -ցես, -ցէ  
Դնիցեմք, -էք, -են

Անորիւ Դերբայ  
Դնել

Անց. Դերբայ  
Տղեալ

Ապառնի Դերբայ  
Դնելոց

Հրամայական Եղանակ  
Անիջիր, Մի' առնիր  
Անիջիք, Մի' առնիք

Ստորադասական Եղանակ  
Անիցիմ, զիս, -ցի  
Անիցիմք, իք, -ին

Անորիւ Դերբայ Առնիլ  
Անց. Ընդ. Արարեալ  
Ապառնի Ընդ. Առնելի

*Կրաւորակերպ*

Սահմ. Եղանակ Ներկայ  
Դնիմ, իս, ի

Անց. Անկասար  
Դնէի, -էիր, -էր

Անց. Կասարեալ  
Սղայ, -ար, -աւ  
Սղաք, -այք, -ան

Ապառնի  
Սղայց, դիցիս, դիցի  
Դիցուք, -ջիք, -ցին

Հրամայական  
Դիջիր (դրուէ) ԿՄ. դնիջիր  
Սղարուք (=եղայք)

Ստորադասական  
Դնիցիմ, -ցիս, -ցի  
Դնիցիմք, -ցիք, -ցին

Անորիւ Դերբայ  
Դնիլ

Անց. Դերբայ  
Սղեալ

Ապառնի Դերբայ  
Դնելի

*Հսեմ* բայը կը խոնարհուի այսպէս . արմատն է չ

Սահմ. Եղանակ Ներկայ

Հսեմ, լսես, լսէ,

Անց. Անկատար

Հսէի, -էիր, -էր

Անց. Կատարեալ

Հուայ, -ար, -աւ

Հուաք, -այք, աք

Ապառնի

Հուայց, Հուիցես, -ցէ

Հուիցուք, -ջիք, -ցեն

*Ներգործակերպ*

Սահմ. Եղանակ Ներկայ

Ուսեմ, ուսես, ուսէ

Անց. Անկատար

Ուսէի, -էիր, -էր

Անց. Կատարեալ

Կերայ, Կերար, Կերաւ

Կերաք, -այք, -աք

Ապառնի

Կերայց, Կերիցես, -ցէ

Կերիցուք, -ջիք, -ցեն

Հրամայական

Կե՛ր, Մի՛ ուսեր

Կերե՛ք *կամ* Կերայք Մի՛ ուսե՛ք

Ստորադասական

Ուսիցեմ, -ցես, -ցէ

Անորիւ Դերբայ

Ուսել

Անց. Դերբայ Կերեալ

Ապառնի Ընդ. Ուսելոց

Հրամայական

Լս՛ւր, Մի՛ լսեր

Լուարուք==Լսեցէք. Մի՛ լս

Ստորադասական

Լսիցեմ, լսիցես, լսիցէ

Լսիցեմք, -էք, -են

Անորիւ Դերբայ. Լսել

Անցեալ Դերբայ. Լուեսա

Ապառնի Ընդ. Լսելոց

*Կրատարականն է* Լսելի==Լսո

*Կրաւորակերպ*

Սահմ. Եղանակ Ներկայ

Ուսիմ, -իս, -ի

Ուսիմք, -իք, ին

Անց. Անկատար

Ուսէի, -էիր, -էր

Անց. Կատարեալ

Կերայ (*նո՛յն է*)

Ապառնի

Կերայց, Կերիցիս, Կերիցի

Կերիցուք, -ջիք, -ցին

Հրամայական

Կերիցի՛ր, Մի՛ ուսիր

Կերիցիք, Մի՛ ուսիք

Ստորադասական

Ուսիցիմ, -ցիս, -ցի

Ուսիցիմք, -ցիք, -ցին

Անորիւ Դերբայ. Ուսիլ

Անց. Ընդ. Կերեալ

Ապառնի Ընդ. Ուսելի

**Ներգործիերայ**

Սահմ. Եղանակ Ներկայ  
Ընկեմ, ըմպես, ըմպէ Հշ.  
Անց. Անկասար  
Ընկէի, ըմպէիր, ըմպէր Հշ.  
Անց. Կասարեալ  
